

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն						
NN	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	5	6	7
1	Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող պետական քաղաքականության հիմնական առաջնահերթություններ ի/ գերակայությունների սահմանում, ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացում	1.1 «Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի 2022-2026 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Հաստատված ռազմավարության առկայություն, որտեղ կամրագրվեն առաջիկա 5 տարիների սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման հիմնական գերակայությունները/ առաջնահերթությունները, նպատակները, դրանց հասնելու համար անհրաժեշտ առանցքային բարեփոխումներն ու քաղաքականության գործիքները, ինչպես նաև զարգացման խոչընդոտները և հիմնական ռիսկերը:		2022 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

2	<p>Աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների պարզեցում և բարելավում՝ համապատասխանեցնելով նաև ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների պահանջներին, աշխատանքային վեճերի լուծման ճկուն մեխանիզմների ներդրում, ինչպես նաև աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողության գործիքակազմի ընդլայնում և բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության զարգացում և խորացում</p>	<p>2.1 «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>1. Վերանայված են աշխատանքային օրենսդրության, մասնավորապես.</p> <p>1) սոցիալական գործընկերությանը և կոլեկտիվ պայմանագրերին (կոլեկտիվ բանակցությունների վարման ընթացակարգերի հստակեցում, սոցիալական գործընկերության ինստիտուտի դերի կարևորում)</p> <p>2) արհմիությունների դերին (արհմիությունների դերի բարձրացման նպատակով արհմիությունների լիազորությունների վերանայում, աշխատողների ներկայացուցչական մարմիններում ընտրված աշխատողների պաշտպանվածությանը վերաբերող կարգավորումների նախատեսում)</p> <p>3) գործադուլին (գործադուլ կազմակերպելու և գործադուլ հայտարարելու մասին որոշման ընդունմանը վերաբերող կարգավորումների վերանայում, գործադուլի իրավունքը միայն կոլեկտիվ աշխատանքային վեճի առկայությամբ չպայմանավորելու կարգավորումների նախատեսում)</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2022 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
---	--	--	--	-----------------------------------	--	------------------------------------

			<p>4)ամենամյա արձակուրդներին (ամենամյա արձակուրդի իրավունքի իրացման համար գործուն մեխանիզմների ամրագրում)</p> <p>5)աշխատանքային պայմանագրի կնքմանը (կնքման այլընտրանքային եղանակների նախատեսում) և բովանդակությանը (բովանդակության մեջ ներառվող պարտադիր պայմանների շրջանակի վերանայում)</p> <p>6)երեխաների աշխատանքին վերաբերող (մասնավորապես՝ աշխատանքային ժամերի տևողության վերանայում), ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների մի շարք այլ կարգավորումները:</p> <p>2. Կարգավորված են իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրները, այդ թվում՝ սահմանված է որոշակի խմբերի (հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացողի կամ զոհված</p>			
--	--	--	---	--	--	--

			<p>(մահացած) զինճառայողի ընտանիքի անդամ (ամուսին, երեխա, հայր, մայր, հարազատ քույր, հարազատ եղբայր, տատ, պապ) համար աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում աշխատանքում մնալու նախապատվության իրավունքը, ընդլայնված են երեխա ունեցող աշխատողների իրավունքները (ավելի կարճ ժամերով աշխատելու հնարավորության նախատեսում, իրենց կարգավիճակով պայմանավորված տրամադրվող ընդմիջումների օգտագործման ճկուն մեխանիզմների սահմանում), նախատեսված են աշխատողների մասնագիտական հմտությունների զարգացմանը և արտադրողականության խթանմանն ուղղված կարգավորումներ (աշխատողների մասնագիտական ուսուցման կազմակերպման համապարփակ կարգավորումների նախատեսում):</p> <p>3. Բարելավվել են աշխատող-գործատու հարաբերությունները՝ աշխատանքային</p>			
--	--	--	---	--	--	--

			հարաբերությունների կարգավորումների պարզեցման արդյունքում:			
		2.2 Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» շրջանակներում՝ ԵՄ հրահանգների պահանջներին ՀՀ աշխատանքային օրենսդրության համապատասխանեցման նպատակով համապատասխան իրավական ակտերն ընդունված են	ՀՀ աշխատանքային օրենսդրության կարգավորումները համապատասխանեցված են ԵՄ այն հրահանգների պահանջներին, որոնց մասով համապատասխանեցումները պետք է իրականացվեն 2025 թվականին:		2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		2.3 Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման մոդելի և ֆինանսական գնահատականի վերաբերյալ վերլուծության ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման համար նախընտրելի մոդելի վերաբերյալ առաջարկությունը և մոդելի ներդրման համար պահանջվող ֆինանսական միջոցների գնահատականը առկա են:	Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	2022 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսական դոնոր կազմակերպություններ
		2.4 Աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման մոդելի և ֆինանսական	Հնարավոր է դարձել աշխատանքային իրավունքների պաշտպանությունն առանց դատական գործընթացների՝	Արդարադատության նախարարություն	2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		<p>գնահատականի վերլուծության արդյունքները հաշվի առնելով՝ աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման համար 2024-2026 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով կամ ծրագրի ընդունումից հետո շահագրգիռ քննարկումների արդյունքներով պետական բյուջեից համապատասխան միջոցների տրամադրման հնարավորության պարագայում՝ աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրմանն ուղղված իրավական ակտերն ընդունված են</p>	<p>հնարավորինս կարճ ժամկետներում և առանց հավելյալ ծախսերի:</p>	<p>Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ</p> <p>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p>		
		<p>2.5 «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>1. Սահմանված են կարգավորումներ՝ ուղղված գործուն արհեստակցական միությունների ձևավորմանը, որոնք արդյունավետորեն կհամագործակցեն նաև գործատուների հետ՝ կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների շրջանակներում:</p> <p>2. Արհեստակցական միությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը համապատասխանեցված է ՀՀ ստանձնած միջազգային</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ</p>	<p>2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

			<p>պարտավորությունների (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) պահանջներին: Մասնավորապես, նախատեսված են կարգավորումներ, որոնք հնարավորություն կստեղծեն ճյուղային, տարածքային և հանրապետական մակարդակներում մեկից ավելի միությունների ներկայացվածության համար, ինչը բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության զարգացման և խորացման համար համապատասխան հիմքեր կապահովի:</p>			
		<p>2.6 «Գործատուների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>1. Սահմանված են կարգավորումներ՝ ուղղված գործատուների գործուն միությունների ձևավորմանը, որոնք արդյունավետորեն կհամագործակցեն նաև արհմիությունների հետ՝ կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների շրջանակներում: 2. Գործատուների միությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը համապատասխանեցված է ՀՀ</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն  Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ</p>	<p>2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

			<p>ստանձնած միջազգային պարտավորությունների (Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա) պահանջներին: Մասնավորապես, նախատեսված են կարգավորումներ, որոնք հնարավորություն կստեղծեն ճյուղային, տարածքային և հանրապետական մակարդակներում մեկից ավելի միությունների ներկայացվածության համար, ինչը բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության զարգացման և խորացման համար համապատասխան հիմքեր կապահովի:</p>			
3	Պետական հատվածի աշխատողների սոցիալական երաշխիքների ընդլայնում	3.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	<p>1.Սոցիալական փաթեթի շահառուների շրջանակի ընդլայնում, որի արդյունքում՝ սոցփաթեթի իրավունք կունենան նաև՝ 1)սոցփաթեթի շահառու կազմակերպությունների կազմակերպատիրավական ձևի (պետական ոչ առևտրային կազմակերպությունից հիմնադրամի վերակազմակերպված) փոփոխությամբ պայմանավորված սոցփաթեթի</p>		2025 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ	2024-2026 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով համապատասխան և հնարավորության առկայության դեպքում՝ ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ կպահանջվի 537,552.0 հազ



			<p>իրավունքից զրկված շուրջ 299 անձինք,  2)միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների,  մարզաքոլեջի,  մանկապատանեկան մարզադպրոցի և կրթության, սպորտի ոլորտի այլ հաստիքային աշխատողներ (ընդհանուր՝ շուրջ 6507 շահառու),  3)համալսարանների կազմում ներառված ավագ դպրոցների շուրջ 245 հաստիքային աշխատողները,  «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով՝ պետական քաղաքական, պետական վարչական և այլ պաշտոնատար (ընդհանուր շուրջ 415) անձինք:</p>			դրամ (7466 շահառուի համար)
4	Կամավորության մշակույթի տարածման և խրախուսման նպատակով՝ կամավորական գործունեությունը և կամավոր աշխատանքը կարգավորող միասնական իրավական	4.1 «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրանից բխող ՀՀ մի շարք օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Ամրագրված են կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի ամբողջական և միասնական, կամավորի ինստիտուտի կայացման և կամավորության մշակույթի զարգացման և տարածման համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումներ:		2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

	մեխանիզմների ամրագրում	4.2 Կամավորական դաշտը կարգավորող տեղեկատվական հարթակի (կայքի) շահագործում՝ 2024-2026թթ. միջնաժամկետ ժամանակահատվածի ծախսային ծրագրով համապատասխան հնարավորության առկայության պարագայում	Ինչպես քաղաքացիները, այնպես էլ՝ կամավորական գործունեություն իրականացնող և կամավոր աշխատանք կատարող անձինք պարբերաբար հնարավորություն կունենան պաշտոնական աղբյուրից տեղեկացված լինելու առկա օրենսդրական կարգավորումների վերաբերյալ, ինչպես նաև կձևավորվի ճկուն հարթակ, որտեղ կապահովվի կապ՝ կամավորների և կամավորներ ներգրավելու կարիք ունեցող մարմինների կամ կազմակերպությունների միջև:		«Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում	Քննարկել յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի միջոցների շրջանակում համապատասխան գումար նախատեսելու հնարավորության հարցը (կայքի ամբողջական մշակման, բովանդակության տեղադրման, տեխնիկական շահագործման աջկման, անվտանգային սերտիֆիկատի ապահովման, դոմեյնի գնման և տեխնիկական աջակցման համար անհրաժեշտ կլինի 1,5-3 մլն դրամ)
5	Նվազագույն ամսական աշխատավարձի շարունակական բարձրացում՝ հաշվի առնելով երկրի	5.1 2025-2027 պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի քննարկման արդյունքներով նվազագույն աշխատավարձի բարձրացման	1. Կբարձրանա նվազագույն ամսական աշխատավարձի չափը, որը կնպաստի՝ 1)աղքատության կրճատմանը,		2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Քննարկել յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի

	մակրոտնտեսական ցուցանիշները	համապատասխան հնարավորության առկայության պարագայում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	2)նվազագույն և միջին աշխատավարձերի միջև հարաբերակցության նվազմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: 2. Մինչև 2026 թվականը նվազագույն ամսական աշխատավարձի չափը սահմանված է 85 000 դրամ:			միջոցների շրջանակում համապատասխան գումար նախատեսելու հնարավորության հարցը
6	Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության և արդյունավետության բարձրացում, ըստ անհրաժեշտության, նոր ծրագրերի ներդրում, երեխա ունեցող ծնողների համար աշխատանքը և երեխայի խնամքը համատեղելու համար առավել լայն հնարավորությունների ստեղծում, զբաղվածության ոլորտում մատուցվող ծառայությունների բարելավում և շրջանակի ընդլայնում	6.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Զբաղվածության պետական ծրագրերն իրականացվում են առավել հասցեական, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած խնդիրների կարգավորմամբ բարձրացել է ծրագրերի արդյունավետությունը, ըստ անհրաժեշտության, ներդրված են աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանն ուղղված, կրթություն-աշխատաշուկա» փոխառնչությունները խթանող նոր ծրագրեր:		2022 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		6.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 12-ի N	Ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող		2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե

		1326-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	անձ ճանաչված նախկին զինծառայողներին (նրանց հավասարեցված անձանց) աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին պետական աջակցության տրամադրման միջոցառման իրականացում նաև 2022 թվականին դիմում և թափուր աշխատատեղի հայտ ներկայացրած գործատուների հետ: 2022 թվականին շուրջ 200 նախկին զինծառայող ևս միջոցառման միջոցով աշխատանքի տեղավորման հնարավորություն կստանա:			Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեից նախատեսվող ֆինանսավորման չափերը կճշգրտվեն՝ ելնելով տվյալ տարվա պետական բյուջեով այդ նպատակների համար նախատեսված գումարներից
7	Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կողմնորոշման և աշխատուժի ձևավորման համընդհանուր համակարգի զարգացում	7.1 Հանրակրթական համակարգում մասնագիտական կողմնորոշման կարողությունների զարգացում և մեթոդական աջակցություն	Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների իրականացման նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված շուրջ 1500 մանկավարժները վերապատրաստված են արդի և ապագա աշխատաշուկայի պահանջարկին ներկայացվող տեխնոլոգիաներով և ստանում են շարունակական մեթոդական	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2026 թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե  Դոնոր կազմակերպություններ

			աջակցություն և խորհրդատվություն:			
		7.2 Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայությունների ներդրում	Միասնական սոցիալական ծառայությունների բոլոր 49 տարածքային կենտրոններում առկա են մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայություններ իրականացնող համապատասխան վերապատրաստում անցած մասնագետներ:		2022 թվականի մայիսի 3-րդ տասնօրյակ	
		7.3 Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում մասնագիտական կողմնորոշման ծառայությունների ներդրում	Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող բոլոր հաստատություններում ներդրված են մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ծառայություններ, առկա են համապատասխան վերապատրաստում անցած մասնագետներ:		2022թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ	
		7.4 Նախնական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՆՄԿՈՒ) հաստատություններում ներդրված մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների զարգացում	Ֆորմալ կրթության բոլոր մակարդակներում շարունակվելու են մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման համընդհանուր համակարգի ներդրման աշխատանքները՝ հիմնված արդի և ապագա աշխատաշուկայի պահանջների վրա: Մասնավորապես, հանրապետության բոլոր 96 ՆՄԿՈՒ հաստատություններում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2021-2022 թվականներ	ՀՀ պետական բյուջե

			նախապես մշակված և կիրառման մեջ փորձարկված մշտադիտարկման չափորոշիչներով գնահատված են մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնների արդյունավետությունը:			
8	Քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավում և մատուցվող սոցիալական ծառայությունների որակի բարձրացում	8.1 «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում Վարչապետի գրասենյակ	1.Սոցիալապես անապահով, աղքատ ընտանիքների սոցիալական կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների բազմազանության և դրանց տրամադրման համար անհրաժեշտ իրավական հենքը ձևավորված է. 2.սոցիալական աշխատանքի ստանդարտները հաստատված են. 3. առկա է սոցիալական պաշտպանության ոլորտի սոցիալական աշխատողների շարունակական վերապատրաստումների մեխանիզմ:		1.2022 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ  2.2024 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ  3.2024 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ	Օրենքով չարգելված աղբյուրներ
		8.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 10.05.2015 թ. N 1061-Ն և 30.01.2014 թ. N 145-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	Ընտանիքի սոցիալական (անապահովության) գնահատման նոր համակարգը գործարկված է, գնահատման բնութագրիչները վերանայված են, ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների նշանակման և վճարման ընթացակարգերը հստակեցված են, ներդրված են		2023 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	

		աղքատության փուլային հաղթահարման մոդելներ			
	8.3 «Կացարանի կարիք ունեցող ընտանիքների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը պետական աջակցություն տրամադրելու նպատակային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Մշակվել է սոցիալական հիփոթեքի համակարգը՝ յուրաքանչյուր տարի որոշակի սոցիալական խմբերին դասված ընտանիքների համար կեցության արժանապատիվ պայմաններ ստեղծելու համար		2022 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում
	8.4 «Բնակարանով ապահովելու միասնական սոցիալական ռազմավարությունը և հնգամյա գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	Առկա են ցածր եկամուտներ ունեցող, ինչպես նաև անապահով ընտանիքներին և խոցելի այլ խմբերին մշտական կամ ժամանակավոր կացարաններով ապահովման մեխանիզմներ և բնակարանով ապահովման միասնական սոցիալական քաղաքականություն	Քաղաքաշինության կոմիտե  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2024 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ	
	8.5 Սոցիալական պաշտպանության համակարգի՝ ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքման, դիմակայունության մեխանիզմների ներդրում	1. սոցիալական շտապ օգնության համակարգն ամբողջությամբ գործարկված է  2. սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգում ներառված է ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքման մեխանիզմների ծրագրային փաթեթը	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	1. 2024 թվականի փետրվարի 1-ին տասնօրյակ 2. 2024 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	

			3. ներդրվել է սննդային քարտերի համակարգ, որը գործում է հանրապետության ողջ տարածքում		3. 2025 թվականի փետրվարի 3-րդ տասնօրյակ	
	8.6 «Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխման ռազմավարությունը և միասնական սոցիալական ծառայության զարգացման հնգամյա գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	<p>1. սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգը գործարկված է, մշակված է ընտանիքի սոցիալական գնահատման ենթահամակարգի բովանդակային նկարագիրը</p> <p>2. միասնական սոցիալական ծառայության շենքային պայմանները բարելավված են, և տարածքային կենտրոնները տեխնիկապես վերազինված են</p> <p>3. միասնական սոցիալական ծառայության բոլոր սոցիալական աշխատողներն անցել են մասնագիտական վերապատրաստումներ</p> <p>4. առկա է միասնական տեղեկատվական համակարգ, ծառայությունների տրամադրման ընթացակարգերը պարզեցված և ավտոմատացված են</p>		<p>2024 թվականի հունվարի 2-րդ տասնօրյակ</p> <p>1. 2022 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>2. 2022 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>3. 2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p> <p>4. 2026 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀԲ</p> <p>աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության 2-րդ ծրագիր՝ 1,751,398,100 դրամ (որից՝ 1,424,709,100 դրամ վարկ, իսկ 326,689,000 դրամ՝ համաֆինանսավորում) և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>	



9	<p>Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավում և համայնքահեն ծառայությունների ներդրում, զարգացում և ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի կատարելագործում</p>	<p>9.1 Սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող և դրանցից դուրս գտնվող տարեցների սոցիալական կարիքների գնահատում</p>	<p>1. Գնահատված են 1000 տարեցի սոցիալական կարիքները</p> <p>2. Կազմված է տարեցներին մատուցվող ծառայությունների ցանկը</p> <p>3. Մինչև 2023 թ. ստեղծված են՝  1) ցերեկային կենտրոններ հանրապետության բոլոր մարզերում՝ յուրաքանչյուրն առնվազն 50 այցելուի հաշվարկով  2) ճգնաժամային 3 կենտրոն՝ յուրաքանչյուրն առնվազն 20 տարեցի հաշվարկով  3) ընդլայնել տնային խնամքի ծառայությունները՝ հանրապետության բոլոր մարզերում, ներդնելով նաև ամենօրյա խնամքի ծառայություններ՝ տնային պայմաններում</p>	<p>Առողջապահության նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>	<p>2022 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջում</p>
		<p>9.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և</p>	<p>1. Հստակեցված և տարանջատված են տարեց անձանց մատուցվող ծառայությունների ձևերն ու տեսակները՝ ըստ շահառուների խմբերի և կարգավիճակների, պարզեցված է խնամքի տրամադրման գործընթացը</p>		<p>2023 թվականի փետրվարի 2-րդ տասնօրյակ</p>	

		<p>«Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող խնամքի հիմնական սկզբունքները և ծառայությունների ու հաստիքային միավորների չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</p>	<p>2.Սահմանված են տարեցների և մատուցվող խնամքի և սոցիալական այլ ծառայությունների համար անհրաժեշտ չափորոշիչները և ծառայություններ մատուցող մասնագետների հաստիքային միավորների չափաքանակները</p>			
		<p>9.3 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</p>	<p>Տարանջատված և սահմանված են անօթևան մարդկանց կացարանով ապահովման երեք տիպի ծառայություն՝ ժամանակավոր օթևան (կացարան), մասնագիտացված կացարան (հիմնականում ունեն երկու ուղղվածության՝ տուբերկուլյոզ և (կամ) սեռավարակներ (այդ թվում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ) ունեցող և հոգեկան առողջության խնդիրներ (ծերունական թուլամտություն, դեմենցիա, փսիխոզ, հոգեկան առողջության և (կամ) մտավոր խնդիրներ) ունեցող անօթևան անձանց համար) և ընդունիչ-ախտորոշիչ կենտրոն, որը հանդիսանում է մյուս ծառայությունների միջև միջանկյալ օղակ և նախատեսված է անձի ինքնությունը չպարզված, ակնհայտ ոչ ադեկվատ վարքագիծ դրսևորող,</p>		<p>2023 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ</p>	

			կասկածելի հոգեկան առողջությամբ անօթևան անձանց հրատապ սոցիալական աջակցություն տրամադրելու համար:			
10	Հաշմանդամության հիմքով խտրականության դրսևորումների բացառում, հաշմանդամություն ունեցող անձանց համար անկախ կյանքի ապահովում	10.1 «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022-2027 թվականների համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակում, օրենքի կիրարկման ապահովում: Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների, սոցիալական ներառման և անկախ կյանքի ապահովում, համայնքահեն ծառայությունների ներդնում և ընդլայնում:		2022 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		10.2 «Իսելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովում, հաշմանդամության հիմքով խտրականության դրսևորումների բացառում:	Քաղաքաշինության կոմիտե	2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	
		10.3 «Պետական հավաստագրերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրելու մասին» ՀՀ	Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող սոցիալ-վերականգնողական ծառայությունների հզորացում, ծառայությունների մատուցման նոր մեխանիզմների ներդնում:		2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	

		կառավարության որոշումն ընդունված է				
11	Հաշմանդամության գնահատման նոր մոդելի կիրակման ապահովում	11.1 «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Անձի կարիքների բազմակողմանի գնահատման վրա հիմնված հաշմանդամության գնահատման նոր մոդելի առկայություն, գնահատման գործընթացի թվայնացում	Առողջապահության նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		11.2 «Անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչներն ու գործիքները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Անձի կարիքների բազմակողմանի գնահատման վրա հիմնված հաշմանդամության գնահատման նոր մոդելի առկայություն, գնահատման չափորոշիչների հաստատում		2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	
		11.3 «Ծառայությունների անհատական ծրագիրը կազմելու և իրականացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1535-Ն որոշումն ուժը կորցրած	Անձի կարիքների բազմակողմանի գնահատման հիման վրա ծառայությունների որոշարկման մեխանիզմների կատարելագործում:		2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	

		ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ				
12	Երեխաների իրավունքների լիարժեք իրացման համար՝ երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների հզորացում	12.1 «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	<p>2023 թ.` ապահովվել է նախագծի փաթեթի շուրջ առնվազն չորս քննարկում՝ երեխաներին խնամք տրամադրող կազմակերպությունների, շահագրգիռ մարմինների մասնակցությամբ, առնվազն մեկ անգամ քննարկվել է ՀՀ վարչապետի 2019 թվականի օգոստոսի 26-ի N 1197-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի նիստի շրջանակներում, առաջարկությունների արդյունքում լրամշակված նախագիծն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>2024 թ.` ՀՀ օրենքի փաթեթը ընդունված է, որով.</p> <p>1. Երեխաների այլընտրանքային խնամքի, մասնավորապես, խնամատարության և որդեգրման գործընթացները բարելավված են,</p> <p>2. Առկա են երեխայի կարծիքի հաշվի առնման հստակ մեխանիզմներ</p>	Արդարադատության նախարարություն	2022-2024 թվականներին	Ֆինանսավորում չի պահանջվում

		<p>12.2 «Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքների փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</p>	<p>2023թ.՝ ապահովվել է նախագծի փաթեթի շուրջ առնվազն չորս քննարկում՝ երեխաներին խնամք տրամադրող կազմակերպությունների, շահագրգիռ մարմինների մասնակցությամբ, առնվազն մեկ անգամ քննարկվել է երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի նիստի շրջանակներում, առաջարկությունների արդյունքում լրամշակված նախագիծն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>2024 թ.՝ «Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքների փաթեթն ընդունվել է, որոնք ամապատասխանեցված են Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին և ապահովված է երեխայի լավագույն շահի առաջնահերթությունը, և որով</p> <p>1.Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա է ոլորտային</p>			
--	--	--	---	--	--	--

			<p>պատասխանատուների դերերի հստակ բաշխվածություն</p> <p>2. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հայտնաբերման, ուղղորդման և ծառայությունների տրամադրման գործընթացները բարելավված են</p>		
		<p>12.3 «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</p>	<p>1.2023 թ.՝ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի փաթեթն ընդունվել է, որով՝</p> <p>1) ապահովված են առանց ծնողական խնամքի մնացած և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կրթական իրավունքի իրացման համար նպաստավոր պայմանները,</p> <p>2) բարելավվել են շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամք ստացող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և շուրջօրյա խնամքի հաստատությունների շրջանավարտ հանդիսացող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին</p>		

			պատկանող անձանց ինքնուրույն կյանքի անցմանն ուղղված պայմանները			
13	Շուրջօրյա և ցերեկային խնամք մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում	13.1 Շուրջօրյա խնամք մատուցող պետական ոչ առևտրային առնվազն 3 կազմակերպությունների շենքային պայմանների մոնիթորինգ և գնահատում	Շենքային պայմանները նախնական գնահատված են, վերանորոգման առաջնահերթությունները որոշված են	Քաղաքաշինության կոմիտե	2022 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		13.2 Համապատասխան մասնագետների կողմից շուրջօրյա և ցերեկային խնամք մատուցող պետական ոչ առևտրային առնվազն 3 կազմակերպությունների շենքային պայմանների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում՝ մրցույթով ընտրված կազմակերպության միջոցով	Նախագծանախահաշվային աշխատանքների արդյունքում հստակեցվել է անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը		2023 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Պահանջվում է ֆինանսավորում արվելիք շինարարական աշխատանքների 5%-ի չափով:
		13.3 Շուրջօրյա և ցերեկային խնամք մատուցող պետական ոչ առևտրային առնվազն 3 կազմակերպությունների շենքային պայմանների բարելավման գործընթացի կազմակերպում	Մրցույթով հաղթած կազմակերպությունների կողմից իրականացված են բարեկարգման աշխատանքներ		2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Պետական բյուջե և Միջազգային կազմակերպություններ



14	<p>Հանրային կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման համար նպաստավոր պայմանների ապահովում</p>	<p>14.1 «Գենդերային քաղաքականության իրականացման 2024-2026 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է</p>	<p>Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ կառավարման և որոշումների կայացման ոլորտում կանանց հավասար մասնակցության առկայություն, տնտեսության ոլորտում կանանց ձեռներեցությունը խթանող ծրագրերի առկայություն, կրթական և առողջապահական ոլորտներում հավասար մատչելիությունն ապահովող ծրագրերի առկայություն, կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի ամրամնդմանն ուղղված միջոցառումների առկայություն:</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Արդարադատության նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Արտաքին գործերի նախարարության</p> <p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Առողջապահության նախարարություն</p> <p>Ոստիկանություն</p> <p>Պաշտպանության նախարարություն</p> <p>Վիճակագրական կոմիտե</p> <p>Երևանի քաղաքապետարան Մարդու իրավունքների պաշտպան</p>	<p>2024 թվականի մարտի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
----	---	--	---	--	--	------------------------------------

				<p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p> <p>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>		
		<p>14.2 Կանանց ռեսուրս կենտրոնների համագործակցային ցանցի հիմնում Հայաստանի Հանրապետության 8 մարզերում:</p>	<p>Հայաստանի Հանրապետության 8 մարզերում Կանանց ռեսուրս կենտրոնների համագործակցային ցանցի առկայություն, որի հիմքում ընկած կլինի կանանց անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված՝ ուսուցման և այլ օժանդակող ծրագրերի իրականացումը:</p>	<p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p> <p>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>	<p>2022-2026 թվականներին</p>	<p>Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
			<p>2023թ.՝ Հայաստանի Հանրապետության 2 մարզերում Կանանց ռեսուրս կենտրոնների համագործակցային ցանցի առկայություն, որի հիմքում ընկած կլինի կանանց անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված՝ ուսուցման և այլ օժանդակող ծրագրերի իրականացումը:</p>			

			<p>2024 թ.՝ Հայաստանի Հանրապետության 4 մարզերում Կանանց ռեսուրս կենտրոնների համագործակցային ցանցի առկայություն, որի հիմքում ընկած կլինի կանանց անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված՝ ուսուցման և այլ օժանդակող ծրագրերի իրականացումը:</p>			
			<p>2025 թ.՝ Հայաստանի Հանրապետության 6 մարզերում Կանանց ռեսուրս կենտրոնների համագործակցային ցանցի առկայություն, որի հիմքում ընկած կլինի կանանց անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված՝ ուսուցման և այլ օժանդակող ծրագրերի իրականացումը:</p>			
			<p>2026 թ.՝ Հայաստանի Հանրապետության 8 մարզերում Կանանց ռեսուրս կենտրոնների համագործակցային ցանցի առկայություն, որի հիմքում ընկած կլինի կանանց անհրաժեշտ հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված՝ ուսուցման և այլ օժանդակող ծրագրերի իրականացումը:</p>			

15	<p>Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում փոփոխվող իրավիճակին և ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ օրենսդրական փոփոխությունների իրականացում, պետության կողմից տրամադրվող թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների բարելավում, միջգերատեսչական, միաջազգային և հասարակական կառույցների հետ համագործակցության կայուն մեխանիզմների ներդրում:</p>	<p>15.1 «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի յոթերորդ՝ 2023-2026 թթ. Ազգային ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է:</p>	<p>Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում համապարփակ միջոցառումների իրականացման և երևույթի առավել արդյունավետ կանխարգելման առկայություն (բարելավված օրենսդրական դաշտի առկայություն, խնդրով զբաղվող միջգերատեսչական ակտիվ համագործակցության առկայություն, խնդրին առնչվող առաջնային օղակի որակավորված մասնագետների առկայություն, առավել շատ թվով բացահայտված դեպքերի առկայություն, աջակցության և պաշտպանության մեխանիզմների հստակեցում</p>	<p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Արտաքին գործերի նախարարություն</p> <p>Առողջապահության նախարարություն</p> <p>Արդարադատության նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայություն</p> <p>Ազգային անվտանգության ծառայություն</p> <p>Ոստիկանություն</p> <p>Քննչական կոմիտե (համաձայնությամբ)</p> <p>Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)</p>	<p>2023 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
----	--	--	--	--	--	------------------------------------

				<p>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p> <p>Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ (համաձայնությամբ)</p> <p>Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ</p> <p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p> <p>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>		
	15.2 Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունների ընդլայնում	1.Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունների գնահատում	Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2023 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ	
		2.Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունների համատեքստում Միասնական	Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	2024 թվականի նոյեմբերի 2-րդ տասնօրյակ		

			<p>սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ համագործակցային հարաբերությունների ստեղծում</p> <p>3.Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց սոցիալական վերաինտեգրմանն ուղղված մեխանիզմների առկայություն</p> <p>4.Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունների արդյունքների գնահատում</p>		<p>2025 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>2026 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ</p>	
16	<p>Ընտանիքում բռնության երևույթի կանխարգելմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում</p>	<p>16.1 Բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործող՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների կողմից տրամադրվող աջակցության տեսակների և մատուցվող ծառայությունների ընդլայնում, մասնավորապես, կանանց տնտեսական զարգացմանն ու հզորացմանն ուղղված աջակցության նոր տեսակների ավելացմամբ</p>	<p>1.Սոցիալական վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրման վրա՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագիտացված կազմակերպությունների կողմից անհատական կարիքի գնահատման վրա հիմնված մատուցվող ծառայությունների ընդլայնված համակարգի առկայություն թվով 3 մարզերում:</p> <p>2.Սոցիալական վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված</p>	<p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p> <p>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>	<p>2023 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>2024 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ</p>	<p>Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

			<p>մեխանիզմների ներդրման վրա՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագիտացված կազմակերպությունների կողմից անհատական կարիքի գնահատման վրա հիմնված մատուցվող ծառայությունների ընդլայնված համակարգի առկայություն թվով 6 մարզերում:</p>			
			<p>3.Սոցիալական վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրման վրա՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագիտացված կազմակերպությունների կողմից անհատական կարիքի գնահատման վրա հիմնված մատուցվող ծառայությունների ընդլայնված համակարգի առկայություն թվով 9 մարզերում:</p>		<p>2025 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ</p>	
			<p>4.Սոցիալական վերաինտեգրմանը և սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրման վրա՝ ընտանիքում բռնության</p>		<p>2026 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ</p>	

		<p>ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագիտացված կազմակերպությունների կողմից անհատական կարիքի գնահատման վրա հիմնված մատուցվող ծառայությունների ընդլայնված համակարգի առկայություն &lt;&lt; բոլոր մարզերում և Երևան քաղաքում:</p>			
	<p>16.2 Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայությունների ընդլայնում</p>	<p>1.Ընտանիքում բռնության ենթարկված անձանց թվով 1 ապաստարանի ավելացում՝ սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրմամբ:</p>	<p>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)</p> <p>Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)</p>	<p>2024 թվականի մարտի 1-ին տասնօրյակ.</p>	<p>Պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
<p>2.Ընտանիքում բռնության ենթարկված անձանց թվով ևս 1 ապաստարանի ավելացում՝ սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրմամբ:</p>		<p>2025 թվականի մարտի 1-ին տասնօրյակ</p>			
<p>3.Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանների քանակի ավելացման և սոցիալական վերաինտեգրմանն ու սեփական կյանքի ինքնուրույն կազմակերպմանն ուղղված մեխանիզմների ներդրման հիման վրա մատուցվող ծառայությունների ընդլայնված համակարգի որակի և</p>		<p>2026 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ</p>			



			արդյունավետության գնահատում:			
17	Առաջիկա տարիներին ծնելիության կայուն աճ ապահովելու, իսկ երկարաժամկետ հեռանկարում՝ հանրապետության բնակչության թվի էական աճ գրանցելու նախադրյալների ստեղծում	17.1. ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման նոր ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Հաստատված՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի առկայություն, որտեղ կամրագրվեն ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված՝ առաջիկա 5 տարիներին ձեռնարկվելիք քայլերը		2022 թվականի ապրիլի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		17.2. «Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	2023 թ. հունվարի 1-ից մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակվում է բոլոր մայրերին՝ անկախ նրանց հաշվառման (բնակության) վայրի: Արդյունքում շահառուների թիվը կավելանա ի հաշիվ շուրջ 10000 չաշխատող, քաղաքաբնակ մայրերի՝ 2023թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված երեխաների խնամքի կապակցությամբ		2022 թվականի հունիսի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, ծախսերը 2023 թ. կավելանան շուրջ 1.2 մլրդ դրամով (խնամքի նպաստի չափը՝ 30,700 դրամ)
		17.3. «Ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի ծննդյան կապակցությամբ դրամական աջակցություն նշանակելու և վճարելու մասին» ՀՀ կառավարության որոշման	Սահմանվել է դրամական աջակցության նոր տեսակ 2022 թ. հունվարի 1-ից հետո ծնված երեխաների հաշվառմամբ ընտանիքներին մինչև 6 տարեկան 3-րդ և հաջորդ երեխաների համար ամսական		2021 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակը	ՀՀ պետական բյուջե, ծախսերը 2023-2026թ. յուրաքանչյուր տարի նախորդ տարվա նկատմամբ

		նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	կտրամադրվի 50,000 դրամ ֆինանսական աջակցություն			կավելանան 5.4 մլրդ դրամով
		17.4. «Գյուղաբնակ Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքներին աջակցելու պետական աջակցության 2023-2026 թվականների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Սահմանված են պետական աջակցության 2023-2026 թվականների ծրագրեր, որոնք ուղղված են գյուղաբնակ Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքներին սոցիալ-տնտեսական աջակցություն տրամադրելուն	Էկոնոմիկայի նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Պետական եկամուտների կոմիտե	2022 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, ծախսերը կգնահատվեն հետագայում՝ ծրագրերից ելնելով
18	Կենսաթոշակատուներին և նպաստառուներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, ինչպես նաև կենսաթոշակների և նպաստների նշանակման, վճարման գործընթացների լավարկում, առցանց մատուցվող ծառայությունների սպեկտրի ընդլայնում	18.1 «ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Ապահովվել է առցանց դիմումի հիման վրա կենսաթոշակ նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում հաշվառելը և աշխատող կենսաթոշակատուի կենսաթոշակը վերահաշվարկելը		2021 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		18.2 «ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության	Ապահովվել է առցանց դիմումի հիման վրա աշխատող կենսաթոշակատուի (նպաստառուի) կենսաթոշակ (նպաստ) վճարելու եղանակը		2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ				
		18.3 ՀՀ պետական բյուջե վերականգնված՝ սխալմամբ (ՀՀ օրենսդրության խախտմամբ) ավելի վճարված կենսաթոշակների և նպաստների գումարների հաշվառման ենթահամակարգի գործարկում	Ավտոմատացվել է որոշումների կայացման գործընթացը:	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2025 թվականի հունվարի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
		18.4 «Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	Ապահովվել են էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալների հիման վրա Միասնական սոցիալական ծառայության կողմից մայրության նպաստի նշանակումը և վճարումը:	Առողջապահության նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  Պետական եկամուտների կոմիտե	2024 թվականի հունիսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե  Լրացուցիչ ծախսերի պահանջը հնարավոր կլինի գնահատել գործընթացի իրականացման փուլում
19	Պարբերաբար վերանայվելու (բարձրացվելու) պետական կենսաթոշակների և նպաստների չափերը	19.1 «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն, 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն և 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	1. Նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը 2026 թ. հավասարեցվել են, համապատասխանաբար, պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին, 2. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի, խնամքի նպաստի		2021-2026 թվականներին յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե  2023-2026թթ. պետական բյուջեով ծախսեր նախատեսված լինելու դեպքում

			<p>չափերը 2026 թ. հավասարեցվել են պարենային զամբյուղի արժեքին:</p>		
			<p>1. Նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը նախորդ տարվա նկատմամբ բարձրացվել են՝ 2026 թ., համապատասխանաբար, պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին հավասարեցվելն ապահվելու համար,</p> <p>2. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի, խնամքի նպաստի չափերը նախորդ տարվա նկատմամբ բարձրացվել են՝ 2026 թ., պարենային զամբյուղի արժեքին հավասարեցվելն ապահվելու համար</p>	<p>2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե՝ 2023թ. պետական բյուջեով ծախսեր նախատեսված լինելու դեպքում</p>
			<p>2. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի, խնամքի նպաստի չափերը նախորդ տարվա նկատմամբ բարձրացվել են՝ 2026 թ., պարենային զամբյուղի արժեքին հավասարեցվելն ապահվելու համար</p>	<p>2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե՝ 2024թ. պետական բյուջեով ծախսեր նախատեսված լինելու դեպքում</p>
			<p>1. Նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը հավասարեցվել են, համապատասխանաբար, պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին,</p> <p>2. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի, խնամքի նպաստի չափերը հավասարեցվել են պարենային զամբյուղի արժեքին</p>	<p>2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե՝ 2025 թ. պետական բյուջեով ծախսեր նախատեսված լինելու դեպքում</p>
			<p>1. Նվազագույն կենսաթոշակի և կենսաթոշակի միջին չափերը հավասարեցվել են, համապատասխանաբար, պարենային և սպառողական զամբյուղների արժեքներին,</p> <p>2. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի, խնամքի նպաստի չափերը հավասարեցվել են պարենային զամբյուղի արժեքին</p>	<p>2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե՝ 2026թ. պետական բյուջեով ծախսեր նախատեսված լինելու դեպքում</p>

20	<p>Զինճառայողների և նրանց ընտանիքների անդամների, զինճառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության (կենսաթոշակային ապահովության) բարձրացում, զինճառայողների սոցիալական ապահովման երաշխիքների մեծացում</p>	<p>20.1 «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>«Զինվորական ծառայության և զինճառայողի կարգավիճակի մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքներով զինճառայողների վարձատրության համակարգում կատարված փոփոխություններին համապատասխան (նշված օրենքներում փոփոխություններ կատարված լինելու դեպքում) զինվորական կենսաթոշակի վերանայված հաշվարկման կարգ</p>	<p>Պաշտպանության նախարարություն  Ոստիկանություն  Ազգային անվտանգության ծառայություն  Արտակարգ իրավիճակների նախարարություն  Արդարադատության նախարարություն</p>	<p>2022 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե  Հաշվարկները կարող են ներկայացվել նշված օրենքներում փոփոխությունների ընդունումից հետո՝ պայմանավորված զինճառայողների վարձատրության համակարգի փոփոխությամբ</p>
21	<p>Նախկինում վերցված ու չմարված գյուղատնտեսական վարկերի պատճառով վատ վարկային պատմություն ունեցող անձանց վարկային պատմությունների բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրման ծրագիր</p>	<p>21.1 «Նախկինում վերցված ու չմարված գյուղատնտեսական վարկերի պատճառով վատ վարկային պատմություն ունեցող անձանց վարկային պատմությունների բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>«Նախկինում վերցված ու չմարված գյուղատնտեսական վարկերի պատճառով վատ վարկային պատմություն ունեցող անձանց վարկային պատմությունների բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացված է Վարչապետի աշխատակազմ</p>	<p>Կենտրոնական բանկ  Ֆինանսների նախարարություն  Էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>Կառավարության ծրագրից բխող հնգամյա միջոցառումների ծրագրի ընդունումից հետո՝ 3-ամսյա ժամկետում</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
22	<p>Սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության առաջնահերթություններ</p>	<p>22.1 Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների մշտադիտարկման և</p>	<p>1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համապատասխան հրամանով հաստատվել է</p>		<p>1.2022 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

<p>ը սահմանելու նպատակով առկա խնդիրների բացահայտումը, իրականացվող ծրագրերի արդյունավետության և հասցեականության բարձրացումը, շահառուների և այլ շահագրգիռ կողմերի ծրագրերից բավարարվածության աստիճանի գնահատումը, ՀՀ պետական բյուջեի միջոցների նպատակային օգտագործումը և կռուպցիոն ռիսկերի նվազեցումը</p>	<p>գնահատման (ՄԳ) համակարգի ներդրում</p>	<p>ծրագրերի ՄԳ-ի կարգը և մեթոդաբանությունը:</p> <p>2. ՀՀ պետական բյուջե ներառված մեկ ծրագրի մոնիթորինգ և գնահատում:</p> <p>3. ՀՀ պետական բյուջեում ներառված մինչև չորս ծրագրի մոնիթորինգ և գնահատում:</p> <p>4. ՀՀ պետական բյուջեում ներառված մինչև չորս ծրագրի մոնիթորինգ և գնահատում:</p> <p>5. ՀՀ պետական բյուջեում ներառված մինչև չորս ծրագրի մոնիթորինգ և գնահատում:</p> <p>6. ՀՀ պետական բյուջեում ներառված մինչև չորս ծրագրի մոնիթորինգ և գնահատում:</p>		<p>2.2022 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p> <p>3.2023 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p> <p>4. 2024 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ տասնօրյակ</p> <p>5.2025 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ տասնօրյակ</p> <p>6. 2026 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ տասնօրյակ</p>	
---	--	---	--	---	--

**Առողջապահության նախարարություն**

NN	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	5	6	7

			<p>առնվազն 1 մեծածախ շուկայի կամ լոգիստիկ կենտրոնի և առնվազն 2 հավաքական պահեստի ստեղծում</p> <p>Հումքի մթերման գործընթացին, կոնյակի ու կոնյակի սպիրտի արտահանմանն աջակցություն, ինչպես նաև գինեգործության ու կոնյակագործության արտադրության խթանման արդյունքում առաջիկա 5 տարիներին հումքի մթերման և թողարկվող արտադրանքի ծավալների ավելացում մինչև 50 %-ով կամ տարեկան շուրջ 10%-ով</p> <p>Գյուղատնտեսական հումք մշակող ընկերությունների արտադրական կարողությունների հզորացում և արդիականացում՝ տարեկան շուրջ 250 միավոր սարքավորումների ձեռքբերմանն աջակցություն</p> <p>Գինեգործական արտադրանքի ճանաչելիության բարձրացման միջոցառումների միջոցով 2 անգամ արտահանման ծավալների ավելացում կամ տարեկան 20%-ով աճ</p>	<p>Հայաստանի ազգային ագրարային համալսարան (համաձայնությամբ)</p> <p>Հավատարմագրման ազգային մարմին,</p> <p>Երևանի պետական համալսարան (համաձայնությամբ),</p> <p>Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (համաձայնությամբ),</p> <p>Պետական եկամուտների կոմիտե</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Արտաքին գործերի նախարարություն</p> <p>«Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների</p>		<p>կամ դրամաշնորհներ, դոնոր կազմակերպություններ</p>
--	--	--	--	--	--	---

			Աշխարհագրական նշումների մասին օրենքի բարելավման միջոցով ոլորտային ասոցիացիաների ստեղծման խթանում և տարեկան 2-3 անվանում հայկական նշումներով արտադրանքի արտադրություն և գրանցում	աշխատանքների համակարգման գրասենյակ,  Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	2023-2026թթ, ավարտը 2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
	9.5 Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի մշակում	1. Պարենային անվտանգության համակարգի հետագա զարգացման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի առկայություն, որով կնախանշվեն համակարգի հետագա կայուն և համաչափ զարգացումն ապահովող համապատասխան միջոցառումները, և կապահովվի պարենային անվտանգության մակարդակի հետագա բարձրացումը  2. Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում՝ տարեկան շուրջ 7000 վարկ՝ 20-30 մլրդ դրամ գումարով	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  Առողջապահության նախարարություն,  Արտակարգ իրավիճակների նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  «Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների	1. Ռազմավարության հաստատման ժամկետը 2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ  2. 2022թ.	Ֆինանսավորում չի պահանջվում	

				<p>աշխատանքների համակարգման գրասենյակ</p> <p>Մարզպետարաններ</p> <p>Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p> <p>Անվտանգության խորհրդի գրասենյակ</p>		
	<p>9.6 Սննդամթերքի անվտանգության ապահովում «Սննդամթերքի անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում</p>	<p>Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի անվտանգության ապահովում</p> <p>Սննդամթերքի անվտանգության ռազմավարության մշակում</p>	<p>Առողջապահության նախարարություն,</p> <p>ՀՀ Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ</p> <p>Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p>	<p>2022-2026թթ. Ռազմավարության ներկայացման ժամկետը՝ 2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>	
	<p>9.7 Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում</p>	<p>Վնասակար օրգանիզմների ներթափանցման և (կամ) տարածման կանխում, գյուղատնտեսական նշանակության հողերի բուսասանիտարական վիճակի բարելավում: 2023 թվականին</p>	<p>Մարզպետարաններ</p> <p>Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p>	<p>2022-2026թթ.</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>	

		<p>նախատեսվում է վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով իրականացնել 180 000 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի մշտադիտարկում, 32200 հատ լաբորատոր փորձաքննություն, թվով 85 ագրոքիմիական քարտեզի կազմում՝ համայնքներին տրամադրման համար, ինչպես նաև 30-40 հազ . հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում բույսերի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի աշխատանքների իրականացում:</p>				
	<p>9.8 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացում</p>	<p>Անասնահամաճարակային կայուն իրավիճակի ապահովում, կենդանական ծագման հումքի և մթերքի որակի բարելավում, արտադրության ծավալների ավելացում, 2023-2025թթ. շուրջ 14 մլն հատ պատվաստում, այդ թվում 2023թ.՝ 4 748 608 հատ</p>	<p>Մարզպետարաններ  Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p>	<p>2022-2026թթ.</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>	



		<p>9.9 Դաբաղ հիվանդության շճահետազոտության միջոցառումների իրականացում</p>	<p>Դաբաղ հիվանդության հնարավոր ներթափանցման ռիսկերի գնահատում, ինչպես նաև թիրախային համայնքներում դաբաղ հիվանդության վիրուսի շրջանառության հայտնաբերում կամ բացառում</p>	<p>Մարզպետարաններ  Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p>	<p>2022թ.</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>
		<p>9.10 Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների իրականացում</p>	<p>Կայուն անասնա-համաճարակային իրավիճակի ապահովում, կենդանական ծագում ունեցող սննդամթերքի անվտանգության ապահովման հիմնարար սկզբունքների կիրառում՝ 1) կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելում. 2) գյուղատնտեսական ոլորտում գործող արտադրող և վերամշակող կազմակերպություններին անասնաբուժական տեսակետից անվտանգ հումքի ապահովում. 3) բնակչության շրջանում կենդանիների և մարդկանց համար ընդհանուր հիվանդությունների հնարավոր բռնկման դեպքերի կանխում</p>	<p>Մարզպետարաններ  Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p>	<p>2022թ.</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>
		<p>9.11 Հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողական ու արդյունավետ օգտագործում</p>	<p>Գյուղատնտեսական նշանակության հողերը արդյունավետ օգտագործելու, չօգտագործվող հողերը</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p>	<p>2022-2026թթ Ավարտը 2026թ.</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից</p>

		<p>շրջանառության մեջ ներառելու, հողերի խոշորացման նպատակով միջոցառումների մշակում և իրականացում Ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաներով ոռոգելի հողատարածքների ավելացում՝ շուրջ 3000հա-ով, 2023թ-ին՝ շուրջ 1000 հա-ով</p> <p>Հողային բարեփոխումների իրականացման ճանապարհային քարտեզի ներկայացում</p>	<p>Կադաստրի կոմիտե</p> <p>Շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>Ջրային կոմիտե</p> <p>Ջրօգտագործողների ընկերություններ (համաձայնությամբ)</p>	<p>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>Հողային բարեփոխումների իրականացման ճանապարհային քարտեզի հաստատում՝ 2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>հաստատված ծրագրի կամ դրամաշնորհներ, դրնոր կազմակերպություններ</p>
	<p>9.12 Աջակցություն գիտակրթական համակարգերին, թվային գյուղատնտեսության զարգացմանը և շուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստմանը</p>	<p>1.Աջակցություն գիտակրթական համակարգերի բարելավմանը 2023թ.-ին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում և իր մասնաճյուղերում՝ 1 ջերմատուն, 1 ինտենսիվ այգի, եղանակային կայան, հողի անալիզի լաբորատորիա, 1 խելացի անասնաշենք, 3 սննդագիտության լաբորատորիա</p> <p>2.Թվայնացված տվյալների շտեմարանի առկայություն. 2023 թ-ին՝ թարմացում</p> <p>3.Խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցման արդյունավետ մեխանիզմների</p>	<p>Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Կադաստրի կոմիտե</p> <p>Հայաստանի ազգային ագրարային համալսարան (համաձայնությամբ)</p>	<p>2022-2026թթ. ավարտը 2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի կամ դրամաշնորհներ, դրնոր կազմակերպություններ</p>

			մշակում և ներդրում, գիտելիքահենք գյուղատնտեսության խթանում, 2023թ. կարճաժամկետ վերապատրաստումներ՝ շուրջ 500 գյուղատնտեսությունում տնտեսավարողների մասնակցությամբ			
10	Զբոսաշրջության զարգացում  Տարեկան 2.5 մլն զբոսաշրջիկի այցելություն, 20 զբոսաշրջային կլաստերների զարգացում, 50 պատմամշակութային օբյեկտների վերականգնում	10.1 «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի և օրենքի ընդունումից բխող մի շարք իրավական ակտերի նախագծի մշակում և իրականացում	Բարեփոխված իրավական համակարգի միջոցով ծառայությունների որակի բարելավում (զբոսավարների և ուղեկցորդների սերտիֆիկացում, ՀՏՕ-ների որակավորում, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների հաշվառում և այլն) սպառողի իրավունքների պաշտպանության ապահովում, զբոսաշրջության ոլորտի վարչական ռեգիստրի ներդրում		2021-2022թթ., ավարտը 2022 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ  2023-2024թթ., ավարտը 2024թ հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ  Իրավական կատերի հաստատումը «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի հաստատումից հետո 1 տարվա ընթացքում	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի
		10.2 «Հայաստանի զբոսա- շրջության 2022-2030 թթ. ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հաստատում և իրագործում	Հայաստանի զբոսաշրջության զարգացման ռազմավարական գործողությունների ծրագիր/ժամանակացույց  Նոր զբոսաշրջային բրենդի մշակում և նոր առաջարկների ծնավորում		2022 թ., դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի

		<p>10.3 Ջրոսաշրջային տվյալների հավաքագրում և թվայնացում</p> <p>Հայաստանի սահմանային անցման կետերում միջազգային այցելությունների վերաբերյալ ընտրանքային երրորդ հետազոտության իրականացման առաջարկի ներկայացում ՀՀ վիճակագրական կոմիտեին՝ 2023 թվականի վիճակագրական ծրագրում ներառելու նպատակով: Այդ հետազոտության ֆինանսավորման հարցում օժանդակության ցուցաբերում Սատելիտային հաշիվների համակարգի ներդրման մեկնարկ</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Միգրացիոն ծառայություն</p> <p>Վիճակագրական կոմիտե</p>	<p>Հետազոտության դաշտային աշխատանքների մեկնարկը 2023 թվականի հունվար, ավարտը՝ 2023թ, դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ: Հետազոտության ֆինանսավորման հատկացման սկիզբը՝ 2022 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի երրորդ հետազոտությունն իրականացվելու է վարկային միջոցների հաշվին</p>
		<p>10.4 Ներքին զբոսաշրջության զարգացում</p> <p>Պետության կողմից սոցիալական փաթեթի շրջանակներում իրականացվող ծառայությունների համակարգման էլեկտրոնային համակարգի ներդրում Ներքին զբոսաշրջության տարեկան 30% աճ</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2022թ., սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Դրամաշնորհներ, դոնոր կազմակերպություններ</p>
		<p>10.5 Ներգնա զբոսաշրջության զարգացում</p> <p>Միջազգային զբոսաշրջիկների թվի ավելացում՝ տարեկան միջինը 10 % չափով՝ հետևյալի միջոցով տարեկան առնվազն 3 նոր շուկաներում մարքեթինգային</p>	<p>Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p> <p>Առողջապահության նախարարություն</p>	<p>2021-2026թթ., ավարտը՝ 2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>

		<p>միջոցառում՝ ուղղված նոր ավիաընկերությունների ներգրավմանը</p> <p>Տարեկան առնվազն 5 զբոսաշրջային շուկայում խթանման միջոցառումներ, տարեկան՝ 3-5 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներ, 3-5 ճանաչողական այցեր 3-5 շնորհանդեսներ 3 հայտնի ճամփորդական պարբերականներում հոդվածներ, 5000 հատ գովազդատեղեկատվական նյութեր,</p> <p>Պաշտոնական զբոսաշրջային նոր կայք</p> <p>ՀՀ մարզերում առնվազն 10 փառատոն և տոնակատարություն առնվազն 5 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովման աջակցություն Հայաստանի՝ որպես տարածաշրջանային բժշկական և առողջարանային առաջարկների բազա</p>			
--	--	---	--	--	--

		<p>10.6 Օտարերկրյա պետությունների, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն</p>	<p>ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 67-րդ նիստի կայացում</p> <p>Յուրաքանչյուր տարի առնվազն մեկ զբոսաշրջային ոլորտի միջազգային նշանակության միջոցառում, կոնֆերանս</p>	<p>Արտաքին գործերի նախարարություն</p>	<p>2022թ, նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>2021-2026թթ, ավարտը՝ 2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>
		<p>10.7 Զբոսաշրջային ծառայությունների որակի բարելավում</p>	<p>Զբոսաշրջային ստանդարտների և ծառայությունների որակի համակարգի ներդրում Հյուրընկալության ոլորտի աշխատողների համար վերապատրաստման հասանելիության ապահովում մարզերում</p> <p>Արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար միջազգայնորեն ճանաչված սերտիֆիկացման ապահովում</p> <p>Տարեկան -առնվազն 3 դասընթաց, -առնվազն 50 վերապատրաստված մասնագետ</p>		<p>2022-2026թթ, ավարտը՝ 2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>
		<p>10.8 Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացում, «Զբոսաշրջային գյուղ», «Զբոսաշրջային կենտրոն» հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերի հաստատում</p>	<p>«Տեղական տնտեսությունների և ենթակառուցվածքների զարգացում» Համաշխարհային բանկի վարկային ծրագրի իրականացման շրջանակներում 2023 թվականին կմեկնարկեն</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>«Հայաստանի տարածքային զարգացման</p>	<p>2021-2024թթ, ավարտը՝ 2024թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p> <p>2022-2026թթ, ավարտը</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p>

			<p>-Գյումրու 5 բաղադրիչների շինարարական աշխատանքները,  -Ջերմուկի 5 բաղադրիչների շինարարական աշխատանքները,  -Հայաստանի սահմանային անցման կետերում միջազգային այցելությունների վերաբերյալ ընտրանքային երրորդ հետազոտության աշխատանքները ,  - կավարտվեն 6 ենթածրագրերի շինարարական աշխատանքները:  20 զբոսաշրջային կլաստերի, այդ թվում Արենի հանգույցի, զարգացում</p> <p>50 պատմամշակութային հուշարձանի վերականգնում.</p> <p>Ագրոտուրիզմի զարգացում, մասնավորապես գաստրոբակերի և գինետների ծրագրերի իրականացում</p> <p>Առնվազն 20 նոր ագրոտուրիստական օբյեկտ</p> <p>Զբոսաշրջային այցելավայրերի և հարակից տարածքների կառավարման համակարգի ներդրում (գերատեսչությունների պատասխանատվությունների և</p>	<p>հիմնադրամ»  (համաձայնությամբ)</p> <p>Կրթության,  գիտության, մշակույթի  և սպորտի  նախարարություն</p> <p>Քաղաքաշինության  կոմիտե</p>	<p>2026թ.  դեկտեմբերի  2-րդ  տասնօրյակ</p> <p>Իրավական  ակտերի  հաստատման  ժամկետը 2023թ.  հունիսի 3-րդ  տասնօրյակ</p>	
--	--	--	---	---	--	--

		<p>պարտականությունների հստակեցում) առնվազն 50 այցելավայրում</p> <p>Զբոսաշրջության դիվերսիֆիկացում (նոր զբոսաշրջային ուղղությունների ու պրոդուկտների ստեղծում), առնվազն մեկ նոր առաջարկ ամեն մարզում</p> <p>Առնվազն 20 զբոսաշրջային օբյեկտներում զբոսաշրջային առաջարկի բովանդակային հագեցում, ներառյալ գաստրո ու մշակութային փառատոների և այլ միջոցառումների սատարմամբ, այդ թվում Դաշտատեմի ամրոցում Յարխուշտայի ամենամյա փառատոն</p>			
--	--	--	--	--	--



11	Որակի ենթակառուցվածքի համակարգի զարգացում	11.1 Կանոնակարգվող ոլորտներում լաբորատոր կարողությունների զարգացում, մասնավորապես, գործող փորձարկման լաբորատորիաներում որոշ ուղղություններով համապատասխան սարքավորումներով հագեցվածության ապահովում և վերազինում, ՀՀ-ում բացակա լաբորատոր կարողությունների ձևավորում:	Կանոնակարգվող ոլորտներում արտադրանքի անվտանգության ցուցանիշներով լաբորատոր փորձարկումների իրականացում 2023թ. նավթամթերքի ոլորտում գործող 1 փորձարկման լաբորատորիայի վերազինում, ժամանակակից սարքավորումներով հագեցվածության ապահովում, տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան փորձարկումների իրականացում: Համապատասխանության գնահատման մարմինների գործունեության շրջանակի (ոլորտների) ընդլայնում, ոլորտային նոր կարողությունների ձևավորում, արտադրանքի համապատասխանության	Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ	2022-2026 թթ, ավարտը՝ 2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Վարկային կամ դրամաշնորհայի ն միջոցներ  Օրենքով չարգելված այլ միջոցներ
----	---	---	--	--	--	---

		<p>գնահատման գործընթացի ամբողջ ծավալով ապահովում, արտադրանքի շուկայահանմանն ուղղված բիզնեսի ֆինանսական ծախսերի և ժամկետների նվազեցում</p> <p>Պետական բյուջե ֆինանսական մուտքերի ավելացում, նոր աշխատատեղերի ստեղծում</p> <p>Միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների շրջանակներում (այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ պետությունների համար)</p> <p>համապատասխանության գնահատման գործընթացի ապահովում</p>				
	<p>11.2 Արդյունաբերական չափագիտական կարողությունների ձևավորում և զարգացում՝ տրամաչափարկման լաբորատորիաների ձևավորում, գործարկում և զարգացում</p>	<p>Տրամաչափարկման լաբորատորիաների կողմից տրամաչափարկման աշխատանքների իրականացում՝ նախադրյալներ ստեղծելով գիտական չափագիտության զարգացման, իրականացվող փորձարկումների հավաստիության, չափումների ճշտության համար</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2022-2026թթ ավարտը՝ 2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի</p> <p>Վարկային միջոցներ, դոնոր կազմակերպություններ</p>	

		<p>2022 թվականին զանգվածի և հարակից մեծությունների, ջերմային չափումների և հարակից մեծությունների տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծում, հավատարմագրման ապահովում և գործարկում:</p> <p>2023 թվականին գծային (անկյունագծային) տրամաչափարկման լաբորատորիայի ստեղծում</p> <p>2024-2026թթ. ուժի և հարակից մեծությունների, քիմիական մեծությունների, էլեկտրական մեծությունների, գծային (անկյունագծային) տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծում</p> <p>2023-2026 թթ. շարունակաբար ուղղանկյուն արդյունաբերության, առողջապահության, էներգետիկայի, բնապահպանության, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, շինարարության, մետաղամշակման, գործիքաշինության</p>			<p>Օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
--	--	--	--	--	---

		<p>ոլորտներում, գազալցակայաններում, հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում ճշգրիտ և միջազգային մակարդակով հետևելի չափումների իրականացում</p> <p>2023-2026 թթ. շարունակաբար Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի կազմում նոր ստեղծվող, միջազգային ճանաչում ունեցող տրամաչափարկման լաբորատորիաների ստեղծում և գործարկում, միջլաբորատոր համեմատություններին մասնակցության ապահովում, մասնագիտական որակավորման ծրագրերին և CMC տվյալների հրապարակում Չափի և կշռի միջազգային բյուրոյի տվյալների բազայում՝ հանդիսանալով չափումների միասնականության ապահովման ոլորտում ազգային և միջազգային մակարդակներում կապող կամուրջ, ազգային չափանմուշների տրամաչափարկում այլ երկրների չափագիտության ազգային ինստիտուտի</p>			
--	--	--	--	--	--

		<p>չափանմուշների հետ՝ ապահովելով միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ չափագիտության ազգային մարմնի անդամակցություն, միջազգային ստանդարտներին համապատասխան տրամաչափարկման աշխատանքների իրականացում՝ բավարարելով վերը թվարկված ոլորտներում ներկա տեղական պահանջարկը:</p> <p>Արտադրվող, արտահանվող մրցունակ արտադրանքի առկայություն</p> <p>2022-2026թթ շարունակաբար ՀՀ-ում բազմաթիվ ոլորտներում կիրառվող չափման միջոցների, սարքավորումների ճշգրտության և չափագիտական անկախության/հետևելիության ապահովում, ճշգրիտ փորձարկումների իրականացում:</p>			
	<p>11.3 Համապատասխանության գնահատման և հավատարմագրման կարողությունների զարգացում՝ թիրախ</p>	<p>2022թ. հավատարմագրման եվրոպական փորձագետների կողմից հավատարմագրման ազգային մարմնի կարողությունների սիմուլյացիոն գնահատումների իրականացում, արդյունքում ուղղիչ</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության  ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>2022-2026թթ ավարտը՝ 2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Վարկային կամ</p>

		<p>սահմանելով հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքումը տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC, IAF):</p>	<p>գործողությունների ապահովում, միջազգային 17011 ստանդարտի պահանջներն ապահովող ներքին ընթացակարգերի մշակում և հաստատում:</p> <p>2022թ. «Հավատարմագրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի մշակում և ընդունում կառավարության կողմից, 2023թ . հաստատում Ազգային ժողովի կողմից:</p> <p>2023թ. հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված հայտի ներկայացում հավատարմագրման եվրոպական կազմակերպությանը (EA):</p> <p>-2022-2024թ. հավատարմագրման ազգային մարմնի կարողությունների զարգացում՝ 2024-2025թթ. հավատարմագրման ոլորտում միջազգային և տարածաշրջանային հավատարմագրման համակարգերին ինտեգրում</p>	<p>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</p>	<p>դրամաշնորհային միջոցներ, դոնոր կազմակերպություններ</p> <p>Օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
--	--	--	---	--	---

			<p>2022-2026թթ. շարունակական հավատարմագրման գործընթացի մատչելիության, թափանցիկության ապահովում, գործընթացի արդյունավետության բարձրացում, հավատարմագրման ենթակա նոր ոլորտների ներգրավում՝ օրենսդրական կարգավորումների սահմանմամբ:</p> <p>2023-2026թթ ՀՀ -ում հավատարմագրման գործընթացի էլեկտրոնային համակարգի ներդրում և գործարկում, համապատասխանության գնահատման մարմինների կարողությունների շարունակական զարգացում</p> <p>2025-2026թթ. շուկա մուտք գործող արտադրանքի և որակյալ ծառայությունների ապահովում, գործարար միջավայրի համար համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամանակի և ֆինանսական ռեսուրսների կրճատում՝ ԵՄ և երրորդ</p>			
--	--	--	--	--	--	--

			<p>երկրներում հայրենական արտադրանքի արտահանման ծավալների աճ և մրցունակության բարձրացում:</p>			
		<p>11.4 ՀՀ-ում գործող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի և ստանդարտների վերանայում, ԵԱՏՄ նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի եւ ստանդարտների մշակմանը մասնակցություն, արտադրանքի անվտանգության ապահովման նպատակով նոր տեխնիկական կանոնակարգերի մշակում և համակարգում</p>	<p>ԵԱՏՄ շրջանակներում 2022թ. դեռևս չկանոնակարգվող, նիկոտին պարունակող նորարարական արտադրանքի մասով ԵԱՏՄ թվով 1 տեխնիկական կանոնակարգի նախագծի մշակում, հանրային քննարկման ապահովում, 2023թ . ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի ներպետական համաձայնեցման բոլոր ընթացակարգերի իրականացման ապահովում, վերջնական խմբագրության ապահովում, 2024թ. ԵՏՀ Խորհրդի կողմից հաստատում:</p> <p>2023-2026թթ. ընթացքում յուրաքանչյուր տարի գործող առնվազն 1 ՀՀ և առնվազն 12 ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի կամ դրանց կիրարկումն ապահովող ստանդարտների, համապատասխանության գնահատման ընթացակարգերի վերանայում՝ տնտեսության և գիտության զարգացման պահանջներին համահունչ գործող առնվազն 1 ՀՀ և</p>	<p>Տեխնիկական կանոնակարգման ոլորտում կանոնակարգող բոլոր պետական կառավարման լիազոր մարմիններ</p> <p>Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p> <p>Շուկայի վերահսկողության տեսչական մարմին</p> <p>ՀՀ քաղաքաշինության և հրդեհային տեսչական մարմին</p>	<p>2022-2026թթ. ավարտը՝ 2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրի Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ, դոնոր կազմակերպություններ</p> <p>Օրենքով չարգելված այլ միջոցներ</p>



			<p>առնվազն 12 ԵԱՏՄ իրավական կարգավորումների սահմանում, ոլորտի արդիականացում</p> <p>2023-2026թթ. մարդու առողջության և անվտանգության, շրջակա միջավայրի պահպանություն, անբարեխիղճ գործելակերպի կանխարգելում</p> <p>2023-2026թթ. ԵԱՏՄ շուկայում արտադրանքի շրջանառության շուրջ 95% ծավալ կազմող անվտանգ արտադրանքի շրջանառություն:</p>			
		<p>11.5 Որակի ենթակառուցվածքի համակարգի բաղակացուցիչ ոլորտների՝ բարեփոխման ռազմավարության մշակում և ՀՀ կառավարության կողմից հաստատում</p>	<p>2023թ. որակի ենթակառուցվածքի համակարգի երկարաժամկետ ռազմավարության մշակում, 2024թ. հունվարի 3-րդ տասնօրյակ հաստատում</p> <p>2022-2026թ. շարունակաբար ստանդարտացման, հավատարմագրման, չափումների միասնականության ապահովման, տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, սննդամթերքի անվտանգության և շուկայի վերահսկողության ոլորտների զարգացման հեռանկարային</p>	<p>Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ</p> <p>Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p> <p>Շուկայի վերահսկողության տեսչական մարմին</p>	<p>2022-2026թթ. ավարտը՝ 2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորումն ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված հայտերի</p> <p>Վարկային կամ դրամաշնորհային միջոցներ, դոնոր կազմակերպություններ</p> <p>Օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

			<p>         ուղղվածության ապահովում,          իրավական, ինստիտուցիոնալ          կարողությունների հզորացում՝          համապատասխանեցում          միջազգային պահանջներին,          տարածաշրջանային,          միջազգային կառույցներին          ինտեգրվածության ապահովում          2024-2026թթ.       </p> <p>         ստանդարտացման,          չափազիտության,          հավատարմագրման ազգային          համակարգի ինտեգրում          համապատասխան միջազգային          համակարգին/կառույցներին       </p> <p>         2025-2026թթ. միջազգային          ճանաչում ունեցող          հավատարմագրման համակարգի          ձեռքբերում       </p> <p>         2025-2026թթ. համապատաս-          խանության գնահատման հոսայի          ծառայությունների մատուցում,          միջազգայնորեն ճանաչելի ու          միջազգային չափանիշներին          հետևելի չափումներ,          համապատասխանության          գնահատման գործունեության          վստահելի արդյունքներ       </p> <p>         2025-2026թթ. շրջանառվող          անվտանգության արտադրանքի       </p>	<p>         Պետական          կառավարման          լիազոր մարմիններ       </p>		
--	--	--	---	--	--	--

			մրցունակության բարձրացում, պատշաճ վերահսկողություն:			
--	--	--	--	--	--	--

**Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**

NN	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	5	6	7

**Կրթություն**

1.	Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում իրականացվող բարեփոխումների համապատասխանեցում հեռանկարային զարգացման ռազմավարական ուղղություններին	1.1 «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Հանրակրթության, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթության ռազմավարական զարգացման նպատակները, բարեփոխումների ուղղությունները հստակեցված են		2022թ. մարտի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		1.2 «Մշակույթի պահպանության, զարգացման և հանրահոշակման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում, ֆինանսական միջոցների և մասնագիտական ռեսուրսների կենտրոնացում, մասնագիտական կարողությունների զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, միջազգային		2022թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

			հարթակներում հայ մշակույթի ներկայացում և դիրքավորում			
		1.3 «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2022-2030 թվականների ռազմավարությունը և ռազմավարությունների և գործողությունների պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Հայաստանի Հանրապետությունում մարզաձևերի ենթակառուցվածքների զարգացման, ակումբային սպորտի, զանգվածային, մանկապատանեկան և բարձրագույն նվաճումների սպորտի զարգացման նպատակները, բարեփոխումների ուղղությունները հստակեցված են		2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում
2.	Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառում ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում	2.1 Պետական բյուջեից ֆինանսավորվող հանրակրթական ուսումնական հաստատությունների դասագրքերի պատվերի ձևավորման և բաշխման գործընթացների մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում	Պետական բյուջեից ֆինանսավորվող հանրակրթական դասագրքերի պատվերի ձևավորման և բաշխման գործընթացները թափանցիկ են իրականացվում, վրիպակներն ու սխալները հասցված են նվազագույնի		2022թ. հունվարի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		2.2 Ավարտական փաստաթղթերի թվայնացում	Ավարտական փաստաթղթերը տրամադրվում են էլեկտրոնային եղանակով՝ կրճատելով հատկացվող միջոցների և աշխատանքի համար ներգրավվող մարդկային ռեսուրսների ծավալը		2022 թվականի հունիսի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
		2.3 Առարկայական ուսուցիչների պակաս ունեցող դպրոցներում տվյալ առարկայի էլեկտրոնային	Աջակից դպրոցների կողմից իրականացվում է առարկայական ուսուցիչ խնդիր ունեցող դպրոցների	ՀՀ մարզպետարաններ	2022թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ

	<p>ուսուցման համակարգի ներդրում, էլեկտրոնային ուսուցման գործիքների զարգացում</p>	<p>աշակերտական համակազմի համար տվյալ առարկայի էլեկտրոնային ուսուցում, էլեկտրոնային ուսուցման գործիքները կատարելագործված են</p>			<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
	<p>2.4 Ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման գործընթացներին առնչվող վարչարարության թվայնացում</p>	<p>Ուսուցիչների ատեստավորման և վերապատրաստման գործընթացներին առնչվող վարչարարությունը կրճատված է, ընձեռում է ուսուցիչների՝ վերապատրաստող կազմակերպության ազատ ընտրության հնարավորություններ</p>		<p>2023թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում</p>
	<p>2.5 Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության /ՆՄՄԿ/ համակարգում թվային տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների ստեղծում, մեխանիզմների մշակում</p>	<p>-ՆՄՄԿ համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման բնագավառների վերաբերյալ առկա է ուսումնասիրություն: -ՆՄՄԿ իրականացնող ուսումնական հաստատություններում կիրառվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ կառավարման և կազմակերպչական գործընթացներում</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2023թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում</p>
	<p>2.6 Բարձրագույն կրթության մակարդակում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (S&lt;S) կիրառմամբ կրթության</p>	<p>Վարչարարության և կոռուպցիոն ռիսկերի կրճատում: Բուհերում կրթության կազմակերպման գործընթացն ու կառավարումն իրականացվում է թվային հարթակի և առկա գործիքակազմի միջոցով</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2025 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>

		կազմակերպման գործընթացի արդիականացում՝ թվային հարթակի ներդրմամբ		ՀՀ էկոնոմիկայի նախարարություն		
		2.7 Բուհերում դասապրոցեսի կազմակերպման գործընթացների էլեկտրոնային հարթակների մշակման և ներդրման մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում	Բուհերում ներդրված է դասապրոցեսի կազմակերպման մշակված էլեկտրոնային հարթակ	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2025թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		2.8 Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ամբողջական ներդրում կրթության բոլոր մակարդակներում	Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում առկա է համապարփակ տեղեկություն կրթության բոլոր մակարդակների մասով	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2026թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
3.	Նախադպրոցական կրթության մատչելիության ընդլայնում՝ 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը հասցնելով 85 տոկոսի	3.1 Առնվազն 500 մանկապարտեզի և նախակրթարանի կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման համար հաստատությունների՝ ցանկում ընդգրկման չափանիշների և մեթոդաբանության մշակում	Կազմված են կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման ցանկում ընդգրկման չափանիշներն ու մեթոդաբանությունը	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ քաղաքաշինության կոմիտե	2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		3.2 Նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակային վերանայում. «Նախադպրոցական կրթական ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում	Նախադպրոցական կրթության պետական նոր չափորոշից բխող՝ վերանայված, արդիականացված և արդի պահանջներին համապատասխանեցված նախադպրոցական ծրագրերով երեխաների կրթության և զարգացման գործընթացի իրականացում		2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		<p>3.3 ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին» N 1169-Ն որոշման գործարկում</p>	<p>Բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը գործարկվում է, որի արդյունքում նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների ընդգրկվածությունը մեծացել է, այդ թվում՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների</p>		<p>2022 թ.-ի սեպտեմբերի 1-ից</p>	<p>ՀՀ պետական բյուջե 1146 հանրակրթության ծրագրի «12013. Սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում» բյուջետային ծրագրի բյուջետային ընդհանուր հատկացումների շրջանակում 2022թ. 237.0 մլն դրամ 2023թ. 2945.8 մլն դրամ</p>
		<p>3.4 Մշակված չափանիշների համաձայն վերանորոգման, հիմնանորոգման և կառուցման ենթակա հաստատությունների ընտրություն և վերջնական ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում</p>	<p>Մշակված չափանիշների համաձայն իրականացված է վերանորոգման, հիմնանորոգման և կառուցման ենթակա հաստատությունների ընտրություն և վերջնական ցանկը հաստատված է՝ ներառյալ ՀՀ վարչապետի նախընտրական խոստումներում նշված նախադպրոցական հաստատությունները (Նորակերտ համայնք)</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ քաղաքաշինության կոմիտե</p>	<p>2022թ. հունվարի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

		3.5 Նոր չափորոշին և առարկայական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքի և սարքավորումների ցանկի վերանայում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Վերանայված է անհրաժեշտ գույքի և սարքավորումների ցանկը, որոնք կնպաստեն նոր չափորոշիչների ներդրմանը և ուսուցման արդյունավետ գործընթացին		2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		3.6 Ցանկում ընդգրկված հաստատություններում շինարարական աշխատանքների իրականացում, հաստատությունները անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցում:	Ցանկում ընդգրկված հաստատություններում իրականացված են շինարարական աշխատանքները և հագեցված են անհրաժեշտ գույքով և սարքավորումներով	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե	2026թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, 3.275.966 հազ. ՀՀ դրամ, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		3.7 Նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրում	Ստեղծված են նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ հաստատություններ՝ տվյալ համայնքում ապահովելով նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկումը հաստատություններում և նպաստում է կրթության իրացմանը՝ 2023-2026թթ. տարեկան առնվազն 7 հաստատություն		2021-2026 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, Յուրաքանչյուր տարի 77.5 մլն դրամ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.	Անցում համընդհանուր ներառման՝ հանրապետության բոլոր	4.1 Նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման առանձնահատուկ	Մշակված է նախադպրոցական տարիքի կրթության և զարգացման առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող		2021թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում,



	<p>նախադպրոցական հաստատություններում</p>	<p>պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման գործիքակազմի մշակում և հաստատում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով</p>	<p>երեխաների գնահատման գործիքակազմը՝ համաձայն պահանջվող չափանիշների</p>			<p>օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
		<p>4.2 ՀՀ Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում և Երևան քաղաքում անցում համընդհանուր ներառման</p>	<p>Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզերում և Երևանում գործող նախադպրոցական բոլոր հաստատություններն անցել են համընդհանուր ներառման</p>	<p>Սյունիքի, Լոռու, Տավուշի մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p>	<p>2022թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե «1193 Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» բյուջետային ծրագրի բյուջետային ընդհանուր հատկացումների շրջանակում 2022թ. 3,234,341.3 հազ. դրամ</p>
		<p>4.3 ՀՀ Արարատի, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերում անցում համընդհանուր ներառման</p>	<p>Արարատի, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերում գործող բոլոր նախադպրոցական հաստատությունները անցել են համընդհանուր ներառման</p>	<p>Արարատի, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի մարզ-պետարաններ</p>	<p>2023թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե 2023թ. «1193 Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» բյուջետային</p>

					ծրագրի ընդհանուր հատկացումների շրջանակում 4,278,516.4 հազ.դրամ	
5.	Ուսուցիչ-դաստիարակների աշխատանքային առաջխաղացման, շարունակական մասնագիտական զարգացման վարձատրության փոխկապակցված մեխանիզմի ներդրում	և	5.1 «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Մանկավարժների աշխատանքային առաջխաղացման, շարունակական մասնագիտական զարգացման և վարձատրության շարունակական բարձրացման փոխկապակցված մեխանիզմի օրենսդրությամբ ամրագրված են	2022 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		5.2 «Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» և «Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստման կարգերը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանների ընդունում	Ներդրված են տնօրենների և մանկավարժական աշխատողների մասնագիտական որակների զարգացմանը, ուսումնական գործընթացի պլանավորման, կազմակերպման և հետադարձ վերլուծության արդյունավետության բարձրացման մեխանիզմներ		2021 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		5.3 Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և	Իրականացվել են նախադպրոցական ուսումնական հաստատության		2022թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, «1192 Կրթության

		մանկավարժական աշխատողների վերապատրաստումների մեկնարկ	տնօրենների մանկավարժական աշխատողների վերապատրաստումներ, 2023-2026թթ. տարեկան շուրջ 180 տնօրեն, 1500 մանկավարժական աշխատող		2026թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	որակի ապահովում» բյուջետային ծրագրի 11006 «Կրթության բովանդակային սպասարկում» միջոցառման ընդհանուր հատկացումների շրջանակում, Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
6.	Համընդհանուր հասանելի և մատչելի սովորողակենտրոն հանրակրթական միջավայրի ստեղծում	6.1. Հանրակրթության պետական չափորոշիչների փորձարկման նպատակով Տավուշի մարզի բոլոր դպրոցներում բնագիտական և S<S լաբորատորիաների ստեղծում	Տավուշի մարզի բոլոր դպրոցներում առկա են անհրաժեշտ ենթակառուցվածքները նոր չափորոշիչներով առարկայական ուսուցումն ապահովելու նպատակով		2023թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		6.2 Չափորոշիչների ներդրման համար շուրջ 1400 դպրոցներում անհրաժեշտ բնագիտական և S<S լաբորատորիաների ստեղծում	ՀՀ բոլոր դպրոցներում առկա են հանրակրթության նոր չափորոշիչներով ուսուցման համար անհրաժեշտ լաբորատոր ենթակառուցվածքները		2026թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		6.3 Հանրակրթական դպրոցներում տարածաշրջանային լեզուների ուսուցման կազմակերպում	ՀՀ տարբեր դպրոցներում տարածաշրջանային լեզուների ուսուցման գործընթացի մեկնարկը տրված է	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2022թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		<p>6.4 ՀՀ բոլոր դպրոցներում հանրակրթության պետական չափորոշիչների ներդրում</p>	<p>Չափորոշիչների փորձարկման արդյունքների հիման վրա լրամշակված և հաստատված չափորոշիչները ներդրված են ՀՀ բոլոր դպրոցներում</p>		<p>2026թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, «1192 Կրթության որակի ապահովում» բյուջետային ծրագրի 11006 «Կրթության բովանդակային սպասարկում» միջոցառման ընդհանուր հատկացումների շրջանակում, օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
		<p>6.5 ՀՀ բոլոր դպրոցները հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան նոր դասագրքերով ապահովում</p>	<p>ՀՀ բոլոր դպրոցները ապահովված են հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան նոր դասագրքերով</p>		<p>2026թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե 1146 հանրակրթության ծրագրի «11016 Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում» միջոցառման ընդհանուր հատկացումների շրջանակում,</p>

					1,1 մլրդ ՀՀ դրամ տարեկան օրենքով չարգելված այլ աղբյուրներ
	6.6 Սովորողների մոտ մեղիագրագիտության հմտությունների զարգացում	Հասարակագիտական առարկաների՝ չափորոշով սահմանված վերջնարդյունքի հիման վրա սովորողների մոտ բարելավվել է մեղիագրագիտության մակարդակը, 2023թ.-10-րդ դասարանի սովորողների մոտ կապահովվեն հասարակագիտություն առարկայական ծրագրում ներառված մեղիագրագիտությանը վերաբերող վերջնարդյունքները 2024թ. -11-րդ դասարանի սովորողների մոտ կապահովվեն հասարակագիտություն առարկայական ծրագրում ներառված մեղիագրագիտությանը վերաբերող վերջնարդյունքները		2022-2024 . հունիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
	6.7 Դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ինստիտուտի ներդրում	ՀՀ բոլոր դպրոցներում ստեղծված են մասնագիտական կողմնորոշման խմբակներ: Մասնագիտական կողմնորոշում իրականացնող մանկավարժները վերապատրաստված են:		2026 թվականի սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

			<p>Մասնագիտական կողմնորոշման հարցում, ծնողներն ստանում են համապատասխան տեղեկատվություն, սովորողները կատարում են իրազեկված ընտրություն:</p> <p>Հանրակրթական, բուհական և մասնավոր համակարգի միջև ստեղծված է արդյունավետ համագործակցային կապ</p>			
		<p>6.8 Հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն բոլոր երեխաների համար ապահովելու շրջանակում հանրակրթական ուսումնական հաստատությունների ռեսուրս-սենյակների վերանորոգում և կահավորում, տարածքային մանկավարժական աջակցության կենտրոնների վերազինում</p>	<p>27 հանրակրթական ուսումնական հաստատությունների ռեսուրս-սենյակները վերանորոգված և կահավորված են, 3 ՏՄԱԿ-ներ վերանորոգված և ապահովված են անհրաժեշտ գույքով</p>		<p>2023թ. ապրիլի 1-ին տասնօրյակ</p>	<p>«Հ պետական բյուջե և ԱՄՆ ՄՁԳ, 2021-2023 թթ. 380.7. մլն ՀՀ դրամ</p>
7.	<p>Ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման և աշխատանքային առաջխաղացման տարբերակված քաղաքականություն՝ ելնելով ուսուցիչների տարբեր խմբերի կարիքներից</p>	<p>7.1 «ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1745-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ «ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշման մեջ փոփոխություններ և</p>	<p>Ուսուցչի ատեստավորման, տարակարգերի շնորհման և վերապատրաստման կարգերը վերանայված են՝ ապահովելով անհրաժեշտ գործիքակազմը՝ բացահայտելու և խրախուսելու արդի պահանջներին համապատասխանող ուսուցիչներին, ուսուցիչների վարձատրությունը բարձրացնելով 30-50 տոկոսով, և</p>		<p>2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>«Հ պետական բյուջե 1192 կրթության որակի ապահովում ծրագրի «11010 Հանրակրթական դպրոցներում դասվանդող ուսուցիչների կամավոր ատեստավորման</p>

		<p>լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 5-ի N 24-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում</p> <p>«Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի օգոստոսի 15-ի N 1031-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում</p>	<p>աստիճանաբար մոտեցնելով երկրի միջին աշխատավարձին</p>			<p>համակարգի մշակում և ներդրում» միջոցառման ընդհանուր հատկացումների շրջանակում,</p> <p>2022թ. 1 384 500.0 հազ. դրամ 2023 թ. 3,984,600.0 հազ. դրամ</p>
		<p>7.2 Ուսուցչի մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմների ներդրում</p>	<p>Հաստատված են ուսուցչի աշխատանքային առաջխաղացման հնարավորությունները նախանշող մասնագիտական չափորոշիչները</p>		<p>2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
		<p>7.3 Հանրակրթության պետական նոր չափորոշիչներին համապատասխան՝ մանկավարժական կրթության ծրագրերի ամբողջական վերանայում</p>	<p>Մանկավարժական կրթական ծրագրերը վերանայված են՝ համապատասխանեցվելով հանրակրթության նոր չափորոշիչներին և ուսուցչի մասնագիտական չափորոշիչներին</p>		<p>2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, «1192 Կրթության որակի ապահովում» բյուջետային ծրագրի 11006 «Կրթության բովանդակային</p>

						և մեթոդական սպասարկում» միջոցառման ընդհանուր հատկացումների շրջանակում
		7.4 Մանկավարժական կրթության ընդունելության և ուսումնառության պայմանների վերանայում և հետագայում որակավորված մասնագետների աշխատանքի ապահովման մեխանիզմի ներդրում	Մանկավարժական կրթություն ստանալու և որակավորված մասնագետներին աշխատանքով ապահովվելու մեխանիզմները մշակված են՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ՝ ուսուցչի մասնագիտությունը երիտասարդների շրջանում դարձնելով պահանջված, հեղինակավոր և արդիական		2026թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
8.	Կառուցել, հիմնանորոգել և վերանորոգել առնվազն 300 հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ ապահովել դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով	8.1 Շենքերի սեյսմիկ կայունության, բեռնվածության, գյուղական համայնքներում կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման, շինարարական աշխատանքներին զուգընթաց անհրաժեշտ գույքով և սարքավորումներով ապահովելու սկզբունքներին համահունչ՝ դպրոցների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման ցանկում ընդգրկման չափանիշների ու մեթոդաբանության կազմում	Կազմված են դպրոցների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման ցանկում ընդգրկման չափանիշներն ու մեթոդաբանությունը	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե	2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Օրենքով չարգելված այլ աղբյուրներ



<p>8.2 Մշակված մեթոդաբանության և սկզբունքների համաձայն՝ առնվազն 300 դպրոցների ընտրություն և վերջնական ցանկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</p>	<p>Մշակված չափանիշների համաձայն՝ իրականացված է վերանորոգման, հիմնանորոգման և կառուցման ենթակա հաստատությունների ընտրություն, և վերջնական ցանկը հաստատված է՝ ներառյալ ՀՀ վարչապետի նախընտրական խոստումներում նշված դպրոցները (Փարաքարի, Մրգաշատի, Լուսակնի միջնակարգ դպրոցներ, Փշատավանի և Արմավիրի մարզի ինը համայնքներում դպրոցների, Վաղարշապատի թիվ 7 հիմնական դպրոցի մարզադահլիճները)</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ քաղաքաշինության կոմիտե</p>	<p>2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
<p>8.3 Նոր չափորոշին և առարկայական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքի և սարքավորումների ցանկի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</p>	<p>Վերանայված է անհրաժեշտ գույքի և սարքավորումների ցանկը՝ նոր չափորոշին և առարկայական ծրագրերին համապատասխան</p>		<p>2022 թվականի փետրվարի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
<p>8.4 Ցանկում ընդգրկված հաստատություններում շինարարական աշխատանքների իրականացում և անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցվածության ապահովում</p>	<p>Ցանկում ընդգրկված հաստատություններում իրականացված են շինարարական աշխատանքները և հագեցված են անհրաժեշտ գույքով և սարքավորումներով 2023թ. – 64 հաստատություն 2024թ. -57 հաստատություն</p>		<p>2022 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ-2026 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե . «1183 Ապահով դպրոց» բյուջետային ծրագրի ընդհանուր հատկացումների շրջանակում</p>

			2025թ. – 111 հաստատություն 2026թ. – 78 հաստատություն			օրենքով չարգելված այլ աղբյուրներ
9.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման և ֆինանսավորման համակարգի արդյունավետության բարձրացում	9.1 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Ներդրված է հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման նոր մոդել՝ հավաստագրման և ատեստավորման նոր մեխանիզմներով և գործառության բաշխվածությամբ		2022թ մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		9.2 «ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 24-ի 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Դասարանների թվի հիման վրա գործում է ֆինանսավորման նոր կարգ: Գործում է նաև արդյունավետ կառավարման հիման վրա լրացուցիչ ֆինանսավորման մեխանիզմ՝ կատարողականի հիման վրա մրցութային ֆինանսավորման նոր մեխանիզմներով՝ նպաստելով արդյունավետ և որակյալ հանրակրթության իրականացմանը		2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		9.3 «ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ «ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի	Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենի ընտրության, պաշտոնների նկարագրերի և օրինակելի կանոնադրության վերանայման արդյունքում ապահովված է հաստատությունների կառավարման արդյունավետության գործիքակազմը՝ կարևորելով		2022 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		<p>N 1391- որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ «ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</p>	<p>զարգացման ծրագրի կատարողականի արդյունքը</p>			
		<p>9.4 Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ատեստավորման կարգը սահմանելու մասին որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ «ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թ. մայիսի 18-ի N 395-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ԿԳՄՍՆ հրամանի ընդունում</p>	<p>Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հավաստագրման կարգի վերանայմամբ, ատեստավորման համակարգի ներդրմամբ ապահովված է տնօրենների աշխատանքի արդյունավետության գնահատման գործիքակազմը</p>		<p>2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
		<p>9.5 Հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների անդամների</p>	<p>Հանրակրթական բոլոր ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմնի անդամները տիրապետում են</p>		<p>2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, «1192 Կրթության որակի</p>

		վերապատրաստումների մեկնարկ	իրենց առջև դրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ հմտություններին և կարողություններին (շուրջ 9000 անդամ)			ապահովում» բյուջետային ծրագրի 11006 «Կրթության բովանդակային սպասարկում» միջոցառման ընդհանուր հատկացումների շրջանակում
		9.6 Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների, տնօրենի տեղակալների վերապատրաստումների մեկնարկ	Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տնօրենների տեղակալների համար գործում է մասնագիտական շարունակական զարգացման մեխանիզմ (1400 տնօրեն, տնօրենի 2200 տեղակալներ)		2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, «1192 Կրթության որակի ապահովում» բյուջետային ծրագրի 11006 «Կրթության բովանդակային սպասարկում» միջոցառման ընդհանուր հատկացումների շրջանակում
10.	ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին ապահովում դպրոցական սննդով	10.1 ՀՀ Լոռու մարզի հանրակրթական դպրոցների ընդգրկում «Կայուն դպրոցական սնունդ ծրագրում	ՀՀ Լոռու մարզում ուսումնառության ընթացքում սնունդ ստացող շահառուների թիվը կկազմի շուրջ 12600 երեխա, ամբողջ ծրագրի մասով՝ շուրջ 78500 տարրական դասարաններում սովորող երեխա	ՀՀ Լոռու մարզպետարան	2022թ. հունվարի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե 1588.1 մլն ՀՀ դրամ, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

10	Միջազգային համագործակցության և հավաքական անվտանգության գործող ընթացակարգերի հնարավորությունների ընդլայնում	<p>10.1 Կատարելագործել ՀՀ-ՌԴ և ՀԱՊԿ շրջանակներում հավաքական պաշտպանության գործող ընթացակարգերը, զարգացնել համատեղ պլանավորման և ուժերի կիրառման կարողությունները</p> <p>10.2 Ամրապնդել ՀՀ-ՌԴ համատեղ (միացյալ) և ՀԱՊԿ ուժերի մարտական կարողությունները, բարձրացնել ՀՀ ՋՈւ փոխգործունակության աստիճանը</p> <p>10.3 Իրականացնել բազմակողմ և երկկողմ ձևաչափով ռազմաքաղաքական խորհրդակցություններ</p> <p>10.4 Ապահովել ՀՀ ՋՈւ ներգրավվածությունը</p>	Կկատարելագործվեն հավաքական պաշտպանության և համագործակցային անվտանգության գործող մեխանիզմները, ուժերն ու միջոցները, կշարունակվի զինված ուժերի արդիական սպառազինությամբ և այլ նյութական միջոցներով համալրումը, պաշտպանական բարեփոխումների համար խորհրդատվության ստացումը, պաշտպանության և անվտանգության հարցերում Հայաստանի Հանրապետության դիրքորոշումների հաղորդակցումը, ՀՀ ստանձնած միջազգային հանձնառությունների կատարումը	Անվտանգության խորհրդի գրասենյակ  Արտաքին գործերի նախարարություն	Մշտապես	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ



		միջազգային գործողություններին				
		10.5 Ապահովել ՀՀ պաշտպանության համակարգի բարեփոխումների խորհրդատվական ու փորձագիտական աջակցություն				
		10.6 Զարգացնել դաշնակից և գործընկեր երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցությունը				
11	Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և բարեվարքության ամրապնդում	11.1 ՊՆ ՌՈՒՀ-ի ՍՈԲԿ-ում և ՀՇՖ-ում «Պատշաճ կառավարում և բարեվարքության ամրապնդում պաշտպանության և անվտանգության ոլորտներում» կրթական ծրագրի և «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկայի վերանայված ծրագրի ներդրում	Կբարձրանա բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման հարցերում անձնակազմի իրազեկվածության մակարդակը: Զինված ուժերը համալրող սպաները կունենան բավարար գիտելիքներ մարդու իրավունքների վերաբերյալ, ծառայության ընթացքում դրանց պաշտպանությունը և ենթականերին դասավանդումը կունենա մուլտիպլիկատիվ արդյունք	ՄԻՊ աշխատակազմ (համաձայնությամբ)	2022թ. սեպտեմբեր 2021-2026թթ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		11.2 Կանանց իրավունքների պաշտպանության թեմաներով դասընթացների կազմակերպում, ԶՈՍ ստորաբաժանումներին քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ	Կբարձրանա մարդու իրավունքների խախտումների կանխարգելման, ինչպես նաև մարդու հիմնարար և երկրորդական իրավունքների վերաբերյալ անձնակազմի իրազեկվածության մակարդակը	ՄԻՊ աշխատակազմ (համաձայնությամբ)	2021-2023թթ.	

		տեղեկատվական նյութերի տրամադրում				
		11.3 Պաշտպանության ոլորտում մշտադիտարկում և քաղաքացիական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության զարգացում	Թափանցիկության, հաշվետվողականության և հասարակական վստահության ամրապնդում		2021-2026թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
12	Ռազմական կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և գերակայությունների մշակում և իրագործում, ռազմակրթական համակարգի մրցունակության բարձրացում, ռազմական գիտության զարգացում	12.1.Սահմանել ռազմամասնագիտական թեքումով դասախոսների ընտրության համար արժանիքահեն և մրցութային ճկուն ընթացակարգեր	Կբարձրանա պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության արդյունավետությունը		2022-2023թթ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում)
		12.2.Մշակել և ընդունել ռազմական կրթության նկատմամբ գրավչության բարձրացմանն ուղղված ծրագիր և դրա իրականացման ժամանակացույց	Սպայական և ենթասպայական հաստիքները կհամալրվեն որակյալ կադրերով		2022-2024թթ.	
		12.3 Ռազմական գործողությունների պլանավորման ու վարման ձևերի վերանայում	Պլանավորման և պատերազմավարման մեթոդները կհամապատասխանեցվեն ժամանակակից չափանիշներին		2022-2023թթ.	

13	<p>Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխում: Տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման, վերլուծության, տեղեկատվական հակազդման և պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացում, օրենսդրական դաշտի կատարելագործում</p>	<p>13.1 Հայաստանի Հանրապետության շահագրգիռ գերատեսչությունների ու կազմակերպությունների հետ տեղեկատվական անվտանգության և կիբեռհարձակման դեպքերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով կիբեռհարձակման դեպքերի արագ արձագանքման խմբերի ընդլայնում</p>	<p>Տեղեկատվական անվտանգության ոլորտի կառույցների հետ գործընկերության ընդլայնման պայմաններում ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների կիբեռանվտանգության ստորաբաժանումների կիբեռհարձակման դեպքերին արագ արձագանքման խմբերը արտակարգ իրավիճակներում առավել արդյունավետ կգործեն տեղեկատվական հակազդման և տեղեկատվական պայքարի միջոցառումներն իրականացնելիս, կբարձրանա Հայաստանի կիբեռանվտանգության և կիբեռհանցագործություններից պաշտպանվածության մակարդակը (դիրքն ըստ Գլոբալ կիբեռանվտանգության համաթվի՝ 2025թ. նախատեսվում է հասցնել 30-ի)</p>	<p>Անվտանգության խորհրդի գրասենյակ</p> <p>Ազգային անվտանգության ծառայություն Ոստիկանություն Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն</p>	2022-2025թթ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
----	---	--	---	---	--------------	---

		13.2 Հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացում, թիրախավորող բացասական տեղեկատվական հոսքերին և հավանական հակառակորդի կողմից իրականացվող սոցիալական, ազգային, կրոնական ատելության, զինված ուժերի վարկաբեկմանն ուղղված քարոզչությանը հակազդելու գործընթացի ապահովում:	Կմշակվի և կներդրվի ՀՀ-ն թիրախավորող բացասական տեղեկատվական հոսքերին հակազդելու, հանրությանն ամբողջական ու ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու, միասնական տեղեկատվական քաղաքականություն ու տեղեկատվական գործողություններ իրականացնելու համակարգ:	Անվտանգության խորհրդի գրասենյակ  Ազգային անվտանգության ծառայություն Արտաքին գործերի նախարարություն Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Ոստիկանություն	2022-2024թթ	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
14	Սոցիալական պաշտպանության ապահովման և կենսաթոշակային ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում, սոցիալական երաշխիքների ընդլայնում և զինվորական ծառայության գրավչության ապահովում	14.1 Ապահովել «Մատչելի բնակարան զինծառայողին» պետական նպատակային ծրագրի իրականացման հասանելիությունն ու շարունակականությունը, նախաձեռնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին բնակարանային պայմանների բարելավում ստանալու իրավունքը պահպանած զինծառայողների բնակարանային ապահովման գործընթացի իրականացումը	Պետական հոգածության մակարդակի բարձրացում, կստեղծվեն ծառայության համար ավելի բարենպաստ պայմաններ, կբարձրանա զինվորական ծառայության գրավչության և զինվորական կարգապահության մակարդակը, զինված ուժերում կամրապնդվի անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը, շարունակականորեն կբարելավվեն շահառուների բնակկենցաղային պայմանները	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2021 -2026թթ.	Պետական բյուջե (բնագավառի գծով նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		14.2 Մարտական խնդիրներ իրականացնող գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող	Ատեստավորման և հավելավճարի համակարգի ներդրումը կարժևորի մարտական խնդիրներ ունեցող	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	

		<p>սպայական, ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողներին ատեստավորման արդյունքներով հավելավճար սահմանելու նպատակով օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակում</p>	<p>պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինծառայողների մարտական ծառայությունը, կբարձրանա զինծառայողների դրամական ապահովությունը, կբարելավվի զինծառայողների ընտանիքների կենսամակարդակը, մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ունեցող անձինք ամենամսյա պարգևավճար ստանալու իրավունք ձեռք կբերեն անկախ զինվորական կենսաթոշակի իրավունք ունենալու հանգամանքից</p>	<p>Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ</p>		
		<p>14.3 Աշխատանքային կենսաթոշակ կամ նպաստ ստանալու իրավունք ունեցող՝ ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների համար ամենամսյա պարգևավճար սահմանելու նպատակով «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում</p>				
		<p>14.4 «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին», «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» և</p>	<p>Միջոցառման շրջանակներում նախատեսվում է լուծել նշված օրենքների և այլ իրավական ակտերի դրույթների գործնական կիրառման ժամանակ ի հայտ եկած խնդիրները՝ պայմանավորված դրանց ոչ բավարար հստակությամբ, տարաբնույթ ընկալմամբ և</p>			

		«Պետական կենսաթոշակների մասին» օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մշակում	տարրընթերցումների հանգամանքով			
		14.5 Հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն իրականացնող պայմանագրային զինծառայողների համար լրացուցիչ սոցիալական արտոնություններ և երաշխիքներ սահմանելու նպատակով համապատասխան օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Նախագծերի ընդունման դեպքում մարտական հերթապահությունում ընդգրկված պայմանագրային զինծառայողների զավակների համար կսահմանվի ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ առնվազն 30 տոկոսի չափով	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Ֆինանսների նախարարություն Պետական եկամուտների կոմիտե Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	

**Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն**

NN	Նպատակ	Միջոցառումներ	Աննկավիղ արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	5	6	7

1.	Մարզպետարանների կազմակերպական կառուցվածքների վերանայում և համայնքային ծառայության համակարգի զարգացում	1.1 Մարզպետարանների կազմակերպական կառուցվածքների վերանայում՝ «Մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու» մասին ՀՀ Վարչապետի և «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի ներկայացում կառավարության քննարկմանը	Տարածքային կառավարման մարմինների միատեսակ գործառույթների և կառուցվածքի սահմանում՝ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նկարագրված լիազորությունների շրջանակներում:		2022 թվականի հուլիսի 1–ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		1.2 Համայնքային ծառայության համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների իրականացում	«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում: Ոլորտը կարգավորող շուրջ 13 ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների և		2021-2025 թվականներ	Ֆինանսավորում չի պահանջվում

			<p>լրացումների նախագծերի մշակում:</p> <p>Համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի արդիականացում: 2023թ. նախատեսվում է իրականացնել «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի շահագրգիռ մարմինների հետ քննարկման աշխատանքներ:</p>			
2.	<p>Հանրապետության տարածքային համաչափ զարգացման, տարածքների սոցիալ-տնտեսական կայունության և հետագա տնտեսական ակտիվության և աճի ապահովում</p>	<p>2.1. Սահմանամերձ համայնքների բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված աջակցության ծրագրերի իրականացում</p>	<p>Ծրագրի իրականացման արդյունքում ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի, Արարատի մարզերի 23 սահմանամերձ համայնքների 81 բնակավայրերի բնակիչներին ՀՀ պետական բյուջեից կտրամադրվի աջակցություն՝ էլեկտրաէներգիայի, բնական գազի, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոհատուցում, անշարժ գույքի հարկի ամբողջական փոխհատուցում՝ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի</p>	<p>Մարզպետարաններ, Ջրային կոմիտե, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>2021-2024թթ</p>	<p>ՀՀ պետական բյուջե 1,155,205.8 հազ. դրամ</p>



			<p>1444-Ն որոշման շրջանակներում: « 2023թ. պետական բյուջեով «Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին» միջոցառման գծով նախատեսվել է <u>973.672.6 հազ. դրամ</u>: 2023 թվականին սոցիալական աջակցություն կստանա ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի 23 համայնքի 82 բնակավայրի բնակիչ- բաժանորդներ, այդ թվում՝ անշարժ գույքի հարկի փոխհատուցում՝ շուրջ 54298 (գույք) ֆիզիկական և իրավաբանական անձ, էլեկտրաէներգիայի սակագնի մասնակի փոխհատուցում՝ շուրջ 26303 բնակիչ- բաժանորդ, բնական գազի սակագնի մասնակի փոխհատուցում՝ շուրջ 13335 բնակիչ- բաժանորդ, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցում՝ շուրջ 4022 ֆիզիկական և իրավաբանական անձ:</p>			
--	--	--	---	--	--	--

		2.2 «Հայաստանի Հանրապետության 2023-2027թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը	Հայաստանի Հանրապետության 2022-2027 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը հնարավորություն կտա հստակեցնել և վերանայել տարածքային համաչափ զարգացման գերակա ուղղությունները, նպատակները, դրանց հասնելու հիմնական քայլերը՝ հաշվի առնելով արդեն իսկ իրականացված ծրագրերը, վարչատարածքային բարեփոխումները, հետպատերազմյան իրողությունները՝ ապահովելով կապը և համապատասխանությունը այլ ռազմավարական փաստաթղթերի հետ՝ մասնավորապես «2020-2050թթ Հայաստանի վերափոխման ռազմավարության»		2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
3.	Ապահովել 2021 թվականի մայիսի 27-ին ընդունված «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքում	3.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության	ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով		2022թ. մարտի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

	<p>փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-228-Ն ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի կատարումը:</p>	<p>որոշման նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:</p>	<p>նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին» N 1910-Ն որոշումը համապատասխանեցնել 2021 թվականի մայիսի 27-ին ընդունված թիվ ՀՕ-228-Ն «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով կատարված փոփոխություններին:</p>			
		<p>3.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի N 1301-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:</p>	<p>3.2 ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի «Սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինների դիակիզման, գերեզմանատների վնասագերծման և տեղափոխման ու վերահուլարկավորման կարգերը հաստատելու մասին» 1301-Ն որոշումը համապատասխանեցնել 2021 թվականի մայիսի 27-ին ընդունված թիվ ՀՕ-228-Ն «Հուլարկավորությունների կազմակերպման և</p>	<p>Առողջապահության նախարարություն</p>	<p>2022թ. մարտի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

			գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով կատարված փոփոխություններին:			
4	Հանրապետության տարածքային համաչափ զարգացմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության համայնքների ենթակառուցվածքների զարգացում	4.1 ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, համայնքների կողմից ներկայացված և սահմանված չափորոշիչներին բավարարող ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի շարունակության ապահովում	Համայնքներում կապիտալ ներդրումների ակտիվացում, տնտեսական և սոցիալական նշանակության ենթակառուցվածքների բարելավում և արդիականացում, համայնքային բնակչության կյանքի որակի բարելավում: Յուրաքանչյուր տարի առնվազն 150 սուբվենցիոն ծրագրի (400-500 ենթածրագրի) իրականացում, որոնց արդյունքներով կբարելավվեն ՀՀ-ի համայնքների ենթակառուցվածքները՝ մասնավորապես կառուցված կամ նորոգված ճանապարհներ, մանկապարտեզներ, մշակույթի տներ, համայնքային կենտրոններ, այգիներ, պուրակներ, էներգախնայող լուսավորության, ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման և գազամատակարարման	Էկոնոմիկայի նախարարություն,  Քաղաքաշինության կոմիտե,  Մարզպետարաններ,  ՀՀ համայնքներ (համաձայնությամբ)	2021-2026թթ	ՀՀ պետական բյուջե, ՀՀ համայնքների բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			համակարգեր, բազմաբնկարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության տարրեր գյուղատնտեսական և կոմունալ ծառայությունների համար մեքենասարքավորումներ:			
		4.2 Համայնքների խոշորացման արդյունքում ձևավորված համայնքների խոցելիության գնահատման նոր համակարգի մշակում, որը հիմք կհանդիսանա ենթակառուցվածքները բարելավելու նպատակով իրականացվելիք ներդրումային ծրագրերի մշակման համար	Կմշակվի միավորված համայնքները բնութագրող ամփոփ գնահատականների վրա հիմնված մեթոդական փաստաթուղթ, որի կիրառությունը հնարավորություն կտա ներդրումային ծրագրերը դարձնել հասցեական՝ թիրախային համայնքների ճիշտ ընտրության ճանապարհով	Էկոնոմիկայի նախարարություն	2023թ. մարտի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
5	Բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնակավայրերում աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների	5.1 «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Աղբի հետ գործածության ոլորտում օրենսդրական դաշտի բարելավմամբ օրենսդրական և ինստիտուցիոնալ հենքի ստեղծում՝ նպատակաուղղված թափոնների հինգաստիճան ստորակարգության կիրառմանը, այդ թվում՝ առաջացող թափոնների ծավալի նվազեցմանը,	Քաղաքաշինության կոմիտե	2021թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

	կառավարման համակարգի բարելավում		օգտահանման ենթակա թափոնների տեսակավորված հավաքմանը և դրանց վերամշակմանը			
	5.2 Նոր սանիտարական աղբավայրի կառուցում, փակման ենթակա աղբավայրերի փակում և գործող աղբանոցների բարելավում	Քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նվազագույն նորմերին համապատասխան աղբավայրերի համակարգի ներդրում, հանրապետությունում առաջին սանիտարական աղբավայրի կառուցում, թվով 25 աղբավայրի փակում 2023 թվականի ընթացքում, մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի հեռացման վայրերի բացասական ու վնասակար ազդեցությունների նվազեցում	ՀՀ համայնքներ (համաձայնությամբ), Շրջակա միջավայրի նախարարություն	2022-2026թթ.		ՀՀ պետական բյուջե, ՀՀ համայնքների բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
	5.3 Գոյացող աղբի պատշաճ կերպով հավաքման, տեղափոխման և հեռացման կամ վերամշակման գործընթացների ապահովում	Աղբի հավաքման արդյունավետ սխեմաների ներդրում (2024 թ. ընթացքում), տարբեր տեսակի թափոնների գործածության համար ընթացակարգերի կիրարկում (2023թ. ընթացքում), ինչի շնորհիվ թափոնների առանձին տեսակների կրկնօգտագործման, օգտահանման և վերամշակման արդյունքում կնվազեցվի աղբավայրերում տեղադրվող աղբի ծավալը:	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, Մարզպետարաններ, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ)	2022-2026թթ.		ՀՀ պետական բյուջե, ՀՀ համայնքների բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ

6	<p>ՀՀ պետական հանրակրթական դպրոցական շենքերի սեյսմիկ անվտանգության բարելավում</p>	<p>6.1 Սեյսմիկ տեսանկյունից առավել խոցելի և առաջնահերթ կարգով բարելավման անհրաժեշտություն ունեցող դպրոցական շենքերի ուժեղացում/ նորերի կառուցում</p>	<p>Դպրոցական աշակերտների անվտանգ կրթական պայմանների ապահովում, ժամանակակից քաղաքաշինական և կրթական բոլոր չափանիշներին համապատասխան կրթական պայմանների ապահովում: Առնվազն 24 դպրոցական շենքերի կառուցում, որոնք կբավարարեն ժամանակակից քաղաքաշինական և կրթական բոլոր չափանիշներին, մասնավորապես՝ կլինեն սեյսմակայուն առնվազն 9 բալերկրաշարժի դեպքում, էներգախնայող և այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավորություններով, մատչելի հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Արդյունքում՝ 24 պետական հանրակրթական դպրոցներում կապահովվեն անվտանգ, ժամանակակից քաղաքաշինական և կրթական բոլոր չափանիշներին համապատասխան կրթական պայմաններ: 2023թ. նախատեսվում է ավարտել /ապահովել նաև կահույքով/ առնվազն 10 դպրոց:</p>	<p>Քաղաքաշինության կոմիտե</p> <p>Արտակարգ իրավիճակների նախարարություն,</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,</p> <p>Տարածքային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)</p>	<p>2021-2026թթ.</p>	<p>ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
---	---	--	--	--	---------------------	---

			2023թ. նախատեսվում է մեկնարկել առնվազն 8 դարոցների շինարարական աշխատանքներ:			
7	Միավորված բազմաբնակավայր համայնքներում քաղաքացիներին տրամադրվող վարչական ծառայությունների որակի բարելավում և հասանելիության ընդլայնում	7.1 Միավորված համայնքներում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (<ԿՏՀ) ներդրում	Վարչատարածքային բարեփոխումների արդյունքում ձևավորված բազմաբնակավայր նոր համայնքներից 26-ում կարդիականացվեն համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի (<ԿՏՀ) գործառնական հնարավորությունները, կիրականացվեն տվյալների բազաների ինտեգրման և համայնքների տարածքում միասնական տեղեկատվական միջավայրի կազմավորման աշխատանքներ: Կարդիականացվի նաև մոտ 210 բնակավայրերի վարչական գրասենյակներում առկա կազմակերպական տեխնիկայի պարկը:		2022-2023թթ.	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) և Շվեյցարիայի համագործակցության ընկերության դրամաշնորհ
		7.2 Միավորված բազմաբնակավայր համայնքներում «մեկ պատուհան» սկզբունքով գործող քաղաքացիների սպասարկման գրասենյակների (ՔՍԳ)	Քաղաքացիների սպասարկման գրասենյակ (ՔՍԳ) կհիմնվի 1 միավորված համայնքում, կարդիականացվեն ևս 2 համայնքներում նախկինում հիմնված և գործող ՔՍԳ-ները:		2022-2023թթ.	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) և Շվեյցարիայի համագործակցության



		հիմնում և արդիականացում				ընկերության դրամաշնորհ
		<p>7.3 «Պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորների ցանկը հաստատելու, գործառույթների իրականացումն օպերատորին պատվիրակելու, գործառույթների ցանկը հաստատելու, օպերատորի հետ կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը և օպերատորին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշման</p>	<p>Իրականացված վարչատարածքային բարեփոխումներին համապատասխան կվերնայվեն պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորների ցանկում ներառված բազմաբնակավայր համայնքների քանակը և օպերատորներին վերապահված ծառայությունների ցանկը: 2023 թվականին նախատեսվում է մշտադիտարկումներ և ուսումնասիրություններ իրականացնել օպերատորների ցանկում արդեն իսկ ներառված և պետական ծառայություններ տրամադրող համայնքապետարանների գործունեության նկատմամբ՝ նրանց կողմից տրամադրված պետական ծառայությունների քանակի, որակի և հասանելիության վերաբերյալ: Այս մշտադիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ</p>	<p>Արդարադատության նախարարություն</p>	<p>2022-2024թթ.</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>

		մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունում	տեղեկատվությունը, որպես տվյալ պահին առկա իրավիճակի ամփոփ նկարագիր, կարևոր և օգտակար հիմք կհանդիսանա միջոցառմամբ սահմանված որոշման նախագծի մշակման համար:			
8	Վարչատարածքային բարեփոխումների շարունակականության ապահովում, լիազորությունների ապակենտրոնացում	8.1 Միավորված համայնքների լիազորությունների և կարիքների ուսումնասիրման հիման վրա լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգի մշակում	Մշակվել է լիազորությունների ապակենտրոնացմանը վերաբերող համապարփակ փաստաթուղթ, որում նկարագրված են ապակենտրոնացման գործընթացի սկզբունքները, նպատակները, խնդիրները և ոլորտային ուղղությունները	Ֆինանսների նախարարություն	2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		8.2 Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների, ինչպես նաև ընտրված ոլորտներում կամ բնագավառներում դերերի ու պարտականությունների փոփոխման վերաբերյալ առաջարկությունների մշակում	Սահմանվել են այն լիազորությունները, որոնք հնարավոր է փոխանցել տեղական ինքնակառավարման մարմիններին, մասնավորապես՝ առողջության առաջնային պահպանման, միջհամայնքային և միջբնակավայրային ճանապարհների պահպանության ու շահագործման, հանրակրթական դպրոցների շենք-շինությունների		2024թ.-ի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

			պահպանության և շահագործման ոլորտներում:			
		8.3 Լիազորությունների ապակենտրոնացման կիրարկումն ապահովող անհրաժեշտ, մասնավորապես՝ «Տեղական ինքնակառավարման մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքներում և համապատասխան ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ ենթադրող իրավական ակտերի նախագծերի մշակում և դրանց ներկայացումը Վարչապետի աշխատակազմ	Օրենսդրորեն տեղական ինքնակառավարման մարմիններին փոխանցվել են նոր լիազորություններ, որոնց իրականացումն ավելի արդյունավետ կդառնա:		2025թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
9	Միջհամայնքային համագործակցության տարբեր ձևերի ներդրում	9.1 «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին հավանություն տալու մասին ՀՀ	«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 9-րդ գլխում նկարագրված է միջհամայնքային միավորումների կարգավիճակի, ստեղծման և լուծարման վերաբերյալ կարգավորումներ: Սակայն,		2022-2023թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում

		<p>կառավարության որոշման ընդունում</p>	<p>միջհամայնքային համագործակցությունը չի սահմանափակվում</p> <p>միջհամայնքային միավորումներով: Միջազգային պրակտիկայում առկա են համագործակցության այլ ձևեր, մասնավորապես՝ հանրային-իրավական համաձայնություն, աշխատանքային միություն, նպատակային միություն, համայնքների նպատակային միավորում, համատեղ վարչական մարմնի ստեղծում և այլն: Այդ ձևերից ընտրվելու են ՀՀ-ի օրենսդրությանը և կառավարման համակարգին չհակասողները և նկարագրվելու են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում:</p>			
		<p>9.2 Օրենքով միավորում ստեղծելու վերաբերյալ օրենսդրական փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում:</p>	<p>Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված են միավորումների երկու ձևեր՝ կամավոր և օրենքով: Կառավարության իրավասությունն է ներկայացնել առաջարկություն՝ օրենքով միավորում ստեղծելու վերաբերյալ: Մշակվելու է օրենսդրական փաթեթ առանձին օրենքով</p>		<p>2022-2026թթ.</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

			<p>միջհամայնքային միավորում ստեղծելու վերաբերյալ: 2023 թվականին նախատեսվում է ուսումնասիրել միջհամայնքային միավորումների ձևավորման միջազգային փորձը, որի նպատակն է՝ իդենտիֆիկացնել այն իրատեսական ոլորտները, որոնց շրջանակում ՀՀ համայնքները կկարողանան միջհամայնքային միավորում ստեղծելու միջոցով արդյունավետ համագործակցել:</p>			
10	<p>Հանքարդյունաբերության ոլորտում միասնական և համապարփակ քաղաքականության վարում</p>	<p>10.1 Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մշակում</p>	<p>Հանքարդյունաբերության ոլորտի համապարփակ քաղաքականության սահմանում, ազգային և տեղական մակարդակներում ֆիսկալ և ոչ ֆիսկալ (այդ թվում՝ վերամշակման և վերջնական արտադրանքի ստացման) օգուտները ավելացնելու և բաշխելու համար ինստիտուցիոնալ շրջանակի ստեղծում, համաչափ զարգացման, տնտեսական, բնապահպանական և սոցիալական հարցերի ուղղությամբ ընդհանուր մոտեցման ամրագրում:</p>	<p>Ֆինանսների նախարարություն</p> <p>Պետական եկամուտների կոմիտե</p>	<p>2022 թ. հունիսի 1-ին տասնօրյակ</p>	<p>Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցներ 204 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ հարկերը)</p>

		10.2 Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ ոլորտը կարգավորող օրենքների, ինչպես նաև դրանցից բխող այլ իրավական ակտերի ընդունում	Հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորման ապահովում Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությանը համահունչ մշակված ոլորտային օրենսդրական փոփոխությունների 8 փաթեթ		2024 թ. հունիսի 1-ին տասնօրյակ	Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցներ 90 հազ.ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ հարկերը)
11	ԱՃԹՆ/ԷԻԿ-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի կազմում և հրապարակում (շարունակական)	11.1 ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/ԷԻԿ-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի նախագծի կազմում, ներկայացում ՀՀ կառավարություն և հրապարակում	Առավել թափանցիկ, հաշվետվողական պետական և գործարար համակարգերի ապահովումը, ինչը խթան է հանդիսանում կառավարության, տնտեսության մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության միջև երկխոսության կայացմանը: Հրապարակված ազգային զեկույց (յուրաքանչյուր տարի)		2022թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ  2023-2026թթ.	Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցներ Կանխատեսվող ֆինանսավորման չափը՝ շուրջ 80 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք դրամ  Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցներ Կանխատեսվող ֆինանսավորման չափը՝ շուրջ 50 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (2023 թվական)

12	Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի հետ կապված գործընթացին առնչվող իրավահարաբերությունների կարգավորում	12.1 «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումների, ինչպես նաև օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգների սահմանման իրավական հենքի ստեղծում:		2022թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		12.2 «Օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորման մեթոդական ցուցումները սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի հաստատում	ՀՀ ՏԿԵ նախարարի հրամանով հաստատված օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերի երկրաբանատնտեսագիտական հիմնավորմանը ներկայացվող մեթոդական ցուցումներ:		2022թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		12.3 «Օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և	Ռեսուրսների ռացիոնալ և համաչափ օգտագործման ապահովում: ՀՀ ՏԿԵ նախարարի հրամանով հաստատված օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման շուրջ 10 հրահանգ		2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

		<p>ենթակառուցվածքների նախարարի հրամանի հաստատում</p>				
		<p>12.4 Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նախագծում հանքավայրի պաշարների գնահատման ժամանակ հիմնավորված՝ հանքաքարի արդյունահանման և վերամշակման տեխնիկա-տեխնոլոգիական ցուցանիշների ամրագրում և սահմանված ցուցանիշից շեղման դեպքում իրավական ակտերով համապատասխան միջոցառումների կիրառման մեխանիզմների ներդրման նպատակով օրենսդրական փոփոխությունների առաջարկության ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>Ռեսուրսների ռացիոնալ և համաչափ օգտագործման ապահովում Օրենսդրական փոփոխությունների փաթեթ:</p>		<p>2022թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>



13	Ստորերկրյա հանքային ջրերի հորատանցքերի գույքագրման և բազային տվյալների թարմացմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովում	13.1 Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի ջրակետերի (հորատանցք, աղբյուր) գույքագրում	Հանքային ջրերի հորատանցքերի, աղբյուրների վիճակի, ջրերի ծախսի, սանիտարական վիճակի, սանիտարական պահպանության խիստ ռեժիմի գոտու առկայության, ջրերի որակի, օգտագործման պիտանելիության վերաբերյալ հավաստի տվյալների առկայություն: Ստորերկրյա հանքային ջրերի 24 հանքավայրերի շուրջ 100 գույքագրված ջրակետեր:		2023թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե՝ 12,437. 4 հազ . ՀՀ դրամ
14	Երկրաբանական տեղեկատվության արժանահավատության ապահովում	14.1 «Օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ձևերի, լրացման, բացատրագրերի կազմման և ներկայացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Օգտակար հանածոների պաշարների արդյունահանվող և մարվող պաշարների շարժի վերաբերյալ տարեկան ամբողջական տեղեկատվության առկայություն: Տարեկան շուրջ 450 ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից ներկայացվող հաշվետվություններ:		2022թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
15	Ընդերքի ողջամիտ և համ ալիր օգտագործման ապահովում ամբողջական նախագծային	15.1 «Երկրաբանական ուսումնասիրության ծրագրին ներկայացվող նվազագույն պահանջները	Օրինաչափ, միանման և միասնական իրավական նվազագույն պահանջների սահմանում օգտակար հանածոների		2022թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

	<p>փաստաթղթերի առկայության միջոցով</p>	<p>սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի հաստատում</p>	<p>արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմում կից ներկայացվող երկրաբանական ուսումնասիրության ծրագրին: Նվազագույն պարտադիր պահանջների սահմանումն ուղղված է պետական սեփականություն հանդիսացող ընդերքի արդյունավետ և համալիր օգտագործման ապահովմանը          ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրաման:</p>			
		<p>15.2 «Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները սահմանելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի հաստատում</p>	<p>Օրինաչափ, միանման և միասնական իրավական պահանջների սահմանում օգտակար հանածոների արդյունահանման իրավունք հայցելու դիմում կից ներկայացվող օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին: Նվազագույն պարտադիր պահանջների սահմանումն ուղղված է պետական սեփականություն հանդիսացող ընդերքի արդյունավետ և համալիր օգտագործման ապահովմանը</p>		<p>2022թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>

			« տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրաման:			
		15.3 «« կառավարության 2013 թվականի մարտի 28-ի N 367-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» « կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Ընդերքօգտագործման իրավունք հայցող կազմակերպությանը ներկայացվող ֆինանսական և տեխնիկական կարողությունների վերանայված պահանջներ: « կառավարության որոշում:		2022թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
16	Համայնքների նկատմամբ սոցիալական պարտավորությունների պահանջի հստակեցում	16.1 Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծում ամրագրվող սոցիալական մեղմացման հատկացումների հաշվարկման մեխանիզմի մշակում և օրենսդրական փոփոխությունների առաջարկության ներկայացում	Ընդերքօգտագործողների կողմից սոցիալական մեղմացման նպատակով համայնքներին կատարվող հատկացումների միանման և արդարացի բաշխում: Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում:		2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
17	Համագործակցության ուղղությունների զարգացման ապահովում հանքարդյունաբերության ոլորտի լիազոր մարմնի և ակադեմիայի, հանքարդյունաբերական ոլորտի ընկերությունների ասոցիացիաների,	17.1 Բարձրագույն ուսումնական հաստատությունների, Գիտությունների ազգային ակադեմիայի հետ գիտագործնական, գիտելիքի, փորձի, հմտությունների փոխանակման,	Ոլորտային իրավական ակտերի մշակման գործընթացում գիտական մտքի օգտագործում, իրավական ակտերի փոփոխություն՝ գիտատեխնիկական զարգացմանը համահունչ և ոլորտային մասնագետների,		2022թ. դեկտեմբեր 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

	միջազգային կազմակերպությունների միջև: Կրթական համակարգում ըստ պահանջարկի ոլորտային մասնագետների պատրաստման հիմնահարցերին աջակցություն:	մասնագիտական հանձնաժողովների ստեղծման և այլ ուղղություններով համագործակցության հուշագրերի կնքում	ուսանողների և ընդերքօգտագործողների միջև համագործակցության հարթակի ստեղծում:			
18	Ընդերքօգտագործման համար անհրաժեշտ հողատարածքների տրամադրման իրավական կարգավորում	18.1 «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում և ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին» Կառավարության որոշման ընդունում	Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում ընդերքօգտագործման իրավունքների տրամադրման գործընթացի հետ փոխկապակցված մեխանիզմի ներդրում Օրենսդրական փոփոխությունների փաթեթ:	Կադաստրի կոմիտե Շրջակա միջավայրի նախարարություն	2024թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
19	Ռեգիոնալ երկրաբանական բնույթի ուսումնասիրությունների նպատակով համաձայնության տրամադրման պայմանների և պահանջների իրավական կարգավորում	19.1 Երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնության հայցման և տրամադրման գործընթացի կարգավորումների նպատակով իրավական ակտերի նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնություն հայցողների համար գործընթացի հստակեցում, իրավունքի տրամադրման կարգի սահմանում, համաձայնության տրամադրման և պետական հաշվառման, ուսումնասիրության արդյունքների գրանցման և հանրապետության ընդերքի վերաբերյալ տեղեկատվության		2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

			ամբողջականության ապահովում			
20	Ընդերքի մասին տեղեկության թվային կադաստրի ստեղծում	20.1 Ընդերքօգտագործման ֆոնդի և երկրաբանական տեղեկության միասնական համակարգի ստեղծում, վարում և պահպանություն	Ընդերքի ոլորտում լիազոր մարմինն թարմացված տեղեկատվության մշտական ցանցային հասանելիություն, ինտեգրման հնարավորություն ՀՀ կադաստրի կոմիտեի ինտեգրված կադաստրի գեոպորտալի շերտերում և լիազոր մարմնի այլ բազաներում (բխում է ինտեգրված կադաստրի ստեղծման հայեցակարգից և այն ապահովող միջոցառումներից), որոնք կնպաստեն ընդերքի ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացմանը:	Կադաստրի կոմիտե	2024թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Համաշխարհային բանկի կողմից տրամադրվող դրամաշնորհային միջոցներ 500 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ հարկերը). ՀԲ աջակցությամբ Հայաստանի կառավարության կողմից իրականացվող «Հանրային հատվածի արդիականացման ծրագրի» շրջանակներում (դեռևս ենթակա է հաստատման)
21	Ընդերքօգտագործման գործող իրավունքների շրջանակներում հանքավայրերի արդյունավետ շահագործման ապահովում	21.1 «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Ընդերքօգտագործման իրավունքի ժամկետների հստակեցում՝ պայմանավորված անհաղթահարելի ուժի ծագման և դրա հետևանքների օրենսդրական կարգավորման անհրաժեշտությամբ: Օրենքի նախագիծ	Էկոնոմիկայի նախարարություն,  Շրջակա միջավայրի նախարարություն	2022թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

22	Հանքարդյունաբերության հարկման արդար և երկարաժամկետ զարգացումն ապահովող արդյունավետ մեխանիզմների ներդրում. մասնավորապես՝ ոռոյալթիների մեխանիզմի բարեփոխում	22.1 «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության շրջանակներում վերհանված՝ միասնական հարկային համակարգի բարեփոխումների համատեքստում ոռոյալթիների դրույքաչափի արդարացի հաշվարկման մեխանիզմի առկայություն	Ֆինանսների նախարարություն  Էկոնոմիկայի նախարարություն  Շրջակա միջավայրի նախարարություն	2022թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
23	Հանքահումքային վերջնական արտադրանք ստանալու ուղղությամբ գործուն միջոցառումների ձեռնարկում	23.1 Պղնձածուլարանի կառուցման ներդրումային ծրագրին աջակցություն՝ նպաստելով արտադրության թափոնների իրացման հետ կապված խնդիրների լուծմանը	Հանքարդյունաբերության ոլորտում տնտեսական արժեշղթայի փակում երկրի ներսում՝ ոլորտից առավել մեծ և կայուն եկամտաբերության ապահովում	Էկոնոմիկայի նախարարություն  Ֆինանսների նախարարություն	2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Օրենքով չարգելված միջոցներ նախնական 1,5 մլրդ դոլարին համարժեք ՀՀ դրամ
24	Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում	24.1 Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր մոդելին ամբողջական անցում	Համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացում, պատաստախանաավության գործիքների ներդրում:	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ԱՄՆ ՄԶԳ աջակցության շրջանակներում շուրջ 8,86 մլն դոլար
25	Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորում	25.1 ԵԱՏՄ էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաները կարգավորող հիմնական տասը	Կարգավորող փաստաթղթերի մշակումը և ընդունումը կնպաստի էլեկտրաէներգետիկական և	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)	2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		<p>փաստաթղթերի մշակում և ընդունում. աշխատանքների իրականացում</p>	<p>գազի ընդհանուր շուկաների գործարկմանը</p>			
		<p>25.1.1 Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016թ. դեկտեմբերի 26-ի թիվ 20 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրա- էներգետիկական շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով և 2018թ. դեկտեմբերի 6-ի թիվ 18 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքների իրականացում</p>			<p>2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	
		<p>25.1.2 Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016թ. դեկտեմբերի 26-ի թիվ 20 որոշմամբ</p>			<p>2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	

		<p>հաստատված Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկակա ն շուկայի ձևավորման ծրագրով և միջոցա- ռումների պլանով և 2018թ. դեկտեմբերի 6-ի թիվ 18 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքների իրականացում</p>				
		<p>25.1.3 Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016թ. դեկտեմբերի 26-ի թիվ 20 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկակա ն շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով և 2018թ.</p>			<p>2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	



		<p>դեկտեմբերի 6-ի թիվ 18 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքների իրականացում</p>				
26.	<p>Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգում և արդիականացում</p>	<p>26.1 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի և ավարտական փուլի աշխատանքները</p> <p>26.1.1 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի աշխատանքները</p> <p>26.1.2 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի աշխատանքները</p>	<p>Կապահովվի Հայկական ԱԷԿ-ի արդյունավետ և անվտանգ աշխատանքը, ինչպես նաև շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում առաքվող հզորությունը կավելանա առնվազն 10%-ով</p>		<p>2022-2025 թվականներ</p> <p>2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե՝ ՀՀ կառավարության 11.06.2020թ. № 953-Ն որոշում, որի համաձայն՝ «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ին 2020-2025թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից տրամադրվելու է 63,2 մլրդ ՀՀ դրամ գումարի չափով բյուջետային վարկ, որից՝ 2020թ.՝ 18,7 մլրդ, 2021թ.՝ 25 մլրդ, 2023թ.՝ 4,5 մլրդ, 2024թ.՝ 7 մլրդ, 2025թ.՝ 8 մլրդ ՀՀ դրամ</p>

		26.1. 3 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի և ավարտական փուլի աշխատանքները			2025 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
27.	Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի մշակում	27.1 Մշակել ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրը և դրա իրականացումն ապահովող ծրագիր-ժամանակացույցը	ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցմամբ կապահովվի ՀՀ էներգետիկ անկախությունն ու կբարձրացվի ՀՀ էներգահամակարգի անվտանգությունը, կպահպանվի ՀՀ էներգահամակարգի դիվերսիֆիկացումը:		2026 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		27.1.1 Նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման համար պահնջվող ելակետային տվյալների հավաքագրում և ամփոփում			2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	
		27.1.2 Նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման մշակում			2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	
		27.1.3 Նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման աշխատանքների վերջնականացում, ծրագրի և ժամանակացույցի մշակման			2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	

		աշխատանքների մեկնարկ				
		27.1.4 Ծրագրի և ժամանակացույցի մշակման աշխատանքների վերջնականացում և հաստատում			2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	
28.	Էներգետիկ ենթակառուցվածքների վերազինում, արդիականացում, առաջատար տեխնոլոգիաներով հագեցման աշխատանքներ	28.1 Իրականացնել «Լիճք» 220/110/35 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները	Ենթակայանների վերակառուցմամբ կբարձրանա էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիությունը		2022թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	«ԲԷՑ» ՓԲԸ-ի սեփական միջոցների հաշվին 8,86 մլն դոլար
		28.2 Իրականացնել «Չարենցավան-3» 110 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները			2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի վարկային համաձայնագրով տրամադրված 36 մլն ԱՄՆ դոլարի շրջանակներում
		28.3 Իրականացնել «Ջովունի» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները			2023-2024 թվականներ	
		28.3.1 Իրականացնել «Ջովունի» 220 կՎ լարման ենթակայանի վերակառուցման աշխատանքները			2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	

		28.3.2 Իրականացնել «Ջովուինի» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները			2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
		28.4 Իրականացնել «Արարատ-2» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները			2023-2024 թվականներ	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի վարկային համաձայնագրով տրամադրված 39,86 մլն ԱՄՆ դոլարի շրջանակներում
		28.4.1 Իրականացնել «Արարատ-2» 220 կՎ լարման ենթակայանի վերակառուցման աշխատանքները			2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
		28.4.2 Իրականացնել «Արարատ-2» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները			2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
29.	Հյուսիս-հարավ էլեկտրաէներգետիկական միջանցք (Հայաստան-Իրան-Վրաստան-Ռուսաստան) քառակողմ նախաձեռնության հետ կապված աշխատանքների իրականացում	29.1 Տեխնիկական խնդիրների կարգավորում, համապատասխան պայմանագրերի կնքում	Կնպաստի տարածաշրջանային զարգացման փոխհոսքերի ավելացմանը:		2026թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	
		29.1.1 Հյուսիս-հարավ էլեկտրաէներգետիկական միջանցք նախաձեռնության տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման				2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ

		<p>նպատակով ելակետային տվյալների հավաքագրում և փոխանակում չորս երկրների միջև:</p> <p>29.1.2 Տեխնիկատնտեսական հիմնավորման մշակում</p> <p>29.1.3 Տեխնիկական և իրավական հարցերի համադրում և ներդաշնակեցում</p> <p>29.1.4 Կողմերի միջև համապատասխան պայմանագրերի կնքում</p>			<p>2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p> <p>2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p> <p>2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	
30.	Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի և ենթակայանի կառուցում	30.1 Հենասյուների, սարքավորումների ներկրման և ենթակայանի կառուցման, հենասյուների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացման ավարտ	Նոր էլեկտրահաղորդման գծի և ենթակայանի կառուցմամբ զգալիորեն կավելանա թողունակությունը: Արդյունքում Իրան-Հայաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 300 ՄՎտ-ից կհասցվի 1000-1200 ՄՎտ-ի		2023-2024 թվականներ	Վարկային միջոցներ, (ֆինանսավորող՝ Իրանի արտահանման զարգացման բանկ (ԻԱԶԲ) և Սանիր Ինտերնեյշնլ ՖՁԵ ընկերություն) Առկա պլանավորված ֆինանսավորման չափ.

		<p>30.1.1 Հենասյունների, սարքավորումների ներկրման և ենթակայանի կառուցման, հենասյունների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյունների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացում</p>			<p>2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ծրագրի արժեքը կազմում է 107,9 մլն եվրո</p>
		<p>30.1.2 Հենասյունների, սարքավորումների ներկրման և ենթակայանի կառուցման, հենասյունների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյունների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացման ավարտ</p>			<p>2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	
		<p>30.2 Շահագործման հանձնել էլեկտրահաղորդման օդային գիծը և ենթակայանը</p>			<p>2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	

31.	Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց (Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման գիծ/ենթակայաններ) ծրագրի իրականացում	31.1 220/400 կՎ ենթակայանի և 400 կՎ օդային գծի, ինչպես նաև բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանի կառուցման մրցութային գործընթացի մեկնարկ	Նոր էլեկտրահաղորդման գծերի կառուցմամբ կխթանվի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային համագործակցության զարգացումը: Առաջին փուլի արդյունքում Հայաստան-Վրաստան էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 200 ՄՎտ-ից կհասցվի 350 ՄՎտ-ի: 2023թ. նախատեսվում է ընտրել Միջոցառման իրականացման գլխավոր կապալառուներ, կատարել կանխավճարներ:		2021թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Վարկային և դրամաշնորհային միջոցներ (Գերմանիայի զարգացման վարկերի KfW բանկ, Եվրոպական Ներդրումային Բանկ, Եվրամիության Հանձնաժողովի Հարևանության Ներդրումային Գործիքի (“NIF”) շրջանակներում) Առկա պլանավորված ֆինանսավորման չափը՝ կնքվել են 188,75 մլն եվրոյի վարկային և դրամաշնորհային համաձայնագրեր, այդ թվում՝ վարկ՝ 178,2 մլն եվրո, դրամաշնորհ՝ 10,55 մլն եվրո
		31.2 220/400 կՎ ենթակայանի և 400 կՎ օդային գծի կառուցման, ինչպես նաև բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանի մեկնարկ և ավարտ			2022-2025 թվականներ	
32.	Վերականգնվող էներգիայի աղբյուրների արդյունավետ օգտագործում և զարգացման խթանում	32.1 Մասրիկ-1 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրական կայանի կառուցում	Էներգետիկ անկախության մակարդակի բարձրացում՝ մինչև 2030թ. արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը հասցնելով 15% կամ 1000ՄՎտ:		2022 թվականի հուլիսի 3-րդ տասնօրյակ	Մասնավոր ներդրումներ  Կանխատեսվող ֆինանսավորման

						չափը՝ շուրջ 60 մլն դոլար
		32.2 120 ՄՎտ հզորությամբ թվով 5 արևային ֆոտովոլտային էլեկտրական կայանների կառուցման ծրագրերի իրականացում			2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Մասնավոր ներդրումներ և օրենքով չարգելվող այլ միջոցներ  Կանխատեսվող ֆինանսավորման չափը՝ շուրջ 100-150 մլն դոլար
		32.2.1 Ծրագրի իրականացման նպատակով անհրաժեշտ հողատարածքների հստակեցում և ձեռք բերում			2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	
		32.2.2 Մրցութային փաթեթների նախապատրաստում և վերջնականացում, մրցույթների հայտարարում			2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	
		32.3 «Այգ-1 200 ՄՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում			2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Մասնավոր ներդրումներ և օրենքով չարգելվող այլ միջոցներ
		32.3.1 Ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ			2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Կանխատեսվող ֆինանսավորման չափը՝ շուրջ 170 մլն դոլար



	<p>քննության անցկացման լիազորված մարմնի ինստիտուցիոնալ կարողությունները, որը կիրականացնի պատահարների և լուրջ միջադեպերի՝ միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական քննություն և կլինի անկախ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեից:</p>	<p>միջադեպերի քննության մարմնի՝ միջազգային ստանդարտներին համապատասխան գործառույթների պատշաճ իրականացում: Նախատեսված է միջազգային քաղաքացիական ավիացիայի կոնվենցիայի 13-րդ հավելվածով</p>	<p>Քաղաքացիական ավիացիայի կոմիտեից անկախ լիազորված մարմին ունենալը սահմանվում է մի շարք միջազգային համաձայնագրերով, և ապահովում է թռիչքային անվտանգության հարցերում առկա միտումների վերլուծությունը և ավիացիոն գործունեություն իրականացնողներին հետագա պատահարների կանխարգելման նպատակով համապատասխան տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև բացառում է շահերի բախումը պատահարների և լուրջ միջադեպերի մասնագիտական քննության ժամանակ և անվտանգության վերահսկողության համընդհանուր աուդիտի ծրագրի շարունակական մոնիթորինգի մոտեցման (USOAP-CMA) շրջանակներում:</p>			<p>ենթակառուցվածքների նախարարության միջոցների հաշվին</p>
76.	<p>Ուղևորահոսքերի ծավալների բաժրացում</p>	<p>76.1 Օդանավակայանի Կոնցեսիոների հետ իրականացնել շարունակական աշխատանքներ՝ սպասարկման որակի բարձրացման, մատուցվող</p>	<p>Օդանավակայանը դարձնել ավիաընկերությունների և տուրիստական կազմակերպությունների համար ավելի գրավիչ և մատչելի: Այդ դեպքում ակնկալվում է, որ կբարձրանան ուղևորահոսքերի ծավալները</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p>	<p>2025 թվականի հուլիսի 3--րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

		ծառայությունների սակագների նվազեցման և այլ խնդիրների լուծման ուղղությամբ				
77.	Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծում, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավում և սպառողների պահանջների բավարարում	77.1 Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում գործող վարձակալության պայմանագրով նախատեսված վարձատուի ու վարձակալի իրավունքների և պարտավորությունների ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացում	Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների շարունակական բարելավում՝ հիմնական կատարողական ցուցանիշների (ջրամատակարարման շարունակականություն, ջրի որակ, չհաշվառվող ջուր, բաժանորդների բավարարվածություն և այլն, նորմալ գործող ստանդարտներ) ապահովում: Վարձակալության պայմանագրով յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափով բարելավում:		2021-2026 թվականներ	Վարձակալության պայմանագրով նախատեսված միջոցներ
		77.2 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման գործընթացի կառավարմանն ուղղված բարեփոխումների (այդ	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող բնակավայրերում հուսալի, կայուն և անվտանգ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների ապահովում, հիմնական կատարողական ցուցանիշների սահմանում և ապահովում:		2021-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ Ըստ համապատասխան ներդրումների առկայության

	թվում ինստիտուցիոնալ) իրականացում՝ այն ներառելով պետական լիազոր մարմնի գործառույթում	2023թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվում է Արագածոտնի և Տավուշի մարզերի 8 բնակավայրերում իրականացնել ջրամատակարարման համակարգերի կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում և շինարարական աշխատանքների իրականացում:			
	77.3 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացում՝ ծառայությունների պատշաճ մակարդակի ապահովման համար	Ներդրումների իրականացման արդյունքում Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների բարելավում: Յուրաքանչյուր տարի սուբվենցիոն ծրագրային հայտերով իրականացվող աշխատանքների արդյունքներով կբարելավվեն ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները:		2021-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջե, համայնքների բյուջեներ և օրենքով չարգելված այլ միջոցներ
	77.4 «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման)	Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման գործընթացի կանոնակարգում և բարելավում		2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Օրենքով չարգելված այլ միջոցներ

		<p>ծառայությունների մատուցման համար սահմանված կարգով լիցենզիայի տրամադրում և այդ բնագավառում գործունեության վերսկսման անհրաժեշտ պայմանների ստեղծում</p>				
		<p>77.5 Ջրի որակը պետական լիազոր մարմնի կողմից հաստատված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ բնակավայրերում խմելու ջրի որակի մշտական մոնիթորինգի իրականացման գործուն մեխանիզմի սահմանում</p>	<p>Սպառողներին պահանջվող որակի խմելու ջրով ապահովում:      Ջրային կոմիտեն՝ ամսական կտրվածքով ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվությունը ուղարկում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը՝ իր սպասարկման տարածքում գտնվող բնակավայրերում խմելու ջրի որակի մոնիթորինգի արդյունքում արձանագրված շեղումների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով:</p>	<p>Առողջապահության նախարարություն</p>	<p>2021-2026 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

		<p>77.6 «Աերացիա» կեղտաջրերի նոր մաքրման կայանի (ԿՄԿ) շինարարության կապալի միջազգային պայմանագրի ավարտի ապահովում, գույքի ձևավորումից հետո կայանի գործարկում և շահագործման հանձնում, ԿՄԿ-ի վերակառուցման ծրագրի հետագա փուլերի համար նախապատրաստական աշխատանքների իրականացում</p>	<p>Երևան, Աբովյան, Նոր Հաճրն, Արզնի և այլ բնակավայրերից արտահոսող կեղտաջրերի մեխանիկական մաքրման ապահովում</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
		<p>77.7 Սևանա լճի ավազանի քաղաքային 3 բնակավայրերում գործող ԿՄԿ-ներից արտանետվող կեղտաջրերի ամբողջական մաքրման ապահովման, տարածաշրջանի գյուղական բնակավայրերի կոյուղացման և տարածքում գործող տնտեսավարող սուբյեկտների կողմից կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների և</p>	<p>Ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների բարելավում, Սևանա լիճ արտահոսող կեղտաջրերի ամբողջական մաքրում: Եվրամիության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից համատեղ ֆինանսավորվող «EU4Sevan» ծրագրի շրջանակներում մասնագիտացված խորհրդատվական ընկերության ներկայացրած Սևանա լճի շրջակայքում</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>2024-2026 թվականներ</p>	<p>Օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

		<p>սարքավորումների տեղադրման ուղղությամբ աշխատանքների իրականացում</p>	<p>կոյուղաջրերի ապակենտրոնացված մաքրման պիլոտային տարբերակների տեխնիկատնտեսական հիմնավորման զեկույց: Գավառի ԿՄԿ-ի համար պիլոտային ծրագրի շրջանակներում նախատեսվում է կայանը համալրել կեղտաջրերի պարզեցման HUBER ֆիրմայի կառուցվածքով, որն ավելի արդյունավետ կդարձնի կեղտաջրերի մեխանիկական մաքրման գործընթացը:</p>			
		<p>77.8 Պետական սեփականություն հանդիսացող՝ գործող կեղտաջրի մաքրման կայաններից արտահոսող մաքրված կեղտաջրի որակի մշտադիտարկման համակարգի ստեղծում</p>	<p>Ջրային ավազաններում և այլ բնական տարածքներում չմաքրված կեղտաջրերի արտահոսքի հետևանքով աղտոտման վտանգի կանխարգելում</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>2026 թվական</p>	<p>ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
		<p>77.9. Կոյուղու ցանցին չմիացած տնտեսավարողների օբյեկտներում կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների տեղադրման և սպասարկման մասնագիտացված կառույցների ստեղծում</p>	<p>Բնակավայրերում առաջացող կեղտաջրերի մաքրման և վերաօգտագործման (հնարավորության դեպքում) ապահովում, ջրահեռացման ծառայությունների ամբողջական իրականացում</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>2024-2026 թվականներ</p>	<p>Օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

		<p>77.10 «Կեղտաջրերի հեռացման բնագավառի զարգացման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն</p>	<p>Հանրապետության բնակավայրերում ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների հասանելիության ապահովում՝ կեղտաջրերի ամբողջական մաքրման և դրանց վերաօգտագործման հնարավորությունների ստեղծում</p>		<p>2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
		<p>77.11 Հայաստանի Հանրապետության 6 մարզերի 11 քաղաքներում և 41 գյուղական բնակավայրերում, այդ թվում՝ Գյումրի, Վանաձոր և Արմավիր քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքների իրականացում</p>	<p>Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների շարունակական բարելավում՝ համապատասխան վարկային համաձայնագրով սահմանված ցուցանիշներին համապատասխան: Գերմանական KfW բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի 3-րդ փուլի շրջանակներում իրականացվող աշխատանքներ՝ նորոգվող ջրագծեր՝ 163.1 կմ, նորոգվող կոյուղագծեր՝ 6.5 կմ, նորոգվող տնային միացումներ՝ 5520 հատ: Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող</p>		<p>2023թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետբյուջեի համաֆինանսավորմամբ Գերմանական KfW բանկի, Եվրոպական ներդրումային բանկի Եվրամիություն/ՀՆԾ (Հարևանության ներդրումային ծրագիր) միջոցների հաշվին</p>



			<p>ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի 3-րդ փուլի շրջանակներում իրականացվող աշխատանքներ՝ նորոգվող ջրագծեր՝ 87.8 կմ նորոգվող կոյուղագծեր՝ 3.5 կմ, նորոգվող տնային միացումներ՝ 2972 հատ:</p>			
		<p>77.12 Վարձակալի կողմից չսպասարկվող 4 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում և շահագործման ապահովում</p>	<p>Համապատասխան վարկային համաձայնագրով սահմանված ցուցանիշներին համապատասխան ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների շարունակական բարելավում</p>		<p>2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետբյուջեի համաֆինանսավորմամբ Գերմանական KfW բանկի, Եվրոպական ներդրումային բանկի Եվրամիություն/ՀՆԾ (Հարևանության ներդրումային ծրագիր) միջոցների հաշվին</p>
		<p>77.13 Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում</p>	<p>Ջրամատակարարման ծառայությունների բարելավում:</p>		<p>2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետբյուջեի համաֆինանսավորմամբ Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի Եվրամիություն/ ՀՆԾ (Հարևանության ներդրումային</p>

						<p>ծրագիր) միջոցների հաշվին  Ընդհանուր արժեքը՝ 27561.1 հազ.դոլար (այդ թվում՝ 14000.0 հազ.դոլար վարկ և 7665.0 հազ դոլար դրամաշնորհ, 5896.1 հազ դոլար համաֆինանսավորմամբ)</p>
78.	<p>Ոռոգման ոլորտում առկա խնդիրները լուծելու և վիճակը բարելավելու նպատակով նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ</p>	<p>78.1 «Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագրի» մշակում և իրականացում</p>	<p>Ոռոգման համակարգի զարգացման հեռանկարային ուղիների ամրագրում:  Ակնկալվում է հայեցակարգային մակարդակում սահմանել ոռոգման համակարգերի ինստիտուցիոնալ և կազմակերպչական զարգացման տեսլականը, որի հիման վրա հետագայում կմշակվի ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագիրը: Այն ուղեցուցային նշանակություն կունենա երկրի մակարդակով ոռոգման համակարգերի կառավարման, պահպանության և շահագործման ջրամատակարար կազմակերպությունների</p>	<p>Խորհրդատվական կազմակերպություն</p>	<p>2022-2023 թվականներ</p>	<p>Օրենքով չարգելված այլ միջոցներ, ՀՀ պետական բյուջե համաֆինանսավորման մասով</p>

			համար՝ «Ջրագ» ՓԲ ընկերության և 15 Ջրօգտագործողների ընկերությունների համար:			
	78.2 «Ոռոգման ջրի մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում	Ոռոգման համակարգի բնագավում ներառված մարմինների իրավասությունների և պարտականությունների հստակեցում և օրենսդրությամբ ամրագրում	Շրջակա միջավայրի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, ՏԻՄ-եր (համաձայնությամբ), Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) Խորհրդատվական կազմակերպություն	2024-2025 թվականներ	Օրենքով չարգելված այլ միջոցներ, ՀՀ պետական բյուջե համաֆինանսավորման մասով	
	78.3 «Ջրամբարաշինության և պաշարների կառավարման հայեցակարգային հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում	Մակերևութային ջրերի հոսքի կառավարման և ամբարման հայեցակարգային մոտեցումներ, որոնք հնարավորություն կտան բարելավել ջրային պաշարների կառավարումը: Ակնկալվում է հայեցակարգային մակարդակում սահմանել մակրեևութային ջրերի հոսքի կառավարման և ամբարման սկզբունքները, գործելակերպերն ու մեխանիզմները՝ հաշվի առնելով ժամանակակից	Էկոնոմիկայի նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն, Խորհրդատվական կազմակերպություն	2024 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Օրենքով չարգելված այլ միջոցներ	

			<p>մարտահրավերներն ու արդիական տեխնոլոգիաները: Հայեցակարգային մոտեցումները կկիրառվեն շուրջ 80 գոյություն ունեցող (այդ թվում նաև չհաճադործվող) ջրամբարների, ինչպես նաև պլանավորված շուրջ 15 ջրամբարների հետագա պահպանության, կառավարման արդյունավետության և շահագործման գործընթացներում: Հայեցակարգով կնախատեսվի ստեղծել նախարարական մակարդակով միջգերատեսչական աշխատանքային խումբ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, էկոնոմիկայի և շրջակա միջավայրի նախարարությունների համանախագահության սկզբունքով:</p>			
79.	Ոռոգման համակարգերը շարունակաբար արդի ջրաչափական սարքավորումներով կահավորում և տվյալների հավաքման ու վերահսկողական համակարգով հագեցում	79.1. Հիդրոտեխնիկական և կառույցների տեխնիկական, վիճակի գնահատում և վերահսկելիության բարձրացում	Մատակարարված ոռոգման ջրի հստակ հաշվառում իրականացնելու նպատակով ջրամատակարարման համակարգերում ջրառի կետերը, մայր ջրատարներից մինչև ներտնտեսային ցանցի բաժանարար հանգույցները		2021-2023 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով Ընդհանուր արժեքը՝ 2,646,657.8 հազ. դրամ: 2021թ. նախատեսված է

			<p>ժամանակակից ջրաչափական սարքերով հագեցում, որոնք կմիացվեն SCADA համակարգին: 2023թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվում է տեղադրել 748 հատ ջրաչափական սարքավորումներ:</p>			<p>787,000.0 հազ.դրամ, 2022թ.` 929,828.9 հազ.դրամ 2023թ.` 908,086.7 հազ.դրամ</p>
		<p>79.2.Տեխնիկական, տնտեսական, կազմակերպական, ֆինանսական և իրավական բնույթի փոխկապակցված համալիր միջոցառումների իրականացման նպատակով էլեկտրոնային հարթակի ներդրում</p>	<p>Էլ.հարթակի ստեղծմամբ կենտրոնացված, օպերատիվ էլ.կառավարում: Ակնկալվում է ստեղծել էլեկտրոնային կառավարման սերվերային համակարգ՝ համապատասխան տեխնիկական և կադրային ռեսուրսներով համալրված, ապահովելու նպատակով 2021-2022թթ-երին տեղադրված շուրջ 1400, ինչպես նաև 2023թ-ի համար նախատեսված 748 հատ ջրաչափական սարքավորումների կենտրոնացված կառավարման նպատակով:</p>		<p>2023-2024 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով</p>
80.	<p>Ոռոգման համակարգերում շահագործման պայմանների տեխնիկական վիճակի գնահատում և բարելավում</p>	<p>80.1.Իրականացնել համատարած տեխնիկական աուդիտ և աուդիտի արդյունքներով մշակել և իրականացնել կապիտալ ներդրումների մոտեցումներ և չափորոշիչներ</p>	<p>Կապիտալ ներդրումների համար սահմանված համապատասխան չափորոշիչներ Եվրասիական բանկի բաղադրիչ 4-ի շրջանակներում Ոռոգման համակարգերի տեխնիկական վիճակի</p>		<p>2022-2024 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով</p>

			գնահատման չափորոշիչների սահմանում 2023 թվականի դեկտեմբերի 20: Կապիտալ ներդրումների համար սահմանված համապատասխան չափորոշիչների սահմանում՝ 2024 թվականի դեկտեմբերի 20:			
		80.2. Իրականացնել ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված կապիտալ ներդրումներ և ներդրումային քաղաքականություն	Ոռոգման համակարգերի վերականգնում, կորուստների նվազեցում և հետագա երկարաժամկետ պահպանում: 2023թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված թվով 5 օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների իրականացում: 2023թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված թվով 5 օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների իրականացում:		2022-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով
81.	Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր	81.1. Իրականացնել ոռոգման համակարգերի բարելավում՝ միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում	Մինչև 2023 թվականը (սկսած 2018 թվականից) «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրով կառուցվել է 7 ինքնահոս համակարգ՝ 37,4 կմ ընդհանուր երկարությամբ, վերականգնվել	Կադաստրի կոմիտե	2022-2023 թվականներ	ՀՀ պետական բյուջեով վարկային և ՀՀ համաֆինանսավորման միջոցներ Եվրասիական զարգացման բանկ Ծրագրի ընդհանուր արժեքը 48,000.0

			<p>են 4 մայր ջրանցքների 8,8 կմ ընդհանուր երկարությամբ ծայրահեղ քայքայված և վթարային հատվածները, հինգ մարզերի 105 բնակավայրերում վերականգնվել են շուրջ 262,1 կմ երկարությամբ ներտնտեսային համակարգեր, մինչև 2023 թվականի ոռոգման սեզոնի մեկնարկը նախատեսվում է ավարտին հասցնել 23 երկրորդ կարգի ջրանցքների 62,6 կմ ընդհանուր երկարությամբ քայքայված և վթարային հատվածների վերականգնման աշխատանքները (առ այսօր վերականգնվել են 56,2 կմ հատվածներ): Իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից դուրս է եկել 8 պոմպակայան, տարեկան կտնտեսվի 11.5 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա, ոռոգելի հողատարածքները կավելանան 10500 հեկտարով, կբարձրանա ջրապահովվածության մակարդակը, վերականգնվող հատվածներում կորուստներն աստիճանաբար կկրճատվեն շուրջ 7%-ով, և այդ հողատարածքներում կիրականացվի կայուն,</p>			<p>հազ.ԱՄՆ դոլար (այդ թվում՝ վարկային միջոցներ 40,000.0 հազ.ԱՄՆ դոլար և 8,000.0 հազ.ԱՄՆ դոլար համաֆինանսավորում</p>
--	--	--	--	--	--	---

			<p>անխափան  ջրամատակարարում:  2022 թվականի սեպտեմբերից  մեկնարկել են երկրորդ կարգի  27 ջրանցքների շուրջ 65,8 կմ  ընդհանուր երկարությամբ  վթարային հատվածների և  շուրջ 16,1 կմ ընդհանուր  երկարությամբ ներտնտեսային  ոռոգման 3 համակարգերի  վերականգնման/կառուցման  լրացուցիչ աշխատանքներ:  Մինչև 2023-2025  թվականներին նախատեսվում  է վերականգնել երկրորդ  կարգի ջրանցքների շուրջ 65,8  կմ հատվածներ և 16,1 կմ  ներտնտեսային համակարգ:  Լրացուցիչ աշխատանքների  իրականացման արդյունքում  ակնկալվում է՝ տարեկան շուրջ  3.6 մլն կՎտ/ժ  էլեկտրաէներգիայի տնտեսում,  ոռոգելի հողատարածքների  ավելացում շուրջ 3000  հեկտարով:</p>			
82.	2021-2026 թվականների ընթացքում Ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբարներ) ծրագրերի նախապատրաստում և իրականացում	82.1.«Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 1. Կապսի ջրամբարի կառուցում	Մակերևութային ջրերի հոսքի կառավարում և ամբարում: Ոռոգման ջրամատակարարման մեջ ինքնահոսի կշռի մեծացում: Ջրածոր համայնքի վերաբնակեցվող ընտանիքների, այդ թվում՝		2021-2026 թվականներ (ծրագիրը մեկնարկել է 2017 թվականին և կավարտվի	«Այետական բյուեջով վարկային և « համաֆինանսավորմ ան միջոցներ Գերմանիայի զարգացման վարկերի բանկ



			<p>համայնքում աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի շահառու ճանաչված 28 ընտանիքի բնակարանային խնդրի լուծումը:  2023թ. կմեկնարկեն 34 մ պատվարի բարձրությամբ Կապսի ջրամբարի 25մլն մ3 ծավալով կառուցման աշխատանքները:  Այնուհետև ջրամբարի ծավալը ակնկալվում է հասցնել 60մլն մ<sup>3</sup>, որի դեպքում անհրաժեշտ կլինի պատվարը բարձրացնել ևս 18մ-ով՝ հասցնելով այն 52մ բարձրության: Այս դեպքում շինաշխատանքները կավարտվեն 2027թ-ի վերջին:  Նախատեսվում է 2023-ին I եռամսյակում սկսել Ամասիա համայնքի Ջրածոր բնակավայրի ազդակիր անձանց/տնային տնտեսությունների փոխհատուցման գործընթացը և ավարտել 2025 թվականին</p>		<p>2027 թվականին)</p>	<p>Ծրագրի ընդհանուր արժեքը 62400.0 հազ.Եվրո (այդ թվում՝ վարկային միջոցներ 50000.0 հազ.Եվրո, 2000.0 հազ. Եվրո դրամաշնորհ և 10400.0 հազ.Եվրո համաֆինանսավորում</p>
--	--	--	--	--	-----------------------	--

		<p>82.2. «Ախորյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 2. ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում</p>	<p>Ոռոգման ջրի տեղափոխում, Ջրօտագործողներին մատակարարում Փուլ 2-ի ֆինանսական միջոցները Կապսի պատվարի շինարարությանն ուղղելու նպատակով գերմանական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Վերակառուցման վարկերի բանկի (KFW) կողմից 2023թ. կմշակվի համաձայնագրի փոփոխության նախնական տարբերակը, որը կներկայացվի հայկական կողմի դիտարկմանը:</p>		<p>2021-2024 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջեով վարկային և ՀՀ համաֆինանսավորման միջոցներ Գերմանիայի զարգացման վարկերի բանկ Ծրագրի ընդհանուր արժեքն է 22200.0 հազ. Եվրո (այդ թվում՝ վարկային միջոցներ 18500.0 հազ. Եվրո և 3700 հազ. Եվրո համաֆինանսավորում)</p>
		<p>82.3. Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների, ջրի փոխադրող և ոռոգման համակարգի շինարարական աշխատանքների իրականացում: Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծային աշխատանքների ավարտ</p>	<p>Մակերևութային ջրերի հոսքի կառավարում: Ոռոգման ջրամատակարարման մեջ ինքնահոսի կշռի մեծացում Նախատեսվում է 2023 թվականի ընթացքում ավարտել Վեդի պատվարի և օժանդակ կառուցվածքների կառուցման (հիմնական պատվարի բարձրությունը- 85մ, իսկ երկրորդ պատվարի բարձրությունը- 17մ) աշխատանքները:  Ծրագրի իրականացման շրջանակներում 2023 թվականին կմեկնարկեն և մինչև 2024 թվականի</p>		<p>2021-2025 թվականներ  (ծրագիրը մեկնարկել է 2017 թվականին)</p>	<p>ՀՀ պետական բյուջեով վարկային և ՀՀ համաֆինանսավորման միջոցներ Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցություն Ծրագրի ընդհանուր արժեքն է՝ 90003.63 հազ. եվրո (այդ թվում՝ վարկային միջոցներ՝ 75003.63 հազ. եվրո և 15000.0 հազ. եվրո համաֆինանսավորում)</p>

			դեկտեմբերին կավարտվեն Վեդի ջրամբարի իշխման գոտում գտնվող 450-500հա փորձնական հողատարածքների ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցման աշխատանքները			
83.	Ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի ապահովման հնարավորությունների ստեղծում, ինքնահոս համակարգերի և նոր ջրամբարների նախագծում և շինարարություն	83.1.Գեղարքունիքի մարզում Արգիճիի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Ծավալը 6,5մլն.մ <sup>3</sup> ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանում կառուցվող ջրամբարի իշխման տարածքում գտնվող և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող 268 հա հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով: Արդյունքում կխնայվի շուրջ 1 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա, կավելանան նաև շուրջ 3122 հա հողատարածքներ, որոնց տարեկան ջրապահանջարկը կկազմի շուրջ 9,3 մլն մ <sup>3</sup> ջուր: 2023 թվականից կմեկնարկեն նախագծային աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի կառուցման ծրագրի իրականացման հետագա ընթացքի համար:	Էկոնոմիկայի նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)	2021-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով
		83.2.Գեղարքունիքի մարզում Աստղածորի ջրամբարի կառուցման նախագծային	Ծավալը 1,25մլն.մ <sup>3</sup> ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանում կառուցվող ջրամբարի իշխման տարածքում գտնվող և		2021-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով

		<p>փաստաթղթերի կազմում և կառուցում</p>	<p>ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող 360 հա հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով: Արդյունքում կխնայվի շուրջ 1,9 մլն կվտ/ժ էլեկտրոգիա: Ջրամբարի կառուցմամբ կավելանան նաև շուրջ 1080 հա հողատարածքներ, որոնց տարեկան ջրապահանջարկը կկազմի շուրջ 3,3 մլն մ<sup>3</sup> ջուր: 2023 թվականից կմեկնարկեն նախագծային աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի կառուցման ծրագրի իրականացման հետագա ընթացքի համար:</p>			
		<p>83.3.Վայոց ձորի մարզում Ելփինի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում</p>	<p>Ծավալը 0.8 մլն.մ<sup>3</sup> ՀՀ Վայոց ձորի մարզում կառուցվող ջրամբարի կառուցման արդյունքում կապահովվի 400 հա հողատարածքների ջրապահովվածությունը և կտնտեսվի շուրջ 0.5 մլն կվտ/ժ էլեկտրոգիա: 2023 թվականից, ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կմեկնարկեն նախագծային աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի կառուցման ծրագրի</p>		<p>2022-2026 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով</p>

			իրականացման հետագա ընթացքի համար:			
	83.4.Վայոց ձորի Խնձորուտի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Ծավալը 9.0մլն.մ <sup>3</sup> ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում կառուցվող ջրամբարի իշխման տարածքում գտնվող և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող 25 հա հողատարածքները կոռոզվեն ինքնահոս եղանակով, արդյունքում կխնայվի շուրջ 0,025 մլն կվտ/ժ էլեկտրոէներգիա: Ջրամբարի կառուցմամբ կավելանան նաև շուրջ 1500 հա հողատարածքներ, որոնց տարեկան ջրապահանջարկը կկազմի շուրջ 9,0 մլն մ <sup>3</sup> ջուր: Նախատեսվում է 2023 թվականից մեկնարկել տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի կառուցման ծրագրի իրականացման հետագա ընթացքի համար:		2022-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով	
	83.5.Վայոց ձորի Վերնաշենի ջրամբարի կառուցման նախագծային	Ծավալը 3.5մլն.մ <sup>3</sup> ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում ջրամբարի կառուցմամբ կավելանան նաև շուրջ 800 հա		2022-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով	

	փաստաթղթերի կազմում և կառուցում	հողատարածքներ, որոնց տարեկան ջրապահանջարկը կկազմի շուրջ 3.5 մլն մ <sup>3</sup> ջուր: Նախատեսվում է 2023 թվականից մեկնարկել տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի կառուցման ծրագրի իրականացման հետագա ընթացի համար:			
	83.6. Վայոց ձորի Իսաչիկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Ծավալը 0.55մլն.մ3 ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի տարածաշրջանում կառուցվող ջրամբարի իշխման տարածքում գտնվող և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող 163 հա հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով, արդյունքում կխնայվի շուրջ 1,2 մլն կվտ/ժ էլեկտրոէներգիա: 2023թ. նախատեսվում է իրականացվել ջրամբարի նախագծման աշխատանքներ:		2022-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով
	83.7. Վայոց ձորի մարզում Գետիկ վանքի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	ՀՀ Վայոց ձորի մարզում կառուցվող ջրամբարի ծավալը 35 մլն.մ3: 2023 թվականին ջրամբարի նախագծման և կառուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար հիմքերի ստեղծում:		2022-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով

		<p>83.8. Վայոց ձորի մարզում Զիրակի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում</p>	<p>ՀՀ Վայոց ձորի մարզում կառուցվող ջրամբարի ծավալը 25 մլն.մ<sup>3</sup>: 2023 թվականին ջրամբարի նախագծման և կառուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար հիմքերի ստեղծում:</p>		<p>2022-2026 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով</p>
		<p>83.9. Արմավիրի մարզի Քասախի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում</p>	<p>Ծավալը 11.5մլն.մ<sup>3</sup> ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանում կառուցվող ջրամբարի իշխման տարածքում գտնվող և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող Ակնալիճ համայնքի 380 հա հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով, արդյունքում կխնայվի շուրջ 4,3 մլն կվտ/ժ էլեկտրոգիա: Միաժամանակ Սևան-Հրազդան համակարգից կխնայվի շուրջ 12 մլն մ<sup>3</sup> քանակությամբ ջուր: 2023 թվականից կիրականացվեն նախագծային աշխատանքներ, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի կառուցման ծրագրի իրականացման հետագա ընթացքի համար:</p>		<p>2022-2026 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով</p>

		<p>83.10.Արմավիրի մարզի Սելավ-Մաստարայի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում</p>	<p>Ծավալը 13.0մլն.մ<sup>3</sup>  նախատեսվում է կառուցել Սելավ Մաստարա գետի Թալինի ջրանցքի ձախ ճյուղի հատման հատվածում 1230մ նիշի վրա: Նախատեսված է 8500հա հողերի ջրապահովվածությունը բարձրացնելու համար:  2023 թվականին ջրամբարի նախագծման և կառուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար հիմքերի ստեղծում:</p>		<p>2022-2026 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով</p>
		<p>83.11.Տավուշի մարզում Հախում-2 ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում</p>	<p>Ծավալը 1.0մլն.մ<sup>3</sup>  ՀՀ Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանում ներկայումս &lt;&lt;Տավուշ&gt;&gt; ջրօգտագործողների ընկերության շուրջ 920 հա հողատարածքները նախատեսված է ոռոգել մեխանիկական եղանակով:  Ջրամբարի կառուցմամբ մեխանիկական ոռոգումը կփոխարինվի ինքնահոս ոռոգմամբ:  Նախատեսվում է 2023 թվականից մեկնարկել տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի</p>		<p>2022-2026 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով</p>



			կառուցման ծրագրի իրականացման հետագա ընթացի համար:			
		83.12.Տավուշի մարզում Կողբի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Ծավալը 2.0մլն.մ <sup>3</sup> ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանում ջրամբարի կառուցմամբ կավելանան նաև շուրջ 670 հա հողատարածքներ, որոնց տարեկան ջրապահանջարկը կկազմի շուրջ 2,9 մլն մ <sup>3</sup> ջուր: Նախատեսվում է 2023 թվականից մեկնարկել տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի կառուցման ծրագրի իրականացման հետագա ընթացի համար:		2022-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով
		83.13.Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Ծավալը 1.69մլն.մ <sup>3</sup> ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանում կառուցվող ջրամբարի իշխման տարածքում գտնվող և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող 32 հա հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով, արդյունքում կխնայվի շուրջ 0,1 մլն կվտ/ժ էլեկտրոգիա:		2022-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով

			<p>Ջրամբարի կառուցմամբ կավելանան նաև շուրջ 400 հա հողատարածքներ, որոնց տարեկան ջրապահանջարկը կկազմի շուրջ 1,5 մլն մ<sup>3</sup> ջուր: Մրցույթի արդյունքներով պայմանագիր կնքելու և ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, 2023 թվականից կմեկնարկեն նախագծային աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի կառուցման ծրագրի իրականացման հետագա ընթացքի համար:</p>			
		<p>83.14.Սյունիքի մարզում Խնձորեսկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում</p>	<p>ՀՀ Սյունիքի մարզում կառուցվող ջրամբարի ծավալը 5.21 մլն.մ<sup>3</sup>: Ջրամբարի կառուցման արդյունքում կապահովվի 1.5 հազ. հա հողատարածքի ջրապահովվածությունը: 2023 թվականին ջրամբարի նախագծման և կառուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար հիմքերի ստեղծում:</p>		<p>2022-2026 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով</p>
		<p>83.15 Սյունիքի մարզում Լիճքի (Մեղրի) ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում</p>	<p>ՀՀ Սյունիքի մարզում կառուցվող ջրամբարի ծավալը 1.17 մլն.մ<sup>3</sup>: Մրցույթի արդյունքներով պայմանագիր կնքելու և ֆինանսական միջոցներ</p>		<p>2022-2026 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով</p>

			<p>նախատեսվելու դեպքում, 2023 թվականից կմեկնարկեն նախագծային աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի կառուցման ծրագրի իրականացման հետագա ընթացքի համար: Մրցույթի արդյունքներով պայմանագիր կնքելու և ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, 2023 թվականից կմեկնարկեն նախագծային աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի կառուցման ծրագրի իրականացման հետագա ընթացքի համար:</p>			
		<p>83.16.Կապսի ջրամբարից մինչև Թալինի մայր ջրանցքի ոռոգման ջրատարի կառուցում</p>	<p>Մեխանիկական ոռոգումը ինքնահոս համակարգերով փոխարինում: Ախուրյանի ջրավազանի ջրային հոսքերը Կապսի ջրամբարում կուտակելու, այնուհետև դեպի Արագածոտնի և Արմավիրի մարզեր տեղափոխելու նպատակով՝ Ծրագրի իրագործման դեպքում, կկառուցվի շուրջ 70--80 կմ երկարությամբ ինքնահոս խողովակաշար:</p>		<p>2022-2026 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով</p>

			2023 թվականին կմեկնարկվի նախագծման մրցութային գործընթաց:			
	83.17. Հերերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցում	Ոռոգման ջրամատակարարման մեջ ինքնահոսի կշռի մեծացում:  Օտարման և տարաբնակեցման ծրագրի շրջանակներում նախատեսվում է 680 հողատարածքների սեփականատերերին մասնակի փոխհատուցում: 2023 թ. նախատեսվում է Ազդակիր հողերի գնահատման և ՇՄԱԳ գործընթացի ավարտից հետո շինարարության մրցութային գործընթացի մեկնարկ:		2021-2026թթ. (Շինարարության ավարտ 2027թ.)	ՀՀ պետական բյուջե շինարարության ընդհանուր արժեքը՝ 10,714,678.2 հազ.դրամ, 2021թ.՝ 900,000.0 հազ.դրամ, 2022թ.՝ 900,000.0 հազ.դրամ, 2023թ.՝ 120,000. 0 հազ.դրամ, 2024թ.՝ 937,889. 9 հազ.դրամ, 2025թ.՝ 1,635,779. 7 հազ.դրամ, 2026թ.՝ 1,635,779. 7 հազ.դրամ	
	83.18. Գեղարդալճի ջրամբարից ինքնահոս համակարգի կառուցում	Մեխանիկական ոռոգումը ինքնահոս համակարգերով փոխարինում		2021-2022 թվականներ		
	83.19. Օրվա կարգավորիչ 31 հատ ջրավազանների կառուցում,	Ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի		2022-2025 թվականներ	ՀՀ պետական բյուջե շինարարության ընդհանուր արժեքը շուրջ՝	

		վերակառուցում և նախապատրաստական աշխատանքների իրականացում	ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի ապահովում, որը անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի ջրային համակարգերի օգտագործման արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման համար: 2023 թվականի 1-ին եռամսյակում Նախագծանախահաշվային փաստաթղթերի վերջնական փաթեթի ներկայացում խորհրդատուների կողմից: Համապատասխան շինարարական աշխատանքների մրցութային գործընթացի մեկնարկ:			12,699,887.4 հազ. դրամ, 2022թ. 492,962.4 հազ. դրամ, 2023թ.՝ 1,500,000. 0 հազ. ՀՀ դրամ, 2024թ.՝ 4,679,100. 0 հազ. դրամ, 2025թ.՝ 5,427,825. 0 հազ. դրամ
84.	«Արփա-Սևան» թունելի անվտանգ շահագործման շարունակականության ապահովում	84.1.Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի վթարային հատվածների ուսումնասիրություն, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և շինարարական աշխատանքների իրականացում	Սևանա լճի մակարդակի բարձրացում, թունելի ջրթողունակության ավելացում, անխափան աշխատանքի ապահովում: 2023 թվականի ընթացքում նախատեսվում է ավարտին հասցնել 2022 թվականին մեկնարկած Արփա-Սևան թիվ 2 թունելի առավել վթարավտանգ հատվածների հիմնանորոգման աշխատանքները՝ շուրջ 100 գծմ ընդհանուր երկարությամբ:	Քաղաքաշինության կոմիտե	2022-2024 թվականներ	ՀՀ պետական բյուջե 2022թ.՝ 1,615,126.5 հազ. դրամ, 2023թ.՝ 820,000. 0 հազ. դրամ,

			<p>Սևանա լճի մակարդակի բարձրացման, թունելի ջրթողունակության ավելացման, անխափան շահագործման ապահովման նպատակով ձեռնարկվել է Արփա-Սևան թիվ 2 թունելի առավել վթարավտանգ ընդհանուր 246 մ երկարությամբ հատվածների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի կազմման ծառայությունների ձեռքբերման գնման գործընթաց: Մրցույթի արդյունքներով պայմանագիր կնքելու և ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, 2023 թվականից կիրականացվեն նախագծային աշխատանքներ, որոնք հիմք կհանդիսանան Արփա-Սևան թիվ 2 թունելի առավել վթարավտանգ հատվածների հիմնանորոգման ծրագրի իրականացման հետագա ընթացքի համար:</p>			
85.	Խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման	85.1.Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում: Գրունտային ջրերի	Հողերի մելիորատիվ վիճակի բարելավում, գրունտային ջրերի մակարդակի իջեցում: ՀՀ պետական բյուջեի «Կոլեկտորադրենաժային		2021 թվական (շարունակական)	ՀՀ պետական բյուջե 2022թ.` 290,823.9 հազ. դրամ, 2023թ.` 290,823. 9 հազ. դրամ, 2024թ.`

	աշխատանքների իրականացում	մակարդակների և որակի որոշման աշխատանքների իրականացում	ցանցերի պահպանում և շահագործում» ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարի իրականացվում են կոլեկտորադրենաժային ցանցի շուրջ 200 կմ ընդհանուր երկարությամբ հատվածների մաքրման, վերականգնման և նորոգման աշխատանքներ: Արարատյան դաշտում տեղադրված 455 դիտողական հորատանցքներում իրականացվում են գրունտային ջրերի մշտական դիտարկումներ: 2023 թվականի համար նախատեսվել է 222 կմ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրում:			290,823. 9 հազ. դրամ, 2025թ.՝ 290,823. 9 հազ. դրամ
86.	Հեղեղման ոռոգման նախնական գնահատման իրականացում, հեղեղումների վտանգի և ոռոգման քարտեզների կազմում, հեղեղումների ոռոգման կառավարման պլանների կազմում	86.1. Հանրապետության բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների ու բնակչության գույքը վարարումների և սելավների ոռոգման պաշտպանելու տվյալների բազայի ստեղծման, հակահեղեղային առաջնահերթ միջոցառումների իրականացման	Բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների ու բնակչության գույքը վարարումների և սելավների ոռոգման պաշտպանում: ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի /Դեբեդավան, Բագրատաշեն, Պտղավան, Հաղթանակ բնակավայրերի/ տարածքում Դեբեդ գետի ափի ամրացման և սահմանային ճանապարհի /հայ-վրացական սահման/ ստեղծման աշխատանքների	Շրջակա միջավայրի նախարարություն,  Արտակարգ իրավիճակների նախարարություն,  Կադաստրի կոմիտե	2022-2024 թվականներ	ՀՀ պետական բյուջե 2022թ.՝ 923,499.7 հազ.դրամ, 2023թ.՝ 475,658. 6հազ. ՀՀ դրամ

		<p>կանոնակարգման, կառավարման համակարգչային ծրագրի միջոցով ոլորտի կենտրոնացված կառավարման իրականացում</p>	<p>իրականացման նպատակով աշխատանքներ են տարվում նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը վրացական կողմի հետ համաձայնեցնելու համար: Վրացական կողմից համաձայնությունն ստանալու դեպքում կնախաձեռնվի շինարարության ծրագիրը մեկնարկելու աշխատանքներ: &lt;&lt; Արարատի մարզի Արաքսավան և Բուրաստան համայնքների Արաքս գետի N 16-ից մինչև N 14 սահմանանշանների միջակայքում գետի նախկին հունի վերականգնման և N 16 սահմանանշանի մոտակայքում գետի հայկական կողմի՝ մոտ 130 մ երկարությամբ և 8 մ խորությամբ ողողված պատնեշի վերականգնման նախագծման աշխատանքներն ընթացքի մեջ են: Նախագիծը հիմք կհանդիսանա աշխատանքների իրականացման ծրագիրը մեկնարկելու համար: 2022 թվականին մեկնարկած՝ Տանձուտ և Փամբակ գետերի ափապաշտպան հենապատի վերականգնման, Ապարանի «Քյանդալ» կոչվող սելավատարի մաքրման,</p>			
--	--	--	--	--	--	--



			Նարեկի սելավատարի հունի մաքրման և ափերի ամրացման աշխատանքների ավարտը նախատեսվում է 2023 թվականի ընթացքում:			
87.	Ոռոգման համակարգերում գույքի առկայության և վիճակի գնահատում	87.1. Իրականացնել ոռոգման համակարգերի (ջրանցքներ, ջրամբարներ, խորքային հորեր, ջրատար խողովակներ, պոմպակայաններ, շենքեր, շինություններ, մեքենամեխանիզմներ, հիդրոտեխնիկական այլ կառուցվածքներ և այլն) գույքագրում և գնահատում	Ներդրումների իրականացման համար առկա գույքի փաստացի վիճակի գնահատում: Մշակվում է միջոցառման տեխնիկական առաջադրանքը, որը կհաստատվի 2023 թվականի մարտի 3-րդ տասնօրյակում, որի արդյունքներով կհստակեցվեն լրացուցիչ քնակական ցուցանիշները:		2021-2026 թվականներ	Օրենքով չարգելված այլ միջոցներ, ՀՀ պետական բյուջե համաֆինանսավորման մասով
88.	Գործող ջրամբարների պատշաճ շահագործում	88.1. Ջրամբարների վերականգնման և վերազինման աշխատանքներ	Ջրամբարների և խոշոր ՀՏԿ-ների անվտանգ շահագործում Բնակչության և բնակավայրերի անվտանգության բարձրացում: 2023 թվականի համար նախատեսվել է Մեծավանի և Ապարանի ջրամբարների վերականգնման և Տավուշի ջրամբարի պատվարի վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի և փորձաքննության ձեռքբերում:	Արտակարգ իրավիճակների նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե	2022-2024 թվականներ (շարունակական)	ՀՀ պետական բյուջե 2022թ. 1,276,652.0 հազ.դրամ, 2023թ. 238, 525. 3 հազ. ՀՀ դրամ,
		88.2. Յուրաքանչյուր ջրամբարի տեխնիկական	Ջրամբարների և խոշոր ՀՏԿ-ների անվտանգ շահագործում	Արտակարգ իրավիճակների նախարարություն	2021-2026 թվականներ	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		անվտանգության ապահովման ծրագրի մշակում	Բնակչության և բնակավայրերի անվտանգության բարձրացում: 2023թ. կկազմվի ջրամբարների սահմանված կարգով գննում իրականացնելու և անվտանգության հայտարարագիր մշակելու աշխատանքների իրականացման ծրագիր:			
89.	Միգրացիայի կառավարման համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում	89.1 ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 638 - Լ որոշմանը համապատասխան Ներքին գործերի նախարարության կազմում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ձևավորում	Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը ձևավորված է	Արդարադատության նախարարություն Ոստիկանություն	Ներքին գործերի նախարար նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնամյակա ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում
		89.2 Միգրացիայի և քաղաքացիության ծառայության առաջին կազմը ձևավորելու նպատակով Միգրացիոն	Միգրացիայի և քաղաքացիության ծառայության առաջին կազմը ամբողջությամբ վերապատրաստված է	Ոստիկանություն, Միգրացիայի միջազգային կազմակերպություն (համաձայնությամբ)	Ներքին գործերի նախարար նշանակելու մասին	Դրամաշնորհային միջոցներ

		<p>ծառայության և Անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցների վերապատրաստման կազմակերպում</p>			<p>Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասնամսվա ընթացքում</p>	
		<p>89.3 Միգրացիոն ծառայությունում առկա սոցիալական ոլորտին առնչվող գործառույթների փոխանցում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը</p>	<p>Միգրացիոն ծառայությունում առկա սոցիալական ոլորտին առնչվող գործառույթները ամբողջական ծավալով իրականացվում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:</p>	<p>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>Ներքին գործերի նախարար նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
90.	<p>Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացում</p>	<p>90.1 Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացումն ապահովող ծրագրի մշակում</p>	<p>Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացումն ապահովող ծրագիրը մշակված է</p>	<p>Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Արտաքին գործերի նախարարություն, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ</p>	<p>2022թ. հունիսի 1-ին տասնօրյակ</p>	<p>Դրամաշնորհային միջոցներ</p>

				(համաձայնությամբ)		
		90.2 Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացումն ապահովող ծրագրից բխող օրենսդրական փոփոխությունների իրականացում	Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացումն ապահովող ծրագրից բխող օրենսդրական փոփոխություններն իրականացված են	Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Արտաքին գործերի նախարարություն, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)	2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Դրամաշնորհային միջոցներ
		90.3 Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացման տեխնիկական բազայի ստեղծում	Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացման տեխնիկական բազան ստեղծված է	Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Արտաքին գործերի նախարարություն, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)	2023թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Դրամաշնորհային միջոցներ
91.	Քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների թվայնացում, պարզեցում և ավտոմատացում	91.1 Քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների ուսումնասիրություն	Արձանագրված են քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող թվայնացված ծառայությունները, բացահայտված են	Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Արտաքին գործերի նախարարություն,	2022թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	Դրամաշնորհային միջոցներ

			չթվայնացված կամ ոչ ամբողջովին թվայնացված ծառայությունների թվայնացման, ավտոմատացման և պարզեցման հնարավորությունները	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)		
		91.2 Քաղաքացիներին, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների ուսումնասիրության արդյունքում կատարված առաջարկների իրականացում	Ներկայացված առաջարկների հիման վրա փոփոխություններ են կատարված համապատասխան գերատեսչական իրավական ակտերում,	Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Արտաքին գործերի նախարարություն, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ) Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակ (համաձայնությամբ)	2024թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Դրամաշնորհային միջոցներ
92.	Օտարերկրյա քաղաքացիներին ՀՀ-ում աշխատանքի թույլտվության և կացության տրամադրման	92.1 Օտարերկրյա աշխատողների գրանցման միասնական էլեկտրոնային հարթակի գործարկում	Օտարերկրյա աշխատողների գրանցման միասնական էլեկտրոնային հարթակը գործարկված է	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Արտաքին գործերի նախարարություն,	2022թ. հունվարի 1-ին տասնօրյակ	Դրամաշնորհային միջոցներ

	<p>համակարգի թվայնացում և պարզեցում</p>			<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Պետական եկամուտների կոմիտե, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ), Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակ (համաձայնությամբ) Միգրացիայի միջազգային կազմակերպություն (համաձայնությամբ)</p>		
	<p>92.2 ՀՀ-ում աշխատող, այդ թվում՝ առանց աշխատանքի թույլտվության աշխատող օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ ամբողջական վիճակագրական</p>	<p>Ամբողջական վիճակագրական տվյալներ են հավաքվում ՀՀ-ում աշխատող, այդ թվում՝ առանց աշխատանքի թույլտվության աշխատող օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ</p>	<p>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Պետական եկամուտների կոմիտե</p>	<p>2023թ. հունվարի 1-ին տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>	

		տվյալների հավաքագրում				
93.	Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգով նախատեսված՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորմանը, միգրացիոն հոսքերի կառավարմանը, հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարմանը, հայրենադարձության խթանմանն ուղղված գործողությունների կատարման ապահովում	93.1 «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2022-2032 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման վերջնական լրամշակված նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	«Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2022-2032 թվականների ռազմավարությունը և դրանից բխող 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ:		2021 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Դրամաշնորհային միջոցներ
		93.2. «Միգրացիոն հոսքերի կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	«Միգրացիոն հոսքերի կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում	Ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, Արտաքին գործերի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ներքին գործերի նախարարության ձևավորումից հետո 11 ամսվա ընթացքում	Դրամաշնորհային միջոցներ

		93.3 «Հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ:	«Հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է:	Արտակարգ իրավիճակների նախարարություն	2022թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		93.4 «Հայրենադարձության խթանման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	«Հայրենադարձության խթանման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է:	Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ	2022թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
94.	Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ընդունման մեխանիզմների շարունակական կատարելագործում	94.1 «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում	2023թ. ապաստան հայցողների կենսապահովման պայմանների բարելավում՝ միջազգային չափանիշների հետ համապատասխանեցում:	Ոստիկանություն Ազգային անվտանգության ծառայություն ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակ (համաձայնությամբ)	2024թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		94.2 Ապաստան հայցողների համար նախատեսված	Ապաստան հայցողների համար նախատեսված ժամանակավոր տեղավորման	Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային	2022թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Դրամաշնորհային միջոցներ



		Ժամանակավոր տեղավորման նոր կենտրոնի կառուցում, կահավորում	նոր կենտրոնը կառուցված, կահավորված և գործում է	կենտրոնի հայաստանյան գրասենյակ (համաձայնությամբ) ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակ (համաձայնությամբ)		
95.	Հետընդունման (ռեադմիսիայի) գործընթացների արդյունավետ կազմակերպում՝ այդ բնագավառում ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան	95.1 Հետընդունման (ռեադմիսիոն) համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնում և ոլորտում թվային լուծումների կիրառում	ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների պատշաճ իրականացում: 2023թ. ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում ստացվող հայցերին սահմանված ժամկետներում պատասխանում, ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի միջոցով	Ոստիկանություն, Արտաքին գործերի նախարարություն, Ազգային անվտանգության ծառայություն	2021-2026թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
		95.2 ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված ծրագրերի իրականացում	Յուրաքանչյուր տարի վերաինտեգրման աջակցության տրամադրում ՀՀ վերադարձող ՀՀ քաղաքացիների 38 ընտանիքների	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարություն, Առողջապահության նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն,	2021-2026թթ	ՀՀ պետական բյուջե 13680.0 հազ. դրամ դրամաշնորհային միջոցներ

				<p>Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակ (համաձայնությամբ)</p>		
96.	<p>Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների արդյունավետության բարձրացում, այդ նպատակով մշտադիտարկման և վերլուծության գործող համակարգի արմատական բարեփոխում և առևտրային կազմակերպությունների կառավարման որակի բարելավում</p>	<p>96.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ</p>	<p>Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մշտադիտարկման և վերլուծության էլեկտրոնային բարեփոխված համակարգի միջոցով իրականացումը, նոր առաջարկվող ֆինանսական ու ոչ ֆինանսական (բնեղեն) ցուցանիշների շնորհիվ կազմակերպությունների գործունեության գնահատման արդյունքների հավաստիության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև առաջարկվող նոր ցուցանիշների համաձայն զարգացման ծրագրերի կազմումը ու դրանց ծրագրավորված աճի ապահովումը թույլ կտա բարձրացնել կազմակերպությունների արդյունավետության մակարդակը:</p>	-	<p>2022 թվականից մինչև 2023 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

			<p>Նախատեսվում է մշտադիտարկման համակարգի բարեփոխման և նոր ծրագրավորված ցուցանիշների սահմանման շնորհիվ ապահովել ֆինանսական հիմնական ցուցանիշի (շահութաբերություն՝ ըստ ակտիվների) միջին հաշվով 0.25 %-ով ավելացումը բազիսային տարվա համեմատ, որի գումարային մեծությունը կկազմի 1 մլրդ ՀՀ դրամ: 2023 թվականին «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում:</p>			
97.	<p>Բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծում, պետական սեփականություն համարվող հանրակացարանային տարածքների նվիրատվության գործընթացի հնարավոր սեղմ ժամկետում ավարտում և</p>	<p>97.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ</p>	<p>Հնարավոր սեղմ ժամկետում 1. բնակչության կարիքավոր խմբերի բնակարանային խնդիրների լուծում, ինչպես նաև հանրակացարանային տարածքների նվիրատվության երկարաձգվող գործընթացի ավարտում, որի շնորհիվ կբարելավվեն բնակչության բնակարանային պայմանները, ինչպես նաև նշված</p>		<p>2022 թվականից մինչև 2024 թվականի նոյեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

	<p>բնակարանային ֆոնդի առավել նպատակային և արդյունավետ կառավարում, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության գործընթացի արդյունավետ և ամբողջական իրականացում մեկ միասնական իրավական ակտի միջոցով</p>	<p>վարչապետի աշխատակազմ ներկայացում</p>	<p>գործընթացը կնպաստի բնակարանային ֆոնդի արդյունավետ կառավարմանը, 2. պետական սեփականություն հանդիսացող ամբողջ գույքի (այլ ոչ միայն հանրակացարանային տարածքների) նվիրատվության գործընթացի կանոնակարգում, ինչպես նաև պետական գույքի նվիրաբերության գործընթացի կազմակերպման համար նոր գործիքակազմի ստեղծում և կանոնակարգում, այդ թվում՝ պայմանագրերով սահմանված պայմանների կատարման նկատմամբ հսկողության իրականացման ապահովում, 3.պետական գույքի նվիրատվության և նվիրաբերության գործընթացի միասնական և ամբողջական հստակ կանոնակարգման շնորհիվ պետական գույքի կառավարման արդյունավետություն բարձրացում: 2023 թվականին «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության կարգերը հաստատելու, Հայաստանի 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն և 2016 թվականի</p>			
--	--	---	---	--	--	--

			<p>հոկտեմբերի 3-ի N 1067-Ն որոշումներն ուժն կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման նախապատրաստական աշխատանքների իրականացում: 2024 թվականին ՀՀ կառավարության որոշման ընդունում:</p>			
		<p>97.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 404 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ Վարչապետի աշխատակազմ</p>	<p>Հնարավոր սեղմ ժամկետում փախստականի կարգավիճակ ունեցող շուրջ 160 ընտանիքի բնակարանային խնդիրների լուծում, հանրակացարանային տարածքների սեփականաշնորհման երկարաձգվող գործընթացի ավարտում, որի շնորհիվ կբարելավվեն բնակչության բնակարանային պայմանները և սեփականության իրավունքի հաստատումով ավելի լավ կպահպանվի և կբարելավվի տվյալ բնակարանային ֆոնդը: 2023 թվականին փախստականի կարգավիճակ ունեցող շուրջ 10 ընտանիքի բնակարանային խնդիրների լուծում, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 404</p>		<p>2022 թվականից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

			որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում:			
		97.3 «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության կարգերը հաստատելու ու 2016 թվականի հոկտեմբերի 3-ի N 1067-Ն որոշումն ուժն կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում	Պետական սեփականություն համարվող գույքի նվիրատվության և նվիրաբերության գործընթացի միասնական կանոնակարգում, որի ամբողջական կառավարումը կնպաստի պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացմանը: 2023 թվականին նախատեսվում է իրականացնել Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության կարգերը հաստատելու ու 2016 թվականի հոկտեմբերի 3-ի N 1067-Ն որոշումն ուժն կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքներ		2023 թվականից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
98.	Պետական գույքի արդյունավետության բարձրացում, պետական գույքի էլեկտրոնային հաշվառման միասնական բազայի տվյալների	98.1 Պետական անշարժ գույքի օգտագործման մշտադիտարկման շնորհիվ գույքի օգտագործման	Ըստ առաջնահերթության մինչև 300 միավոր անշարժ գույքի համար մշտադիտարկման տարեկան ծրագրի կազմում և իրականացում:	-	2022 թվականից մինչև 2023 թվականի դեկտեմբերի	Ֆինանսավորում չի պահանջվում

	<p>հիման վրա պետական գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկման, վերլուծության, ինչպես նաև արդյունավետության մակարդակի գնահատման շնորհիվ պետական գույքի օգտագործումը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներից շեղումների, խախտումների և դրանց պատճառած վնասի բացահայտում</p>	<p>ժամանակահատվածում պատշաճ հսկողության սահմանում, վնասների բացահայտում և դրանք վերականգնելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում, ինչպես նաև առաջին անգամ մշտադիտարկման շնորհիվ անշարժ գույքի օգտագործման արդյունավետության գնահատում: Իրավական ակտերի պահանջներից և կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորություններից թույլ տված շեղումների, խախտումների բացահայտում, չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող պետական գույքի առանձնացում, արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների և գույքի օգտագործման բարելավման վերաբերյալ, Կոմիտեի գործող</p>	<p>Մշտադիտարկման արդյունքում բացահայտված վնասի վերականգնման ուղղությամբ միջոցառումների իրականացում, ինչպես նաև չօգտագործվող և ոչ արդյունավետ օգտագործվող բացահայտված գույքի մինչև 50%-ի օտարման և օգտագործման տրամադրման վերաբերյալ որոշումների ընդունում: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի 202-Ն որոշման պահանջները՝ պետական անշարժ գույքի օգտագործման մշտադիտարկման իրականացնելու նպատակով, ինչպես նաև պետական գույքի օգտագործման և պահպանման վիճակը բացահայտելու և բարելավելու նպատակով Կոմիտեին հանձնված պետական գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ աշխատանքային խումբը 2023 թվականի ընթացքում կիրականացնի մոնիթորինգի ենթակա մինչև 200 անվանում գույք:</p>		<p>3-րդ տասնօրյակ</p>	
--	---	---	---	--	-----------------------	--

		ստորաբաժանումների օպտիմալացման արդյունքում և հաստիքների օգտագործման շնորհիվ նոր մշտադիտարկման վարչության ստեղծելու մասին առաջարկությունների ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ				
99.	Պետական համակարգի մարմինների և պետական կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին օգտագործվող ոչ պետական սեփականություն համարվող տարածքները պետական սեփականություն համարվող տարածքներով փոխարինումը	99.1 «Պետական կարիքների համար վարձակալած ոչ պետական տարածքները պետական տարածքներով փոխարինելու մասին» Հայաստանի Հանրապետության Վարչապետի որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին վարձակալության վճարի դիմաց պետական կառույցների կողմից օգտագործվող ոչ պետական սեփականություն համարվող տարածքները պետության սեփականությունը համարվող համապատասխան տարածքներով փոխարինման գործընթացի շնորհիվ ՀՀ պետական բյուջեի ծախսերի նվազում՝ վարձակալության վճարների կրճատման հաշվին: Ներկայումս ՀՀ պետական բյուջեից տրամադրվող միջոցները կազմում են տասնյակ միլիոններ: Նախատեսվում է գույքագրման արդյունքում պետական կարիքների համար օգտագործվող ոչ պետական	-	2022 թվականից մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում



			<p>տարածքների մակերեսների ճշգրիտ չափերի բացահայտում և դրանց 50 %-ի չափով պետական համապատասխան տարածքներով փոխարինում:</p> <p>Պետական համակարգի մարմինների և պետական կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին օգտագործվող ոչ պետական սեփականություն համարվող տարածքները պետական սեփականություն համարվող տարածքներով փոխարինելու նպատակով Կոմիտեի կողմից 2023 թվականին նախատեսվում է ՀՀ կառավարության 5 որոշման ընդունում:</p>			
100.	<p>Պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ և օտարման ոչ ենթակա պետական գույքի կազմի և կառուցվածքի սահմանում</p>	<p>100.1 Պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գույքի կազմը սահմանելու նպատակով Կոմիտեի նախաձեռնությամբ պետական մարմինների մասնակցությամբ ու առաջարկությունների, ինչպես նաև իրականացվող մշտադիտարկման</p>	<p>ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշմամբ ներդրված պետական գույքի էլեկտրոնային հաշվառման բազայում հաշվառված պետական սեփականություն հանդիսացող 10356 միավոր անշարժ գույքից պետության գործառույթների իրականացման համար, պետական կառավարման համակարգի մարմինների,</p>	<p>ՀՀ շահագրգիռ գերատեսչություններ և մարմիններ</p>	<p>2022 թվականից մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ</p>	

		<p>արդյունքների հիման վրա պետական մարմինների գործառույթների իրականացման համար անհրաժեշտ անշարժ գույքի նկատմամբ պահանջների սահմանում և օտարման ոչ ենթակա գույքի կազմի և մակերեսի առանձնացում: Նշված տեղեկատվության հիման վրա համապատասխան փոփոխությունների կատարում Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թվականի ապրիլի 1-ի N 458-L որոշմամբ հաստատված պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագրում</p>	<p>պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունների, ՀՀ-ում գործող նորմատիվների, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրությունների հիման վրա օտարման ոչ ենթակա գույքի կազմի և մակերեսի առանձնացում, ինչպես նաև օտարման ենթակա գույքի կազմի սահմանում, և դրա մինչև 30 %-ի չափով օտարման կամ օգտագործման տրամադրման ուղղությամբ աշխատանքների կազմակերպում՝ մասնավորապես. նախնական շուկայական գնահատում, ինչպես նաև օտարման կամ օգտագործման տրամադրման գործընթացի իրականացում: Պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գույքի կազմը սահմանելու նպատակով 2023 թվականին կիրականացվի Կոմիտեի կողմից հարցման արդյունքում 37 մարմիններից ստացված շուրջ 3 330 000 քմ ընդհանուր տարածքների վերաբերյալ տեղեկատվության ամփոփում և «ՀՀ կառավարության 2021</p>			
--	--	---	---	--	--	--

			թվականի ապրիլի 1-ի N 458-L որոշման մեջ փոփոխությունների կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում: 2024 թվականին 2023 թվականի գործընթացի շարունակական աշխատանքներ:			
101.	Բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման և ներդրումների ներգրավման, չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող՝ համեմատաբար բարձր իրացվելիություն ունեցող պետական անշարժ գույքի առանձնացում և վաճառքի կազմակերպման միջոցով սոցիալ-տնտեսական նշանակության ներդրումային խոշոր ծրագրերի իրականացում	101.1 Բարենպաստ ներդրումային միջավայր ստեղծելու և պետական գույքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 1 մլրդ ՀՀ դրամ և ավել գնահատված արժեքով և ներդրումային հետաքրքրություն ունեցող առնվազն տասը միավոր անշարժ գույքի վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի հավաքագրում և օտարման գործընթացի կազմակերպում:	Բարձր իրացվելիություն ունեցող պետական գույքի օտարումից ՀՀ պետական և համայնքային բյուջեների մուտքերի ավելացում՝ մասնավորապես վաճառքի լավագույն սցենարի դեպքում ՀՀ պետական բյուջե մինչև 7 մլրդ ՀՀ դրամ, իսկ համայնքային բյուջեներ՝ մինչև 3 մլրդ ՀՀ դրամի մուտքագրում: Միաժամանակ նոր աշխատատեղերի ստեղծում և մինչև 5 մլրդ ՀՀ դրամ ներդրումների ապահովում:	-	2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
102.	Պետական ոչ պրոֆիլային գույքի օտարման գործընթացի արդյունավետության բարձրացում, այդ նպատակով նոր	102.1 Մինչև 3 միավոր պետական ոչ պրոֆիլային գույքի օտարման գործընթացի արդյունավետ կազմակերպելու	Պետական ոչ պրոֆիլային գույքի օտարումից ՀՀ պետական և համայնքային բյուջեների մուտքերի ավելացում՝ մասնավորապես վաճառքի լավագույն սցենարի	-	2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Օտարումից ստացվող միջոցների հաշվին ըստ «Պետական գույքի կառավարման

	գործիքակազմի ստեղծում՝ մասնագիտացված կառույցներին պատվիրակելու միջոցով	նպատակով (պիլոտային ծրագրի շրջանակներում) այդ աշխատանքներին մրցակցային եղանակով մասնագիտացված կազմակերպությունների ներգրավում և դրանց մասնակցության կանոնակարգում՝ նոր գործիքակազմի ստեղծման շնորհիվ:	դեպքում ՀՀ պետական բյուջե մինչև 2.1 մլրդ ՀՀ դրամ մուտքագրում, իսկ համայնքային բյուջեներ՝ մինչև 900 մլն ՀՀ դրամ: Միաժամանակ նոր աշխատատեղերի ստեղծում և մինչև 1.5 մլրդ ՀՀ դրամի ներդրումների ապահովում:			մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի
103.	Նպաստավոր ներդրումային միջավայրի ձևավորում և արժեթղթերի շուկայի կայացում, ինչպես նաև ֆոնդային բորսայի միջոցով համեմատաբար բարձր շահութաբերություն ունեցող պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մասնավորեցման գործընթացի իրականացում	103.1 «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում	Մասնավորեցման ենթակա գույքի կազմի և թվաքանակի ճշգրտում, ինչպես նաև մասնավորեցման ընթացքում արդյունավետ մասնավորեցման ձևերի (ֆոնդային բորսայի միջոցով) ներդրման շնորհիվ բնակչության լայն շերտերի միջոցների և հեռանկարային ներդրողների ներգրավման ապահովման արդյունքում մինչև 2 առևտրային կազմակերպության մասնավորեցման իրականացում (մասնավորեցման ենթակա բաժնետոմսերի առնվազն 50%-ի վաճառքի չափով), որի շնորհիվ կապահովվեն ՀՀ պետական բյուջե մինչև 1.4 մլրդ ՀՀ դրամի, իսկ	ՀՀ շահագրգիռ գերատեսչություններ և մարմիններ Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2022 թվականից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

			համայնքային բյուջեներ՝ մինչև 600 մլն ՀՀ դրամի մուտքեր: Պետական գույքի մասնավորեցման ծրագրի փոփոխություն՝ նոր ընկերությունների ընդգրկում:			
104.	<p>Մասնավորեցման ոչ ենթակա պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կազմի և կառուցվածքի օպտիմալացում, ըստ ճյուղերի թվաքանակի սահմանում, ինչպես նաև վնասով, ոչ արդյունավետ և զարգացման հեռանկար չունեցող կազմակերպությունների առանձնացում և մասնավորեցման ծրագրում ընդգրկում</p>	<p>104.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ Վարչապետի աշխատակազմ</p>	<p>Ելնելով պետության կողմից սահմանված գործառույթների իրականացման անհրաժեշտությունից մասնավորեցման ոչ ենթակա կազմակերպությունների թվաքանակի սահմանում և մասնավորեցման ենթակա կազմակերպությունների թվաքանակի ճշգրտում, մասնավորեցման գործընթացի իրականացում, ինչպես նաև վերադաս մարմինների նախաձեռնությամբ և պետական գույքի կառավարման կոմիտեի մասնակցությամբ արդյունավետ զարգացման ծրագրերի մշակում և հաստատում, ներդրումային միջոցառումների իրականացում, որի արդյունքում կբարձրանա կազմակերպությունների շահութաբերության մակարդակը: Նախատեսվում է պետական մասնակցությամբ առևտրային</p>	-	<p>2022 թվականից մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակ</p>	Ֆինանսավորում չի պահանջվում

			<p>կազմակերպությունների մասնավորեցման շնորհիվ 700 մլն ՀՀ դրամի ՀՀ պետական բյուջեի և 300 մլն ՀՀ դրամ համայնքային բյուջեների մուտքերի ապահովում, իսկ շահութաբերության մակարդակի 0.15%-ի ավելացման շնորհիվ շահույթի ծավալի ավելացում 600 մլն ՀՀ դրամով:</p> <p>2023 թվականին «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման նախապատրաստական աշխատանքների իրականացում, 2024 թվականին ՀՀ կառավարության որոշման ընդունում:</p>			
105.	Պետական գույքի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով բարելավման կարիք ունեցող և հետագայում օտարման ոչ ենթակա, որպես պետական	105.1 Բարելավման կարիք ունեցող մինչև տասը միավոր պետական անշարժ գույքերի՝ ներդրումների իրականացման դիմաց երկարատև վարձակալության կամ որոշակի ժամկետով	<p>Մասնավոր անձանց ներդրումների շնորհիվ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի հիմնանորոգում և բարելավում, ինչպես նաև ներդրումների շնորհիվ նոր աշխատատեղերի ստեղծում և ՀՀ պետական բյուջեի միջոցների ավելացում:</p>	-	2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

	սեփականություն պահպանվող գույքի առանձնացում, և որոշակի ներդրումային ծրագրերի իրականացման դիմաց երկարատև վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման միջոցով տվյալ գույքի հիմնանորոգման և վերակառուցման ապահովում	անհատույց օգտագործման տրամադրում	Միջոցառման արդյունքում նախատեսվում է ապահովել մինչև 500 մլն ՀՀ դրամի ներդրում և մինչև 30մլն ՀՀ դրամով ՀՀ պետական բյուջեի մուտքերի ավելացում:			
106.	Մարզերում պետություն-համայնքներ գործընկերության բնագավառում ՓՄՁ-ի զարգացում չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող, ինչպես նաև նախկինում օտարման ներկայացված, սակայն չվաճառված գույքի առանձնացում, և այդ գույքի ներդրմամբ տարբեր ձևաչափերով տնտեսական նշանակության սոցիալ-տնտեսական բնույթի ներդրումային ծրագրերի իրականացում:	106.1 Մարզերում գտնվող չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող գույքի ներգրավմամբ տեղական նշանակության սոցիալ-տնտեսական բնույթի ներդրումային ծրագրերի իրականացում, այդ նպատակով մինչև տասը միավոր ոչ բարձր իրացվելիություն ունեցող անշարժ գույքերի օտարում, վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրում ՀՀ ՏԿԵ	Հանրապետության տարբեր համայնքներում գույքի ներգրավմամբ ներդրումների իրականացման շնորհիվ ՀՀ պետական բյուջե մինչև 70 մլն ՀՀ դրամի և համայնքային բյուջեներ՝ մինչև 30մլն ՀՀ դրամի մուտքերի ավելացում: Մինչև 400 մլն ՀՀ դրամի ներդրումների ապահովում, նոր աշխատատեղերի ստեղծում, ինչպես նաև որոշակի ոլորտներում օբյեկտների (հյուրանոց, հացատուն, հանգստի տուն, մշակութային օջախ.. ) նկատմամբ պահանջի բավարարում: Ընդ որում		2022 թվականից մինչև 2024թվականի փետրվարի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		նախարարության և համայնքների օժանդակությամբ	2023 թվականին՝ ՀՀ պետական բյուջե մինչև 21 մլն ՀՀ դրամի և համայնքային բյուջե մինչև 9 մլն ՀՀ դրամի մուտքերի ավելացում, մինչև 150 մլն ՀՀ դրամի ներդրումների ապահովում և նոր աշխատեղերի ստեղծում: 2024 թվականին՝ ՀՀ պետական բյուջե մինչև 49 մլն ՀՀ դրամի և համայնքային բյուջե մինչև 21 մլն ՀՀ դրամի մուտքերի ավելացում, մինչև 250 մլն ՀՀ դրամի ներդրումների ապահովում և նոր աշխատեղերի ստեղծում:			
107.	ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախընտրական խոստումների իրականացում	107.1 ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախընտրական խոստումներից բխող քայլերի իրականացում ուղղված համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը	ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցված խոստումների իրականացում 2023թ. նախատեսվում է իրականացնել ՀՀ համայնքներում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված ծրագրեր:	Մարզպետարաններ, համայնքներ /համաձայնությամբ/	2022-2026թթ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
108.	Ռեսուրսների ռացիոնալ և համաչափ արդյունահանման ապահովում	108.1 «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» օրենքի նախագծին հավանություն տալու	Հայաստանի Հանրապետության տարածքում նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման նպատակով ընդերքի տրամադրման սկզբունքների ու կարգի սահմանում, ընդերքն		2024թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում



		<p>մասին» Կառավարության որոշման ընդունում</p>	<p>օգտագործելիս բնակչության առողջությունը, բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև նավթային գործունեության ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունների կարգավորում:</p>			
		<p>108.2 «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունն երի մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունում</p>	<p>Օրենքի կիրարկման ապահովում:</p> <p>Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Նավթային գործունեության և արտադրանքի բաժանման պայմանագրերի օրինակելի ձևերի հաստատում.</li> <li>2. Նավթային գործունեության թույլտվությունների ձևերի հաստատում.</li> <li>3. Նավթի և բնական գազի պաշարների դասակարգման կարգի հաստատում.</li> <li>4. Նավթային գործունեության իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանից, դիմումատուի վերաբերյալ</li> </ol>		<p>2025-2026թթ.</p> <p>Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. տասն ամսվա ընթացքում.</li> <li>2. տասն ամսվա ընթացքում.</li> <li>3. մեկ տարվա ընթացքում.</li> <li>4. ութ ամսվա ընթացքում.</li> </ol>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>

			<p>տեղեկատվության տրամադրման կարգի սահմանում.</p> <p>5. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման նպատակով հորատանցքերի հորատման համար անհրաժեշտ հողամասերի օգտագործման պայմանագրի օրինակելի ձևի հաստատում:</p>		5. տասնամսվա ընթացքում	
	<p>108.3 «Գետաողողատային տիպի հանքավայրերում ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման ընդունում</p>	<p>Գետաողողատային տիպի հանքավայրերում ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման հետ կապված իավահարաբերությունների կարգավորում, այդ թվում նաև՝ սահմանային շերտում սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի պաշարների արդյունահանման աշխատանքների իրականացումն GPS համակարգով կահավորված հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տրանսպորտային միջոցների և (կամ) սարքավորումների</p>		2024թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում	

			միջոցով կահավորված լինելու պայմանների:			
		108.4 «ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի N 1129-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում	Գետերի հունի արգելապատնեշների կառուցման նպատակով միանգամյա թույլտվության տրամադրման հետ կապված իրավահարաբերությունների կարգավորում:		2024 թ. փետրվարի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

**Ֆինանսների նախարարություն**

NN	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	5	6	7
1.	Բյուջետային ծրագրերի համապատասխանեցում առկա ռազմավարական փաստաթղթերով սահմանված քաղաքականությունների	1.1 Առկա բյուջետային ծրագրերի ուսումնասիրում  1.2 Գործող ռազմավարական փաստաթղթերին համապատասխանության գնահատում	Բոլոր բյուջետային ծրագրերն ուսումնասիրված են  Գնահատված է բոլոր ուսումնասիրված բյուջետային ծրագրերի համապատասխանությունը ռազմավարական փաստաթղթերին	-  -	2021թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ  2022թվական, մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

		1.3 Բյուջետային ծրագրերի բովանդակության և կառուցվածքների վերանայում՝ ըստ անհրաժեշտության	Բյուջետային ծրագրերը համապատասխանում են առկա ռազմավարական փաստաթղթերին	-	2022թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	
2.	Բյուջետային ծրագրերի գնահատման գործընթացի ներդրում	2.1 ՀՀ բյուջետային գործընթացում բյուջետային ծրագրերի գնահատման գործառույթի ներդրման նպատակով ուսումնասիրության իրականացում և հայեցակարգի մշակում	Բյուջետային ծրագրերի գնահատման հայեցակարգի նախնական տարբերակը առկա է	-	2021թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
		2.2 Հայեցակարգի հիման վրա բյուջետային ծրագրերի գնահատման ուղեցույցների մշակում	Բյուջետային ծրագրերի գնահատման ուղեցույցները մշակված են	-	2022թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	
		2.3 Բյուջետային ծրագրերի պիլոտային գնահատումների իրականացում	Գնահատված են առնվազն երեք բյուջետային ծրագրեր (սոցիալական, տնտեսական հատված, կրթություն կամ առողջապահություն)	-	2022 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	
		2.4 Գնահատման մեթոդաբանության նախագծի վերանայում և ճշգրտումներ, ծրագրերի բացահայտված առանձնահատկությունների ինտեգրում	Գնահատման մեթոդաբանության և ներդրման կարգի լրամշակված (վերջնական) տարբերակները առկա են	-	2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
		2.5 Գնահատման համակարգի ներդրում	Գնահատման ընթացակարգերը առկա են:	-	2023 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	
		2.6 Մոնիթորինգի համակարգի ներդրում	Բյուջետային ծրագրերի մոնիթորինգի պատասխանատու ստորաբաժանումը համալրված է,		2023թ. Դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	

			մասնագետները վերապատրաստված են և ունեն համապատասխան կարողություններ:			
		2.7 ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ուղղակի հսկողության (ստուգման) գործառույթի՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը փոխանցման վերաբերյալ օրենսդրական փաթեթի մշակում և ՀՀ կառավարության հավանությանը ներկայացում	ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ուղղակի հսկողության գործառույթի փոխանցման համար անհրաժեշտ օրենսդրական փաթեթը մշակված է և արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը	ՀՀ պետական վերահսկողական ծառայություն	2023 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	
3	Մասնակցային բյուջետավորման գործընթացի ներդրում	3.1 ՀՀ բյուջետային գործընթացում մասնակցային բյուջետավորման ներդրման նպատակով տարբեր երկրների փորձի ուսումնասիրություն և առաջարկությունների փաթեթի մշակում	Մասնակցային բյուջետավորման ներդրման նպատակով տարբեր երկրների փորձը ուսումնասիրված է և առաջարկությունների փաթեթը մշակված է		2023թ. փետրվարի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		3.2 ՀՀ բյուջետային գործընթացում մասնակցային բյուջետավորման ներդրման նպատակով տարբեր երկրների փորձի ուսումնասիրության արդյունքում մշակված առաջարկությունների փաթեթի հիման վրա գործողությունների ժամանակացույցի մշակում և	ՀՀ բյուջետային գործընթացում մասնակցային բյուջետավորման ներդրման նպատակով տարբեր երկրների փորձի ուսումնասիրության արդյունքում մշակված առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակված գործողությունների ժամանակացույցը առկա է և ՀՀ վարչապետի որոշումը հաստատված է		2023թ. մարտի 2-րդ տասնօրյակ	

		ներկայացում ՀՀ վարչապետի հաստատմանը				
4	ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումների լրամշակում, գործընթացների պարզեցում, դյուրացում	4. 1. ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումների բացերի և թերությունների բացահայտման նպատակով հարցաթերթի մշակում և ՀՀ պետական կառավարման մարմիններին տրամադրում	ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումների վերաբերյալ ՀՀ պետական կառավարման մարմինների դիրքորոշումը առկա է		2023թ. հունվարի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		4. 2. ՀՀ պետական կառավարման մարմիններից և գործընկեր միջազգային կազմակերպություններից ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումների վերաբերյալ ստացված առաջարկությունների և դիտողությունների վերհանում, ամփոփում և դրանց հիման վրա առաջարկությունների փաթեթի մշակում	ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումների լրամշակման ուղղությամբ առաջարկություններն առկա են		2023թ. հունվարի 1-ին տասնօրյակ	
		4. 3. Առաջարկությունների փաթեթի հիման վրա ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումների լրամշակում, գործընթացների պարզեցում, դյուրացում	ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումները լրամշակված, գործընթացները պարզեցված և դյուրացված են		2023թ. հունվարի 2-րդ տասնօրյակ	

5	<p>Օտարերկրյա պետություններ գործուղումների ընթացակարգերի պարզեցում, փաստաթղթաշրջանառության ծավալների օպտիմալացում, արտասահմանյան գործուղումների մասին որոշումների ընդունման լիազորությունների հստակեցում</p>	<p>5.1. ՀՀ վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակում և ՀՀ վարչապետի հաստատման ներկայացում</p>	<p>ՀՀ վարչապետի որոշման մեջ փոփոխությունները և լրացումները հաստատված են, արտասահմանյան գործուղումների կարգը պարզեցված է, միջոցները նախատեսված են համապատասխան մարմինների պահպանման ծախսերում</p>		<p>2023թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
		<p>5.2. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում</p>	<p>ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխությունները և լրացումները հաստատված են, արտասահմանյան գործուղումների կարգի փոփոխությամբ պայմանավորված հստակեցված է գործուղման ծախսերի հատուցման նպատակով ֆինանսավորման ընթացակարգը</p>			
6	<p>ՀՀ բյուջետային օրենսդրության բարեփոխում</p>	<p>6.1. Բյուջետային համակարգերի մասին տարբեր երկրների օրենսդրության ուսումնասիրություն</p>	<p>Բյուջետային համակարգերի մասին տարբեր երկրների օրենսդրություններն ուսումնասիրված են</p>		<p>2023թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
		<p>6.2 Բյուջետային համակարգերի մասին տարբեր երկրների օրենսդրության ուսումնասիրության արդյունքների հիման վրա ՀՀ բյուջետային օրենսդրության առկա լուծումներ պահանջող խնդիրների վերհանում, առաջարկությունների փաթեթի մշակում և</p>	<p>Տարբեր երկրների բյուջետային համակարգերի ուսումնասիրության հիման վրա ՀՀ բյուջետային օրենսդրության բացերը վեր հանված են և համապատասխան առաջարկությունների փաթեթը մշակված է և արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը</p>		<p>2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	

		ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը				
7	Գնումների համակարգի զարգացման առաջնահերթ ուղղությունների և միջոցառումների ծրագրի սահմանում	7.1 Գնումների համակարգի զարգացման հայեցակարգի և միջոցառումների ծրագրի մշակում, կառավարության հաստատմանը ներկայացում և իրականացում	Վեր են հանվել գնումների համակարգի խնդիրները, մշակվել է դրանց լուծմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների ծրագիրը, որը ներառում է առնվազն հետևյալ ուղղությունները՝ <ol style="list-style-type: none"> <li>1. Կարողությունների զարգացում</li> <li>2. ՀՀ ֆինանսների նախարարության դերի համապատասխանեցում առկա պահանջներին</li> <li>3. Թվայնացում</li> <li>4. Ստանդարտացում և կանաչ գնումներ</li> </ol> Համակարգի շարունակական թիրախային բարելավումներ		2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
8	Էլեկտրոնային գնումների նոր համակարգի ներդրում	8.1 Մշակել արդի պահանջներին համապատասխանող էլեկտրոնային գնումների նոր համակարգ՝ դրա տիրույթում ներառելով բոլոր պատվիրատուներին:	«Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված բոլոր պատվիրատուները գնման ընթացակարգերն իրականացնում են էլեկտրոնային համակարգի միջոցով, ստեղծելով նաև ապահովել ողջ տվյալների ավտոմատ հավաքագրման, գեներացման և վերլուծության հնարավորություն: Նոր համակարգը կինտեգրվի գնման ընթացակարգերի կազմակերպման և		2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե կամ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված ֆինանսական միջոցներ



			պայմանագրերի ֆինանսավորման հետ ուղղակիորեն փոխկապակցված այլ համակարգերի հետ			
9	Պայմանագրի արդյունքի դիմաց վճարումների կատարման ժամկետների նվազեցում	9.1 Պատվիրատուի կողմից պայմանագրի արդյունքի դիմաց վճարումը առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում ապահովելու նպատակով կառավարության որոշման նախագծի մշակում և հաստատման ներկայացում	Գնումների հետ կապված կարգավորումներում փոփոխություններ կատարելու միջոցով կնվազեցվեն պայմանագրի արդյունքի դիմաց վճարումների կատարման ժամկետները՝ դրանք փաստաթղթերը ներկայացնելուց մինչև վճարման ժամկետը ներառյալ ընկած հատվածի համար սահմանելով առավելագույնը 5 աշխատանքային օր, հաշվի առնելով բյուջետային ծախսերի կատարման եռամսյակային համամասնությունները		2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	ֆինանսավորում չի պահանջվում:
10	Գնումների գործընթացում ներգրավված և որոշումներ կայացնող անձանց կարողությունների շարունակական զարգացում	10.1 Գնումների պլանավորման, տեխնիկական առաջադրանքների մշակման, ընթացակարգերի կազմակերպման, պայմանագրերի կառավարման և բողոքների քննման գործընթացում ներգրավված անձանց կարողությունների շարունակական զարգացման նպատակով կարիքների գնահատում,	Գնումների գործընթացում ներգրավված և որոշումներ կայացնող անձինք ունեն բավարար գիտելիքներ որոշումներ կայացնելու համար	Պետական կառավարման համակարգի մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, դոնոր կազմակերպություն- ներ	2023թ. մայիսի 1-ին տասնօրյակից- 2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ֆինանսավորում չի պահանջվում:

		վերապատրաստման ծրագրերի հաստատում և իրականացում				
11	Գնման գործընթացների վերաբերյալ մեթոդական աջակցության տրամադրման գործիքակազմի բարելավում	11.1 Գնման գործընթացների վերաբերյալ պատվիրատուներից և մասնակիցներից հաճախակի ստացվող հարցադրումների և դրանց վերաբերյալ լիազորված մարմնի կողմից տրամադրվող պարզաբանումների հրապարակում	Հաճախակի ստացվող հարցադրումների վերաբերյալ լիազորված մարմնի կողմից տրամադրված պարզաբանումների առցանց հասանելիության ապահովում՝ դրանք գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակելու միջոցով		2023թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
12	Պետական կառավարման մարմիններին գնման գործընթացների մեթոդական աջակցության շրջանակում խորհրդատվության տրամադրում	12.1. Պետական կառավարման համակարգի մարմիններին խորհրդատվության տրամադրում՝ ռազմավարական նշանակություն ունեցող գնման ընթացակարգերի կազմակերպման դեպքում	Մարմինների ղեկավարների տեղակալների համար տեղեկատվության հասանելիության բարձրացման արդյունքում որոշումների կայացման արագության բարձրացում՝ գնումների գործընթացի առավել բարձր կառավարելիություն	Պետական կառավարման համակարգի մարմիններ	2023թ. փետրվարի 1-ին տասնօրյակից 2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
13	Գնման պայմանագրերի ոչ պատշաճ կատարման ռիսկերի նվազեցում	13.1. Գնման պայմանագրերի ոչ պատշաճ կատարման ռիսկերը նվազեցնելու նպատակով կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում	Գնման պայմանագրերի ոչ պատշաճ կատարման դեպքերի ուսումնասիրության արդյունքներով ոչ հայեցողական չափորոշիչների վրա հիմնված մասնակիցների վարկանիշավորման և ծանրաբեռնվածությունը բացառող համակարգի ներդրված է ՀՀ կառավարության որոշումը հաստատված է	Պետական կառավարման համակարգի մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ	2023թ. հուլիսի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

14	Ներքին աուդիտի համակարգի ինստիտուցիոնալ վերափոխման տեսլականի և ճանապարհային քարտեզի սահմանում	14.1 Ներքին աուդիտի համակարգի վերափոխման հայեցակարգի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության հաստատմանը	Ներքին աուդիտի տեսլականի սահմանում՝ հիմնված կենտրոնացված և ապակենտրոնացված, արտապատվիրակման և ներքին կարողությունների զարգացման համակարգային այլընտրանքների միջև ընտրության վրա: Ճանապարհային քարտեզի հիման վրա գործուն ներքին աուդիտի համակարգի կայացմանն ուղղված ինստիտուցիոնալ վերափոխման միջոցառումների իրականացում:		2022-թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
15	Ցածր արդյունավետություն ունեցող և հասցեականություն չունեցող հարկային արտոնությունների կրճատում:	15.1 Ցածր արդյունավետություն ունեցող և (կամ) հասցեականություն չունեցող ոլորտային հարկային արտոնությունների վերացման ուղղությամբ հարկային օրենսդրության մեջ կատարվելիք փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների մշակում	Բավարար հասցեականություն և արդյունավետություն չունեցող հարկային արտոնությունները կրճատված են:	Ոլորտային քաղաքականություն մշակող և իրականացնող նախարարություններ  Պետական եկամուտների կոմիտե	2022թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
15.2 ներկայացված առաջարկությունների քննարկում շահագրգիռ պետական կառավարման մարմինների և մասնագիտական-						

		<p>հասարակական կազմակերպությունների հետ,</p> <p>15.3 քննարկումների արդյունքների հիման վրա ՀՀ հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում</p>				
16	<p>Հարկման տարբեր համակարգերի միջև համադրելի և արդարացի հարկային բեռի սահմանում:</p>	<p>16.1 Հարկման տարբեր համակարգերի միջև համադրելի և արդարացի հարկային բեռի սահմանման ուղղությամբ հարկային օրենսդրության մեջ կատարվելիք փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների մշակում,</p> <p>16.2 ներկայացված առաջարկությունների քննարկում շահագրգիռ պետական կառավարման մարմինների և մասնագիտական-հասարակական կազմակերպությունների հետ</p> <p>16.3 քննարկումների արդյունքների հիման վրա ՀՀ հարկային օրենսգրքում համապատասխան</p>	<p>1) Հարկման համակարգում հարկային բեռի արդարացի և հավասար բաշխումն ապահովված է,</p> <p>2) ստորին մակարդակում գտնվող հարկման համակարգերում արհեստականորեն տեղավորվելու և այդ կերպ հարկերի վճարումից խուսափելու, հարկման տարբեր համակարգերի միջև արհեստական գործարքների իրականացմամբ հարկային պլանավորման և գործարքների փաստաթղթավորման շղթայի ամբողջականության խաթարման ռիսկերը նվազեցված են:</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Պետական եկամուտների կոմիտե</p>	<p>2022թ. մայիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում:</p>

		փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում				
17	ԱԱՀ վճարողների կողմից ապրանքների ներմուծման գործարքների մասով ԱԱՀ-ի չեղարկում	<p>17.1 ԱԱՀ վճարողների կողմից ապրանքների ներմուծման գործարքների մասով ԱԱՀ-ի աստիճանական չեղարկման նպատակով օրենսդրական առաջարկությունների ներկայացում</p> <p>17.2 ներկայացված առաջարկությունների քննարկում շահագրգիռ պետական կառավարման մարմինների և մասնագիտական-հասարակական կազմակերպությունների հետ</p> <p>17.3 քննարկումների արդյունքների հիման վրա ՀՀ հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում</p>	ԱԱՀ վճարողների համար հավելյալ ռեսուրսների ձևավորման միջոցով բարենպաստ ձեռնարկատիրական միջավայրը ձևավորված է:	Էկոնոմիկայի նախարարություն  Պետական եկամուտների կոմիտե	2022թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
18	Կապիտալի շուկայի զարգացման նպատակով հարկման	18.1 Շահաբաժինների և տոկոսային եկամուտների համար եկամտային հարկի և	Կապիտալի շուկայի զարգացմանը խոչընդոտող	Էկոնոմիկայի նախարարություն	2022թ. սեպտեմբերի	Ֆինանսավորում չի պահանջվում:

	կարգավորումների վերանայում	շահութահարկի հարկման հանրագումարային բեռի առնչությամբ երկարաժամկետ քաղաքականության որոշման նպատակով օրենսդրական առաջարկությունների ներկայացում	հարկային կարգավորումները վերանայված են:	Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	3-րդ տասնօրյակ	
		18.2 ներկայացված առաջարկությունների քննարկում շահագրգիռ պետական կառավարման մարմինների և մասնագիտական-հասարակական կազմակերպությունների հետ				
		18.3 քննարկումների արդյունքների հիման վրա ՀՀ հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում				
19	Տնտեսական շարժառիթների հիման վրա գործող՝ եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրում	19.1 Ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգի ներդրման ուղղությամբ հարկային օրենսդրության մեջ կատարվելիք փոփոխությունների վերաբերյալ	Եկամուտների հայտարարագրման համակարգի կիրառության միջոցով «սոցիալական կրեդիտների» համակարգի ներդրման համար անհրաժեշտ օրենսդրական լուծումները տրված են:	Պետական եկամուտների կոմիտե	2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

		<p>առաջարկությունների մշակում</p> <p>19.2 ներկայացված առաջարկությունների քննարկում շահագրգիռ պետական կառավարման մարմինների և մասնագիտական-հասարակական կազմակերպությունների հետ</p> <p>19.3 քննարկումների արդյունքների հիման վրա ՀՀ հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում</p>				
20	Ակցիզային հարկի դրույքաչափերի վերանայում	<p>20.1 Ակցիզային հարկի դրույքաչափերի վերանայման ուղղությամբ հարկային օրենսդրության մեջ կատարվելիք փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների մշակում</p> <p>20.2 ներկայացված առաջարկությունների քննարկում շահագրգիռ պետական կառավարման</p>	<p>Օրենքի նախագծին հավանություն տալու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումը հաստատված է:</p> <p>Ակցիզային հարկի դրույքաչափերը վերանայված են:</p>	Պետական եկամուտների կոմիտե	2023թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		<p>մարմինների և մասնագիտական-հասարակական կազմակերպությունների հետ</p> <p>20.3 քննարկումների արդյունքների հիման վրա ՀՀ հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում</p>				
21	Շրջանառության հարկի և միկրոձեռնարկատիրության համակարգերի շարունակական կատարելագործում	<p>21.1 Շրջանառության հարկի գծով հարկային բեռի վերանայման, ինչպես նաև միկրոձեռնարկատիրության համակարգի գործունեության որոշ տեսակների դուրս բերման ուղղությամբ ուսումնասիրությունների իրականացում, իրականացված ուսումնասիրության արդյունքների քննարկում շահագրգիռ պետական կառավարման մարմինների և մասնագիտական-հասարակական կազմակերպությունների հետ, քննարկումների արդյունքների վերաբերյալ</p>	<p>ՀՀ հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագիծը արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը, որով՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1) Հարկման համակարգում հարկային բեռի արդարացի և հավասար բաշխումն ապահովված է,</li> <li>2) ստորին մակարդակում գտնվող հարկման համակարգերում արհեստականորեն տեղավորվելու և այդ կերպ հարկերի վճարումից խուսափելու, հարկման տարբեր համակարգերի միջև արհեստական գործարքների</li> </ol>	<p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Պետական եկամուտների կոմիտե</p>	<p>2023թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում:</p>



		<p>զեկույցի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</p> <p>իրականացմամբ հարկային պլանավորման և գործարքների փաստաթղթավորման շղթայի ամբողջականության խաթարման ռիսկերը նվազեցված են:</p>				
		<p>21.2 քննարկումների արդյունքների հիման վրա, ըստ անհրաժեշտության, ՀՀ հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում:</p>				
22	Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի	22.1 Կրկնակի հարկումը բացառող ՀՀ մոդելային համաձայնագրի նոր տարբերակի մշակում և	1) Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրությունն ընդլայնված է,	Արտաքին գործերի նախարարություն	2025թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

	աշխարհագրության ընդլայնում:	քննարկում շահագրգիռ գերատեսչությունների հետ, 22.2 կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրությունը ընդլայնելու նպատակով գործընկեր պետությունների հետ բանակցությունների վարում:	գործող համաձայնագրերը համապատասխանեցված են կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերին վերաբերող միջազգայնորեն ընդունված արդի ստանդարտներին և մոտեցումներին:	Պետական եկամուտների կոմիտե		
23	Հարկային եկամուտների կառավարման ծրագրի մշակում	23.1 «Հարկային եկամուտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և քննարկում շահագրգիռ պետական կառավարման մարմինների և մասնագիտական- հասարակական կազմակերպությունների հետ 23.2 «Հարկային եկամուտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը	Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի աճն ապահովող միջոցառումները մշակված և հաստատված են:	Պետական եկամուտների կոմիտե	2022թ. ապրիլի 3-րդ տասնոր- յակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
24	Հարկային ծախսերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ	24.1 Հարկային ծախսերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ ուսումնասիրությունների իրականացում,	Հարկեր/ՀՆԱ ցուցանիշի աճն ապահովող միջոցառումները մշակված և հաստատված են:	Ոլորտային քաղաքականություն մշակող և իրականացնող	2023թ. մայիսի 2-րդ տասնորյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

	<p>ուսումնասիրությունների իրականացում:</p>	<p>24.2 Հարկային ծախսերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ զեկույցի ներկայացում Վարչապետի աշխատակազմ,</p>		<p>Նախարարություններ</p> <p>Պետական եկամուտների կոմիտե</p>		
		<p>24.3 Ձեկույցի քննարկում Վարչապետի աշխատակազմում և, ըստ անհրաժեշտության, համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը</p>	<p>Ձեկույցը քննարկված է և, ըստ անհրաժեշտության, իրավական ակտի նախագիծը ներկայացված է և արժանացած է ՀՀ կառավարության հավանությանը:</p>		<p>2023թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	
<p>25</p>	<p>Հայաստանի Հանրապետության՝ որպես մեկ միասնական միավորի, համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում</p>	<p>25.1 Համախմբման իրականացման նպատակով միասնական համակարգչային ծրագրի մշակում կամ ձեռքբերում</p>	<p>Համախմբման համար անհրաժեշտ համակարգչային ծրագիրն առկա է</p>		<p>2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (GFMS/ԿՖԿՏՀ) ներդրման դրամաշնորհ, չափը՝ ըստ մրցույթի արդյունքների</p>
		<p>25.2 Նախարարությունների մակարդակով միջանկյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում</p>	<p>Նախարարությունների մակարդակով ներկայացվում են միջանկյալ համախմբված ֆինանսական հաշվետվություններ</p>		<p>2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	
		<p>25.3 Հայաստանի Հանրապետության համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում</p>	<p>Պետության մակարդակով ներկայացվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններ</p>		<p>2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	

26	Կառավարման տարբեր մակարդակներում պետական ֆինանսների կառավարման հետ կապված գործընթացների ավտոմատացում և գործարքների արդյունավետության ու թափանցիկության ապահովում (Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (GFMS/ԿՖԿՏՀ) ներդրում)	26.1 «Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ)» ներդրման ծրագրի շրջանակներում մրցութային փաստաթղթերի մշակում, անհրաժեշտության դեպքում վերանայում, վերջնականացում	ԿՖԿՏՀ-ի ներդրման շրջանակներում իրականացվելիք գնումների համար անհրաժեշտ, մրցութային փաստաթղթերը՝ ներառյալ տեխնիկական առաջադրանքները մշակված են, վերանայված և վերջնականացված		2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (GFMS/ԿՖԿՏՀ) ներդրման դրամաշնորհ, չափը՝ ըստ մրցութի արդյունքների
		26.2 ԿՖԿՏՀ-ի գնում	ԿՖԿՏՀ-ի մրցութի իրականացման փաստաթղթերի ամբողջական փաթեթը կազմված է, մրցութի մեկնարկը տրված է		2023թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	
		26.3 ԿՖԿՏՀ-ի ներդրում	Տեխնիկական առաջադրանքին համապատասխան ներդրված ԿՖԿՏՀ	Պետական իշխանության մարմիններ	2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
27	Պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեությունից բխող ֆիսկալ ռիսկերի կառավարման արդյունավետության բարելավում	27.1 Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համատեղ պետական մասնակցությամբ ընկերություններից բխող ֆիսկալ ռիսկերի կառավարման փաստաթղթի մշակում	Պետական մասնակցությամբ ընկերությունների հաշվետվողականության նկատմամբ պահանջների հստակեցում		2023 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	ֆինանսավորում չի պահանջվում:
		27.2 Պետական մասնակցությամբ ընկերությունների կենսունակության (դրանից բխող	Պետական մասնակցությամբ ընկերությունների հաշվետվողականության, թափանցիկության և վերջիններիս գործունեությունից		2023 թ. հուլիսի 1-ին տասնօրյակ	

		հաշվետվողականության) վերաբերյալ պահանջները ամփոփող կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում	բխող ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված ՀՀ կառավարության որոշումը հաստատված է			
28	Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) պայմանագրերից բխող ֆինանսական հոսքերի գնահատման արդյունավետության բարելավում	28.1 ՊՄԳ ձևաչափով իրականացվող համագործակցությունների թափանցիկության և ռիսկերի կառավարման բարելավման համատեքստում գործող և նոր դիտարկվող ՊՄԳ պայմանագրերի ուսումնասիրություն, պայմանական պարտավորությունների գնահատման ճշգրտում	ՊՄԳ ձևաչափով պայմանագրերից բխող պայմանական և ուղղակի պարտավորությունների գնահատման բարելավում՝ 4 պայմանագրի խորացված ուսումնասիրություն (օդանավակայան, երկաթուղի, Կոնտուր-Գլոբալ, Այգ-1)		2023 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
29	Ֆինանսական համակարգից առաջացող ֆինանսական հոսքերի գնահատման արդյունավետության բարելավում	29.1 Ֆինանսական համակարգի գործունեությունից բխող ֆինանսական հոսքերը բացահայտող զեկույցի (whitepaper) հրատարակում	Ֆինանսական հատվածից բխող ֆինանսական հոսքերի հնարավոր աղբյուրների բացահայտում, բյուջեի վրա հնարավոր ազդեցության ներկայացում և ֆինանսական համակարգի գործունեությունից բխող ռիսկերի զսպման համատեքստում կառավարության դերի հստակեցում		2023 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
		29.2 Կենսաթոշակային ֆոնդերի գործունեությունից բխող պայմանական պարտավորությունների գնահատման մոդելների մշակում	Կենսաթոշակային ֆոնդերի գործունեությունից բխող պայմանական պարտավորությունների գնահատում և բյուջետային փաստաթղթերում ինտեգրում		2023 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	

		29.3 Բանկային երաշխավորված ավանդներից բխող պայմանական պարտավորությունների գնահատման մոդելների մշակում, ՀՀ ԿԲ և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հետ համագործակցում	Բանկային համակարգի գործունեությունից բխող համակարգային և առանձնահատուկ ռիսկերի համատեքստում Կառավարության և այլ պետական գերատեսչությունների համագործակցության արդյունավետության բարելավում, ինչպես նաև պայմանական պարտավորությունների ներառում բյուջետային փաստաթղթերում		2023 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
30	Երկարաժամկետ ֆիսկալ կայունությանն առնչվող ռիսկերի գնահատման բարելավում	30.1 Երկարաժամկետ ֆիսկալ կայունությանն առնչվող ռիսկերը բացահայտող զեկույցի (whitepaper) հրապարակում	Երկարաժամկետ ֆիսկալ կայունության սահմանում, վերջինիս սպառնացող ռիսկերի հնարավոր աղբյուրների բացահայտում, բյուջեի և երկարաժամկետ կայուն տնտեսական աճի վրա հնարավոր ազդեցության ներկայացում		2023 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		30.2 Երկարաժամկետ ֆիսկալ պրոյեկցիաների մշակում	Երկարաժամկետ ֆիսկալ կայունության գնահատման իրականացում՝ վերջինիս արդյունքների վրա հիմնվելով մոդելի կամ մեթոդաբանության մշակում		2024 թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	
31	ՀՀ հարկային ներուժի գնահատում և հարկման միջնաժամկետ հնարավորությունների բացահայտում	31.1 Խոշոր հարկատեսակների (ԱԱՀ, Եկամտային հարկ, շահութահարկ) գծով հարկային ներուժի և ճեղքի	Խոշոր հարկատեսակների գծով (ԱԱՀ, շահութահարկ, Եկամտային հարկ) հարկային ներուժի և ճեղքի գնահատման	Պետական եկամուտների կոմիտե, Էկոնոմիկայի նախարարություն,	2023թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում

		(ներուժային մակարդակից հեռացվածության) գնահատման միասնական մեթոդաբանության հաստատում ՀՀ ֆինանսների նախարարի կողմից	միասնական մեթոդաբանությունը հաստատված է	Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		
		31.2 Խոշոր հարկատեսակների (ԱԱՀ, եկամտային հարկ, շահութահարկ) գծով հարկային ներուժի և ճեղքի (ներուժային մակարդակից հեռացվածության) գնահատումների իրականացում	Հարկային ներուժի և ճեղքի արժանահավատ գնահատականները առկա են		2023թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	
32	Կառավարության պարտքի օպտիմալ շեմերի, այդ թվում՝ ներքին պարտքի օպտիմալ մասնաբաժնի բացահայտում	32.1 Կառավարության պարտքի կայունության գնահատում	Հնարավոր շոկերի նկատմամբ կառավարության պարտքի զգայունության և պարտքի պորտֆելի խոցելիության գնահատականների առկայություն		2023թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում
